

Մարդու իրավունքները Իսլամում

Գոկտոր Աբդուլ-Ռահման Էլ- Շիհա

Այս հայերեն լեզվով թարգմանված
գիրք է , որում հեղինակը ցույց է
տալիս մարդու իրավունքները
Իսլամի կատարյալ օրենքների,
սկզբունքների հավասարակշռված
համակարգի լույսի ներքո: Այս
իրավունքները հիմնված են
Մուսուլմանների Աստվածային

Գրքի , Ղուրանի և Ալլահի
Մարգարեյի Սուլննայի վրա:
Նրանք երկուսն էլ հանդիսանում
են Իսլամական կյանքի և
օրենսդրության հիմնադրյուրները
:

<https://islamhouse.com/468803>

- [Մարդու իրավունքները
Իսլամում](#)
 - [Նախաբան](#)
 - [Իսլամն ու կյանքի հինգ
հիմնական կարիքների
հոգալը](#)

- [Հավասարությունը](#)
[Իսլամում](#)
- [Իսլամն ու կյանքի հինգ](#)
[հիմնական կարիքների](#)
[հոգումը](#)
- [Աստվածային կրոնի](#)
[պահպանումը](#)
- [Ինքնապահպանություն](#)
- [Մտքի Պահպանումը](#)
- [Պատվի, ընտանիքի և](#)
[ծագման պահպանումը](#)
- [Հարստության](#)
[պահպանումը](#)
- [Այլահի իրավունքները](#)
- [Մարգարե Մուհամմեդի](#)
[\(ի.Ա.ո.ն.\) իրավունքները](#)
- [Այլ մարգարեների և](#)
[առաքյալների](#)
[իրավունքները](#)

- Ծնողների իրավունքները
- Տղամարդու
իրավունքները կնոջ
վերաբերյալ
- Կնոջ իրավունքները
տղամարդու վերաբերյալ
- Երեխաների
իրավունքները
- Բարեկամների
իրավունքները
- Խոսք պետական
իրավունքների և
պարտականությունների
մասին
- Դատական համակարգը
Իսլամում
- Հիսրա
Պատասխանատվության
համակարգը Իսլամում

- [Մարդու իրավունքների հայամական դեկլարացիան\[4\]](#)
- [Իսլամում մարդկանց իրավունքների մասին սիսալ պատկերացումները](#)
- [Չորրորդ սիսալը](#)
- [Եզրակացություն](#)

Մարդու իրավունքները Իսլամում

Հեղինակ

Դոկտոր Աբդուլ-Ռահման Էլ-Շիհա

Թարգմանությունը

EUROPEAN ISLAMIC
RESEARCH CENTER (EIRC)

& Արմեն Նալբանդյան

Նախաբան

Ողջ փառքը Ալլահին, և թող
Ալլահը մեծարի Իր մարգարեի
մասին հիշատակը և պարզևի
նրա ընտանիքին, **հեռևորդներին
ամեն չարիքից և թող պահպանի
նրանց Հարության Օրը:**

Ամեն հասարակությունն պետք է
ապահովի իր քաղաքացիների
իրավունքները, որոնք
երաշխավորում են նրանց
հիմնական պահանջներն ու
պաշտպանությունը, **և տա
հնարավորություն զգալ իրենց
ընդգրկված մեծ սոցիալական
խմբերում: Մարդիկ պետք է**

իրենց անվտանգության մեջ
զգան և իրենց մասնակցությունը
դրանում, **որպեսզի բավարար
կերպով կատարեն իրենց
խնդիրներն ու
պարտականությունները:**

Այժմ մեր գլոբալ
հասարակությունում նկատելի են
երեք տարբեր ուղղություններ:
Առաջին ուղղությունը տալիս է
մարդկանց իրավունքներին
գերակայություններ
հասարակության իրավունքների
նկատմամբ: Այդ ուղղությունը
մարդուն տալիս է լիակատար
ազատություն իր
գործողություններում, **գրեթե
չսահմանափակելով դրանք:**

Դժբախտաբար դա ստեղծում
է Քառասյին սոցիալական
իրավիճակ, քանի որ, երբ
մարդուն տրվում է
անսահմանափակ ազատություն,
ապա գերակայում են
եսասիրական ցանկությունները,
որն էլ բերում է հակասական
արդյունքների: Ողջ
հասարակությունը տառապում է
ազահությունից ու
եսասիրությունից: Այդ
ուղղությունը նկարագրում է
լիբերալական,
ժողովրդավարական և
կապիտալիստական
հասարակություններին:

Երկրորդ ուղղությունը, ի տարբերություն առաջինին, պաշտպանում է հասարակության իրավունքները մարդու իրավունքների նկատմամբ: Մարդը զրկված է անձնական իրավունքներից: Հասանելի են միայն այն իրավունքները, որոնք ծառայում են կառավարող ռեժիմին, համաձայն կառավարող դասի կամ խմբի տիրող գաղափարախոսությունների: Այդ ուղղությունը տարածված է կոմունիստական և տոտալիտար հասարակություններում:

Երրորդ ուղղությունը, լիակատարությունում, չի տալիս որևէ նախապատվություն

մարդու իրավունքներին
հասարակության իրավունքների
հանդեպ կամ՝ հակառակը:

Յուրաքանչյուրին տրված են,
համակարգին համաձայն,
արժանի իրավունքներ:

Իրավունքներն ու
պարտականությունները
կարգավորվում և վերահսկվում
են խիստ կանոններով և
պայմաններով: Համաձայն այդ
ուղղությանը հասարակական
շահերը գերակայում են
անձնական շահերին միայն լուրջ
կոնֆլիկտների դեպքերում:

Այս գրքույկում մենք
կնկարագրենք մարդու
իրավունքները Իսլամական

իրավունքի իդեալական կերպով
հավասարակշռված համակարգի
ներքո: Այդ իրավունքը հիմնված է
մուսուլմանների Աստվածային
Գրքի հայտնությունների, սուրբ
Ղուրանի և սուննայի՝ Ալլահի
առաքյալի պրակտիկայի վրա՝
երկու հիմնական աղբյուրներից,
որոնք տալիս են պատասխաններ
կապված իսլամական կյանքին ու
իրավագիրությանը: Ե՛վ սուրբ
Ղուրանը, և՛ Սուննան
նպատակաուղղված են
իդեալական անձի և
հասարակության ստեղծմանը,
որոնք փոխազդում են միմյանց
հետ, որպեսզի ձեռք բերվի
մարդու և Ալլահի, այլ մարդկանց,
հասարակության ամբողջությամբ

և այլ հասարակությունների մեջ հարմոնիա:

Մենք հստակորեն հավատում ենք, որ երրորդ ուղղության և սոցիալական հիմունքների անձնական գործածումը, որը ղեկավարվում է Ալլահի կողմից լիակատար կերպով Ղուրանում և Սուննայում հայտնությամբ, առանց խոսքի, **մարդկությանը կանի երջանիկ և բարգավաճող:** Այդ հիմունքները գործածումը հասարակությանը թույլ կտա հասնել խաղաղության և անվտանգության:

Այդ սոցիալական իրավունքներն ու սկզբունքները չեն հանդիսանում սոցիալական

իդեոլոգիաների, ժամանակավոր
և անհետաձգելի կարիքների կամ
քաղաքական հետապնդումների
ու պատճառների նախկին փորձի
արդյունք, այլ գալիս են Աստծուց
և դրված են հանուն մարդու
վերելքի, **այս կյանքի
երջանկության և հաջորդ
կյանքում հոգու փրկության:**

Մեր ամուր հավատը դեպի
իսլամական իրավունքների
ճշմարտությունն ու
արդարությունը և հիմունքներին
գալիս է Ալլահի ներողամիտ,
**մարդու միակ արարիչը լինելու
մասին հայտնությունից:** Նա լավ է
ճանաչում, թե ինչ է հարկավոր
Նրա արարածին բոլոր

ժամանակներում, ինչն է
օգտական ու վնասակար մարդու
համար, ինչն է նրան
երջանկացնում կամ տխրեցնում,
**ինչն է նրան հաջողություն կամ
անհաջողություն բերում: Իր
գիտելիքներով և
բարեգործություններով Նա
օրենսդրությունով հիմնավորեց
այն, ինչ ավելի լավ է բավարարում
Նրա բոլոր արարածների
հիմնական կարիքները, և
հաջողություն, անվտանգություն
ու ուրախություն է պարգևում
նրանց:**

Մուրբ Ղուրանը, որը ուղարկված
էր Մուհամմեդին (**խ.Ա.ո.ն.**),
հանդիսանում է մշտական հրաշք

և պարունակում է ընդհանուր կանոնների հիմքերը: Սուլնան դա Ալլահի առաքյալի (խ.Ա.ո.ն.) պրակտիկան է, որը հանդիսանում է մուսուլմանական իրավունքի երկրորդ աղբյուրը և պարունակում է մանրամասն ուղղորդումներ: Այդ իրավունքներն ու հիմունքները շարադրված են եղել Ալլահի առաքյալի (խ.Ա.ո.ն.) կողմից մոտ տասնչորս դար առաջ, լավագույն տեսքով և դասավորվածությամբ, և մնում են անփոփոխ: Եվ սուրբ Ղուրանը, և Սուլնան հարգում են մարդուն և անձի իրավունքները հասարակությունում:

Մուսուլմանական իրավունքի այդ աղբյուրները հաշվի են առել

կարիքները, հասարակության
հրավուներն ու ընդհանուր
շահերը: Իրականում Ալլահը
Ղուրանում ասում է.

«Մենք գնահատեցինք Ադամի
որդիներին և թույլատրեցինք
շարժվել երկրով և ջրով,
բարիքներով օժտեցինք նրանց և
ակնհայտ առավելություն
տվեցինք մյուս արարածների
նկատմամբ»: (17:70)

Մարդը ձեռք է բերում այնդիսի
պատիվ և առավելություններ
միայն, երբ կատարում է իր
պարտականությունները և
հարգում է մյուսների
հրավուները:

Որպեսզի զբաղեցվի այդ հատուկ տեղը երկրի վրա, **որոշակի անձինք պետք է լուծեն որոշ խնդիրներ**: Այդ խնդիրների հավաքածուն գրված է սուրբ **Դուրանում**.

«Այդ **Նա է**, **ով դարձրել է ձեզ իր ժառանգները և վկաները երկրի վրա** : **Նա բարձրացրել է ձեզ աստիճաններում**, **որոշներին բարձր մյուսներից**, **որ Նա փորձի ձեզ պարզևներում**, **որը Նա տվել է** :
 Այդ այն պատճառով է, որ, **քո Աստվածը արագ է պատժում**:
Ճշմարիտ, Մինչ Նա ներողամիտ և գթասիրտ է»: (7:167)

Որոշ երկներ ու միջազգային կազմակերպություններ բարձրաձայն կոչ են անում հիմունքների, որոնք ձգտում են երաշխավորել մարդու իրավունքները: Իսլամը իր հայտնի Շարիաթի (օրենք և դատական պրակտիկա) սահմաններում դրեց մարդու այդ իրավունքներից շատերը, դեռ տասնչորս դար առաջ: Ժամանակակից կազմակերպությունների կողմից շարադրված իրավունքները լիովին կատարման համար անհնար են ,գործածման անարդարության պատճառով: Դրանք ենթակա են քաղաքական ծրագրերի, տնտեսական ճնշման

և կանխորոշված կարծիքների:
 Դրանք պարունակում են
 իմպերիալիզմի և գաղութացման
 մնացորդներ: Նման
 իրավունքները հաճախ տրվում են
 ոչ բոլորի շահերի համար, այլ
 ավելի շուտ, որոշ
 կազմակերպությունների և
 հզորների համար, **որոնք ունեն
 հատուկ շահեր:** Դա ավելի
 ակնհայտ է դառնում, երբ
 տեսնում ենք, **թե ինչպես շատ
 մարդիկ դառնում են սարսափելի
 գազանությունների զոհեր և չկա
 ոչ մի կազմակերպություն որը
 իսկապես պաշտպանի
 աղքատներին ու թույլերին:** Գոչող
 անհավասարությունն ու
 ազգերի միջև ու երկրների

ներքին չարաշահումները
շատանում են և ավելի են
մեծացնում
անհավասարությունները, **ասես**
դրա համար էլ նախատեսված
լինեն:

Շատ հնարավոր է, **որ որոշ**
մարդասիրական
կազմակերպություններ չեն
կարողանում օգնության հասնել
որոշ ճնշված անձանց ելնելով
քաղաքական և տնտեսական
պատճառներից: Որոշ
կազմակերպություններ, որոնք
անկեղծությամբ փորձում էին
օգնել, հեռացվեցին նման
միջոցառումներից, այնժամ, երբ
մյուսների համար թուլյատրված

էր, քանի որ
վերջիններս համագործակցում
էին որոշ հզորների ծրագրերի
կայացման մեջ: Որոշ
կազմակերպություններ
տարածում են «այլ երկրների
ներքին գործերին չխառնվել» կամ
«մենք պետք է մնանք
քաղաքական իրականության
սահմաններում» և այլ
կարգախոսները: Իսլամը կոչ է
անում աշխարհի ազգերի
պաշտպանությանն ու
օգնությանը ճնշման և
շահագործմանը վերջ տալու
ճանապարհով: Իսլամական
օրենքը կառուցված է այնպես, որ
կանխվի ամեն տեսակի ճնշում ու
շահագործում համաձայն

կանոնների, որոնք պարտադրում են իրավունքները հարգելը, անհավատությունը արգելելը, **և պայքար Ալլահի ճանապարհին:**

Ալլահը Ղուրանում հաստատում է.

«Եվ ինչու՞ չպայքարեք Ալլահի ճանապարհին, հանուն թույլ տղամարդկանց, կանանց և երեխաների, որոնք ասում են.

«Աստված մեր, դուրս հանիր մեզ այս քաղաքից, **որի բնակիչները անօրեններ են:** Մեզ քեզանից պահապան նշանակիր և մեզ համար քեզանից օգնական նշանակիր»»: (4:75)

Կարևոր է նշել, որ այն օրենքների պահպանումը, որոնք վերաբերվում են մարդու իրավունքներին հասարակութունում, **անկասկած կապված է իսլամական օրենքների և հիմունքների գործածման հետ**: Որոշ մարդիկ հետևում են միայն այն օրենքներին, **որոնք համապատասխանում են նրանց սեփական շահերին**: Մյուսները կարող են ձևացնել, թե կատարում են որոշ իսլամական դասեր կամ հիմունքներ, սակայն իրականում ձգտում են վերացնել կամ այլայլել ու շահարկել Իսլամը մեջից, **և միայն խանգարում են իսլամական օրենքների**

հրականացմանը: Այդ մարդիկ
Իսլամում չեն հանդիսանում
մարդու իրավունքների
պահպանման օրինակ: Այսպիսով
մենք այստեղ
պարտականություններ ենք
նշանակում Իսլամը
օբյեկտիվորեն
ուսումնասիրողներին՝ դուք պետք
է անեք դա ուսումնասիրելով
հիմնայնությամբ, ինչպես լիովին
կատարված համակարգ, այլ ոչ թե
կախված լինել որոշ մարդկանց
անօրինական
գործողություններից, որոնք
պնդում են, **թե իրենք**
մուսուլմաններ են: Որոշ անձանց,
խմբերի կամ
կառավարությունների վայրի

վարքն ու արարքները չպետք է
ազդեն մարդու վերջնական
դատողության վրա: Իսլամական
հիմունքների ու իրավունքի
իրականացումը վավերացվում է
կախված լինելով Իսլամին
պատկանելուց և դրանք տվյալ
պայմաններում կատարելու
կատարողական կարողությունից:
Նույնիսկ եթե համակարգը լավն է,
միևնույնն է գոյություն ունեն
բացթողումներ ու սխալներ
ընկալման և գործածման մեջ:
Եթե մենք օրինակի համար սուտ,
խաբերայություն, պայմանագրի
խախտում, խաբեություն և
կոռուպցիա ենք նկատում, ապա
չպետք է մեղադրենք համակարգը:
Քանի որ Իսլամը իստորեն

պատժում է այդ չարիքը, պետք է մեղադրել մարդուն, նրա հանցագործությունների համար, **այլ ոչ թե համակարգը**: Մենք պետք է մանրամասնորեն ուսումնասիրենք համակարգը և հաշվի առնենք բոլոր ասպեկտներով: Դասական օրինակ կարող է ծառայել հետևյալը. եթե մարդը հացի կարիք ունի, **նա կգնա խանութ կամ ծայրահեղ դեպքում հացի որևէ վաճառքի կետ**: Եթե մարդը հացի կարիք ունի, սակայն գնում է մսավաճառի կամ մրգավաճառի մոտ, **սպա նա այնտեղ չի կարող հաց գտնել**: Սուրբ Ղուրանում կա հաստատում, **որը բացատրում է**

այդպիսի դեպքը: Ալլահը
Ղուրանում ասում է.

«Եթե դու վստահես երկրի վրա
գտնվողների մեծամասնությանը,
նրանք քեզ Ալլահի ճանապարհից
կշեղեն: Նրանք ընդամենը
հետևում են
նախադրություններին ու
ընդամենը հորինում են»: (6:116)

Դժբախտաբար, մենք տեսնում
ենք, որ աշխարհում շատերը
Իսլամի իրական
ներկայացուցիչներ չեն, քանի որ
նրանք մեծ սխալներ են գործում,
և շատ անկատարություններ կան
նրանց հավատքում ու
գործերում: Նշենք այդ տիան

դրութիւնը, որպէսզի
զգուշացնենք Իսլամ
ուսուլմնասիրողներին, որ նրանք
նրանք խաբնված չլինեն Իսլամը
աղավաղողների վերաբերմունքից
ու արարքներից: Ձգտող
աշակերտները չպետք է
հուսահատվեն, այլ պետք է
ուղղվեն դեպի ողջախոհ
մուսուլմանները և Իսլամի
հիմնական դասը: Մենք կոչ ենք
անում պահպանել հավատքի
լավագույն պրակտիկաներն ու
ճիշտ գործածումը կյանքի
բոլոր պարագաներում :Մենք ոչ
մուսուլմաններին կոչ ենք անում
ուսուլմնասիրել Իսլամը և դրա
հիմունքների
առանց նախահամոզումների

Կա հայտնի պատմություն Իսլամ նոր ընդունածի մասին, որը իսլամական երկիր այցելելուց հետո ցնցված էր, լինելով մուսուլմանների անմխիթար վիճակում գտնվելու վկա այդ հասարակություններով, նկատելով թե նրանք ինչքան հեռու էին Իսլամի հիմունքներից ու կատարյալ ուսուցումից: Նա ասաց. «Ես շնորհակալ եմ Ալլահից, որ Նա ինձ թույլ տվեց ընդունել Իսլամը մինչ այս երկիր այցելելս: Եթե ես սկզբից հայտնվեի այստեղ, ապա երբեք չէի մտածի մուսուլման դառնալու մասին»: Նա արտահայտեց դա, քանի որ սեփական աչքերով տեսավ որոշ մուսուլմանների

տարածված հանցավոր
գործողությունները: Դա
իսկապես շատ տխուր դրություն
է, որը մենք ձգտում ենք ուղղել:

Տեղեկատվությունն ու ուսուցումը
հանդիսանում են շտկման
առաջին քայլերը:

Իսլամն ու կյանքի հինգ հիմնական կարիքների հոգալը

Իսլամը որպես Ալլահի վերջին և
կատարյալ ուղերձ ուղարկված
մարդկությանը, ուղղված է իր
իրավական ունեցվածքի
հիմունքների և
էթիկայի օգնությամբ ստեղծել
մարդկանց և
հասարակությունների

իրավունքների պաշտպանության
մթնոլորտ: Այդ նպատակին
հասնելու միջոցներից մեկն է
հիմնական կարիքները հոգալու
ապահովումը առանց որևէ վնաս
հասցնելով հասարակությանը:
Եթե հասարակության բոլոր
անդամները օգտվում են
խաղաղություն, հանգիստ,
ազատություն և հիմնական
կարիքները հոգալու իրավունքից,
ապա կարող են ապրել
համերաշխ և հանույք ստանալ
դրանից:

Կյանքի այդ հանույքի մասին է
խոսում Ալլահի առաքյալը
(**խ.Ա.ո.ն.**).

«Յուրաքանչյուրը, երբ արթնանում է, զգալով, որ անվտանգության մեջ է գտնվում իր համայնքում, որ ազատ է անհանգստություններից ու հիվանդություններից իր մարմնում և մի օրվա համար քավարար սնունդ ունի, իրեն աշխարհի տեր է զգում»:[\[1\]](#)

Իսլամը իրավունքների և պարտավորությունների հատուկ համակարգ է որոշել, ապահովում և պահպանում է մարդու գոյության հետևյալ հինգ կարիքները.

1. Աստվածային կրոնի պահպանումը

2. Սեփական հոգու պահպանումը
3. Մտքի պահպանումը
4. Արմատների և ընտանիքի պատվի պահպանումը
5. Հարստության պահպանումը

Բոլոր մարդկային հասարակությունները զարգացրել են սեփական համակարգերը, որ ներկայացնելու մարդու այս հիմնական կարիքները, **և մենք կնշենք Իսլամական համակարգի յուրահատուկ ասպեկտները: Մինչ մանրամասորեն քննարկենք այդ**

հիմնական կարիքները,
կուսումնասիրենք
«**հավասարությունը**» հասկացուլթ
յան սիսալ ընկալումը :

Հավասարությունը Իսլամում

Տղամարդիկ և կանայք հավասար
են ստեղծված և ունեն ընդհանուր
աղբյուր՝ Ալլահի արարածի
արժանիք և գերազանցություն այլ
արարածների նկատմամբ:
Ռասայական, սեռային, մաշկի
գույնի, ծագման, դասի,
տարածաշրջանի կամ լեզվի
խտրականությունը իստորեն
արգելված է Իսլամում որպեսզի
վերացվեն արյան
տարբերությունների պատճառով

արհեստականորեն ստեղծվող
արգելքները մարդկանց միջև:
Հավասարություն չի նշանակում,
որ բոլորը միատեսակ են, քանի որ
չի կարելի արհամարհել բնական
տարբերությունները: Երկու
սեռերը լրացնում են մեկը մյուսին:
Ալլահն ասում է
Փառահեղ Դուրանում .

«Ով մարդի՛կ: Վախեցե՛ք ձեր
Աստծուց, որ ստեղծել է ձեզ մի
ոգուց և ստեղծել երկրորդին
առաջինի նման, իսկ նրանցից՝ այլ
տղամարդկանց և կանանց ու
բնակեցրել նրանց: Վախեցե՛ք
Ալլահից, որի անունով դուք
դիմում եք մեկդ մյուսիդ ու
պահպանում եք բարեկամական

Կապերը: Ճշմարիտ, Ալլահը
հետևում է ձեզ»: (4:1)

Ալլահի առաքյալն ասել է.

«Ով մարդիկ, ձեր Աստվածը մեկն

է: Ձեր հայրը նույնպես մեկն է:

Բոլորդ էլ Ադամի որդիներն եք, և

Ադամը հողից է ստեղծվել:

Ճշմարիտ, Ալլահի դիմաց

ամենաճշմարիտ և համակրելի

մարդը դա

ամենաաստվածավախն է:

Արաբները ոչ արաբներին չեն

գերազանցում: Ոչ արաբները չեն

գերազանցում արաբներին :

Կարմիր ռասսայի մարդը չի

գերազանցում սպիտակամորթին

և սպիտակամորթը չի

գերազանցում կարմրամորթին
բացի աստվածավախության
չափից»: (Ահմադ)

Ողջ մարդկությունը, բոլոր
ռասսաները, համաձայն Իսլամին,
ունեն մի ծագում: Այդ ժամանակ
ինչպե՞ս որոշ մարդիկ կարող են
ճնշել այլերին, **հատուկ**
արտոնություններ պահանջելով:
Իսլամը սուտ հպարտություն
թույլ չի տալիս, **ծագման կամ**
սոցիալական մակարդակի
համար: Ալլահի առաքյալն
(**ի.Ա.ռ.ն.**) ասել է.

«Ալլահի արմատահան է արել
սուտ հպարտությունը, որ կար
մինչիսլամական

Ժամանակաշրջանում, երբ մարդիկ սխալ թույլ տալով հպարտանում էին իրենց նախնիներով: Ողջ մարդկությունը առաջացել է Ադամից: Եվ Ադամը ստեղծված էր հողից»: (Աբու Դաուդ)

Ռասսայի և մակարդակի հետ կապված հպարտությունը տարածված է որոշ հասարակություններում: Օրինակ՝ որոշ հրեաներ ու քրիստոնյաներ իրենց համարում են այնպիսի մարդիկ, որոնք բարձր են ստատուսով, ծագմամբ, **ռասսայով ու մակարդակով**: Այլահը բացում է այդ սխալի

մասին ճշմարտությունը: Նա
Ղուրանում ասում է.

«Հրեաներն ու քրիստոնյաներն
ասացին. «Մենք Ալլահի որդիներն
ենք և Նրա սիրելիները»: Ասա.
«Ինչու՞ են Նա պատժում ձեզ ձեր
մեղքերի համար: Օ ոչ, դուք
ընդամենը մարդիկ եք, **որ Նա է
ստեղծել**: Նա ներում է ում
ցանկանում է և պատժում է ում
ցանկանում է: Ալլահին է
պատկանում իշխանությունը
երկինքների վրա, երկրի վրա և
նրանց մեջ ընկած տեղում, և Նրա
մոտ է լինելու վերադարձը»»:
(5:18)

Իսլամի օրենքները արմատահան են անուև ռասիզմի բոլոր հիմքերը: Օրինակ՝ Ալլահի առաքյալի (խ.Ա.ռ.ն.)

հետևորդներից մեկը՝ Աբու Չառը մի անգամ սև ստրուկին ասաց.

«Ով սև կնոջ որդի»: Ալլահի առաքյալը (խ.Ա.ռ.ն.) լսելով դա դիմեց Աբու Չառին, ասելով.

«Դուք վիրավորո՞ւմ եք այդ մարդուն, խոսելով նրա մոր

մասին: Ճշմարիտ, դուք գռեհիկություն (մինչիսլամական)

ժամանակաշրջանը նկարագրող մասեր ունեք: Այդ ժամանակն անցել է: Չկա առավելություն, որ ունի սպիտակամորթ զավակը սևամորթի նկատմամբ, բացի

բարեպաշտությունից կամ լավ
գործերից ու արարքներից»:
(Ահմադ)

Տեղեկացվում է, որ Աբու Չառը
լսելով մարգարեի (խ.Ա.ն.ն.)
նկատողությունը, փորձեց քավել
իր մեղքը, դնելով գլուխը գետնին
և ցանկանալով, որ ստրուկը գա
ու ոտքը դնի նրա գլխին, չնայելով,
որ մարգարեն (խ.Ա.ն.ն.) նրան
թույլ չեր տալիս անել դա: Աբու
Չառը ցանկանում էր կարգի բերել
իրեն ինքնավերացումով,
որպեսզի ապագայում երբեք
նման մեղք չգործի:

Իսլամում Ալլահին երկրպագելու
տարբեր գործողություններում

բոլոր մարդիկ լիովին հավասար են: Հարուստներն ու աղքատները, ղեկավարներն ու ենթակաները, սպիտակամորթներն ու սևամորթները, **մեծ և փոքր հնարավորություններ ունեցողները լիովին հավասար են Ալլահի դիմաց:** Գոհ մարդիկ դա ամենատղջախոհ և անկեղծ, **բարեգործություններում և երկրպագությունում հաստատուն մարդիկ են: Մարգարեն (խ.Ա.ն.ն.)** ասել է.

«Ալլահը չի նայում ձեր մարմիններին ու գույներին, այլ ձեր գործերին ու ձեր սրտերին **(արտաքինքին գործերին, ներքին**

մտադրություններին և
անկեղծությանը» (Մուսլիմ)

Բոլոր հրամանները,
պարտավորությունները
վերաբերվում են բոլորին, անկախ
նրանց մաշկի գույնին, ծագմանը,
ռասային և այլն: Ամենաբարձրյալ
Ալլահը Ղուրանում ասում է.

«Ով ճշմարիտ է գործում, սպա
անում է դա իր օգտին: Իսկ ով
չարիք է գործում, նա գործում է ի
վնաս իրեն: Քո Աստվածը
անարդար չի Իր ստրուկների
նկատմամբ»: (41:46)

Ալլահի համար մարդկանց
տարբերությունը միայն նրանց
աստվածավախության չափի,

բարեպաշտության և
արդարության մեջ է: Ալլահը
Ղուրանում ասում է.

«Ով մարդիկ: Մենք ձեզ
ստեղծեցինք տղամարդուց և
կնոջից և ազգեր ու ցեղեր
արեցինք ձեզ, որպեսզի դուք
ճանաչեք միմյանց և ձեզանից
Ալլահի ամենահարգելին դա
ամենաաստվածավախն է
Ավելացրած, Ալլահը ունի լիարժե
ք Գիտություն և լավատեղյակ
է ամենին»: (49:13)

Իսլամական օրենքի դիմաց բոլոր
մարդիկ հավասար են: Դատական
որոշումներն ու տուգանքները
վերաբերվում են բոլոր

ռասաներին ու դասերին, առանց որևէ տարբերությունների ու անձնական

առանձնահատկությունների:

Այստեղ մենք կտեսնենք մի հայտնի օրինակ: Աիշան հայտնեց, որ քուրայշները անհանգստացած էին, երբ Մահգում ընտանիքից մի ազնվական կին գողություն էր արել, իսկ Ալլահի առաքյալը (ի.Ա.ո.ն.) ցանկանում էր պատժել նրան, կտրելով նրա ձեռքը:

Քուրայշները խորհրդակցեցին միմյանց հետ և ասացին. «Ավելի լավ է, որ մարգարեի հետ այդ կնոջ մասին խոսի Ուսամա իբն Չաիդը

նրա ամենասիրելի ուղեկցորդը »: Նրանք ուղարկեցին

Ուսամային, որ խոսի մարգարեի
(**խ.Ա.ն.ն.**) հետ և պաշտպանի այդ
կնոջը: Մարգարեն (**խ.Ա.ն.ն.**)
Ուսամային լսելուց հետո ասաց.

«Ով Ուսամա, դու եկել ես,
որ խնդրես Ալլահի կողմից
նշանակված պատիժներից մեկի
իրականացումը կանխել՝»: Ալլահի
առաքյալը ոտքի կանգնեց
խոսակցությունից հետո և դիմեց
մարդկանց. «Ճշմարիտ, Նա
վերացրեց ձեզանից առաջ
ապրողներին, երբ նրանց մեջ
հարուստները գողություն էին
անում, նրանք ոչինչ չէին անում,
իսկ երբ թույլն էր անում, **ապա
այդ դեպքում
պատժի էին ենթարկում: Եվ**

երդվում եմ Ալլահով, եթե Մուհամմեդի դուստր Ֆաթիման որևէ բան գողանար, ապա ես պարտադիր նրա ձեռքը կկտրեի»:
Բուխարի

Ոչ ոք Մենաշնորհի, չարաշահման կամ երկրի ռեսուրսներում սեփական շահերը պաշտպանելու իրավունք չունի: Ազգի բոլոր անդամները իրավունք ունեն օգտագործել երկրի ռեսուրսները, համաձայն արդար և հավասար իրավունքների՝ ու պարտականությունների: Այն ու ամենայնիվ նրանք հավասար չեն լինելու աշխատանքի կատարման և օգուտի ժամկետներում, որը տալիս են հասարակությանը:

Իսլամական կառավարությունը
անում է ամեն ինչ, որ ապահովի
աշխատանքային տեղեր
մարդկանց համար և
կազմակերպի ազգային
ռեսուրսների օգտագործումը:

Իսլամը մարդկանց հավասար է
հայտարարում, մարդկային
ունակությունների
աշխարհայացքից,
սակայն մարդը պարզևատրված
կլիների դատելով նրանից, թե ինչ է
տվել հասարակությանը:

Մարդկանց մեջ միակ
տարբերությունը նրանց
օգտակարությունն է: Օրինակ՝
աշխատասեր ու ավարկոտ
մարդիկ ստանալու են տարբեր

վճարներ ու պարգևներ: Ալլահն
ասում է.

«Բողոքի համար աստիճաններ են
լինելու, համապատասխան նրանց
արածներին: Քո Աստվածը նրանց
արարքների վերաբերյալ
անտեղյակության մեջ չի»: (6:132)

Իսլամն ու կյանքի հինգ հիմնական կարիքների հոգումը

Այժմ մենք կանցնենք մարդու
հիմնական կարիքների
ստույգացմանը, որը
երաշխավորում է Իսլամը իր
աստվածային և յուրահատուկ
համակարգում:

Աստվածային կրոնի պահպանումը

Իսլամը հանդիսանում է Ալլահի միանգամայն աստվածային հայտնությունը մարդկանց համար, **մարդկանց փրկության ու բարգավաճման համար**: Բոլոր նախորդ մարգարեները, ինչպիսիք են Նոյր, Աբրահամը, Մովսեսն ու Հիսուսը, եղել են մուսուլմաններ, որոնք ուղարկված էին իրենց ազգերին Իսլամի կրոնով՝ Ալլահին երկրպագելու առանց Նրան գործընկերներ տալու, և օրենքներով, **որ համապատասխանում էին իրենց ազգերին**:

Ալլահին ասում է.

«Եվ Մենք ոչ մի առաքյալ
չենք ուղարկել, առանց նրան
ասելու. «Չկա աստված, բացի
Ինձանից: Ուրեմն երկրպագեք
Ինձ»»: (21:25)

Մուհամմեդ իբն Աբդուլլան
(ի.Ա.ո.ն.) հանդիսանում է Ալլահի
վերջին առաքյալն ու մարգարեն:
Նա ուղարկված էր ողջ
մարդկությանը, օրենքի
իսլամական ձևակերպումով, որ
տվել էր իմաստուն և ամենազեա
Ալլահը:

Ալլահին ասում է.

«Եվ Մուհամեդը ձեզանից ոչ մի տղամարդու հայրը չէր, այլ Ալլահի առաքյալն ու վերջին մարգարեն»
(33:40)

Նաև ասում է.

«Այդ օրը ես կատարյալ եմ դարձրել ձեր կրոնը ձեր համար և ավարտել եմ իմ լավությունը ձեզ և ընտրել եմ ձեզ համար ալ-Իսլամ ինչպես ձեր կրոն»: (5:30)

Նաև ասում է.

«Ճշմարիտ, Ալլահի առաջ կրոնը Իսլամն է»: (3:19)

Նաև ասում է.

«Իսկ ով ցանկանում է ունենալ ուրիշ կրոն՝ բացի Իսլամից, չի ընդունվի Ալլահի կողմից և ապագա կյանքում պարտվածներից կլինի» (3:85)

Ալլահի առաքյալը (խ.Ա.ո.ն.) բացատրելով իր նմանությունը նախորդ մարգարեների հետ, ասաց.

«Ես ու ինձ նախորդող մարգարեները նման ենք մի մարդու, որը մի տուն է կառուցել: Տունը գեղեցիկ էր և հոյակապ, բացառությամբ անկյունում գտնվող մի տեղից, որտեղ մի քար էր բացակայում: Տունը տեսնող մարդիկ զարմանում էին, սակայն

հետաքրքրվում էին, թե ինչո՞ւ
 տանտերը չի դրել այդ պակասող
 քարը: Ես էլ կամ այդ քարը, որ
 բացակայում էր: Ես վերջին
 առաքյալն եմ (Երկրի
 մարդկության համար)»:

Բուխարի

Ողջ մարդկությունը
 կհամաձայնվի ընդհանուր
 հիմունքի հետ, որ
 ճշմարտությունը, արդարությունն
 ու բարին պետք է պահպանվեն ու
 պաշտպանվեն սաի,
 բռնակալության ու չարիքի ուժի
 հարձակումից: Մուսուլմանները
 լրջորեն են վերաբերվում այդ
 պարտականությանն ու ձգտում
 են տարածել ճշմարտությունը,

արդարությունն ու բարիքը բոլոր
հասանելի օրինական
միջոցներով: Աշխարհիկ
հասարակության համար կրոնը
համարվում է միայն անձնական
գործ: Օրենքով հասարակական
կյանքը պետք է ղեկավարվի
աշխարհիկ հիմունքներով և
գիտություններով, և ոչ մի
դեպքում կրոնով կամ կրոնական
օրենքներով: Մենք պետք է
հիշենք, որ աշխարհիկ կրթության
համար պայքարի թեժացումը
ինքն իրենով եղել է Եվրոպայի
տարբեր թագավորների ու
միապետների և քրիստոնեական
եկեղեցիների միջև պայքարի
ավելորդության հակազդումը:

Դա բերում է «Ջիխադի»
 (պայքար, ջանք) բարդ թեմային,
 որը աշխարհում շատերը սխալ են
 հասկանում: Ղուրանի հետևյալ
 այսթը ընդհանուր կոնտեքստով
 պարզեցնում է ջիխադի
 ընդհանուր կանոնը.

«Պայքարեք Ալլահի
 ճանապարհին նրանց հետ՝ ովքեր
 պայքարում են ձեր դեմ, սակայն
 ձեզ թույլատրվածի սահմանները
 մի անցեք (այսինքն՝ մի սպանեք
 անզեն քաղաքացիներին,
 կանանց, ծերերին, երեխաներին,
 կենդանիներին, ծառերին և այլն)
 (կամ դուք մի եղեք առաջին
 հարձակվողները), քանի որ

Ալլահը հարձակվողներին չի սիրում»: (2:190)

Ջիհադը կայանում է նրանում, որ մուսուլմանները պայքարեն ագրեսիայի, ճնշման ու շահագործման դեմ, պաշտպանության մարտական գործողություններով, ընդ որում դրանում արգելված են ամեն տեսակի հանցագործությունները: «Ջիհադ» արաբական արմատը նշանակում է ձգտում, և այն իր մեջ պարունակում է ոչ միայն ճնշողների և բռնակալների դեմ, այլ նաև մի ընդհանուր պայքար բարին չարից պաշտպանելու համար: Իսլամական կրոնը պաշտպանվում է ջիհադով, նրա

վերջնական ճշմարտությանը՝
արդարությանը ու բարությանը, և
ինքները պաշտպանվում իրենց են
վնասել ցանկացողներից: Բոլորի
պարտավորությունն է
հանդիսանում հավատալ և անել
ջիխադը հատուկ չափով՝ ավելի
կարևոր պարտականություններ
կան մեծ հնարավորություններ
ունեցողների համար, սակայն
նույնիսկ աղքատներն ու
հաշմանդամները պետք
է կամայականորեն աջակցեն և
աղոթեն հաղթանակի համար:

Ջիխադը նաև կիրառվում էր
նախորդ կրոններում, քանի որ
չարիքը կա ողջ աշխարհում և
մարդկության ամբողջ

պատմության ընթացքում:

Ջիխադն ուղղված է բռնակալությունն ու անարդարությունը կանգնեցնելուն: Այն նաև մարդկանց արգելում է երկրպագել կեղծ աստվածներին ու կիսաստվածներին, և կոչ է անում երկրպագել Ալլահին, **որ չունի որդի և Իրեն հավասարին:**

Ջիխադը օրենսդրորեն վերացնում է անարդարությունն ու մարդուն բերում է գլխարտության, արդարության ու խաղաղության, դեպի Իսլամը, որպես կենսակերպ, որը հետաքրքրված է մարդկանց բարգավաճմամբ այլ ոչ թե առանձին խմբերի շահերի

համար, քանի որ Իսլամը
 ունիվերսալ կրոն է, **և գոյություն
 չունեն աշխարհագրական
 սահմաններ դրա**

ուսումնասիրման համար:

Ավանդույթը հաստատում է, որ
 Ալլահի առաքյալն (**ի.Ա.ն.ն.**) ասել
 է.

«Օգնեք ձեր եղբորը, լինի նա
 ճնշող թե՛ ճնշվող»: Մի մարդ
 հարցրեց. «Ով Ալլահի առաքյալ,
 ես օգնում եմ նրան, երբ նա
 ճնշվում է, սակայն ինչպե՞ս կարող
 եմ օգնել նրան, երբ նա է ճնշողը»:
 Նա (**ի.Ա.ն.ն.**) ասաց. «Դու կարող
 ես նրան ետ քաշել նրան ճնշելուց:
 Դա է քո օգնությունը»: Բուխարի

Իսլամի ուղերձը հանդիսանում է միջազգային և ունիվերսալ ողջ մարդկության համար, համոզմունքների ամեն ինչ ներառող սկզբունքներով կամայինություն և էթիկա բոլոր կյանքի բնագավառներում:

Իսլամով դրված են արդարադատության, արդարության, հավասարության, ազատության, բարգավաճման, հաջողությունների և անկեղծության հիմունքները մարդու համար: Ջիխադը մարդկանց օրենքով չի ստիպում իրենց կամքին հակառակ միանալ Իսլամին, այլ հանդիսանում է խաղաղության պահպանման մեխանիզմի գործիք, **թուլյատրում**

Է խաղաղ տարածումը:

Այն բանից հետո , երբ մարդ և տանում է ուղերձը

, այդ դառնում է նրա գործը ընդունել Իսլամ , **թե ոչ :**

Ջիհադի հիմնական ուղին է խաղաղ գաղափարախոսություն մարդկանց :Ալլահն ասում է.

«Չկա ստիպողականություն

կրոնում: Հարթ ճանապարհն

արդեն տարբերվել է

մոլորությունից: Ով չի հավատում

տագուտին, այլ հավատում է

Ալլահին, նա բռնվել է ամենա

հուսալի բռնիչից, **որը երբեք չի**

կոտրվի: Ալլահը լսող և իմացող

է»: (2:256)

Ղեկավարությունների և
ժպղովուրդների միջև կապն
ամրացնող սկզբունքը հիմնված է
արդարության և խաղաղության
վրա, **քանի որ առանց
արդարության չի կարող լինել
ամուր խաղաղություն: Ջիխադը
չի հանդիսանում «սուրբ
պատերազմ»,** ինչպես
նկարագրված է արևմտյան ՉԼՄ-
ներում, սակայն դա հարգելի
«պայքար» է ընդդեմ ճնշողներին
և Ալլահի Խոսքի ու Իսլամի
խաղաղ տարածմանը
խանգարողներին:
«Պատերազմի» պատճառ
հիմնականում հանդիսանում են
անձնական կամ ազգային
շահերը, որոնք վերաբերվում են

հողին, ռեսուրսներին, կամ այլ քաղաքական կամ տնտեսական պատճառներին: Իսլամն արգելում է նմանատիպ «պատերազմը» և թույլատրում է ջիխադը երեք դեպքերում, որոնք են.

1) Կյանքի, ունեցվածքի և սահմանների պաշտպանությունը, առանց օրինախախտության:

Ալլահն ասում է.

«Պայքարեք Ալլահի ճանապարհին նրանց հետ՝ ովքեր պայքարում են ձեր դեմ, սակայն ձեզ թույլատրվածի սահմանները մի անցեք (այսինքն՝ մի սպանեք անզեն քաղաքացիներին, կանանց, ծերերին, երեխաներին,

կենդանիներին, ծառերին և այլն)
(կամ դուք մի եղեք առաջին
հարձակվողները), քանի որ
Ալլահը հարձակվողներին չի
սիրում»: (2:190)

2) Ճնշման չեզաքացում և
ճնշվածների իրավունքների
պաշտպանություն:

Ճնշման և բռնատիրության դեմ
պայքարի պարտավորվածություն
ընդ նշված է Ղուրանում : Ալլահն
ասում է.

«Ինչո՞ւ չմարտնչեք Ալլահի
ճանապարհին և հանուն թույլ
տղամարդկանց, կանանց և
երեխաների, որոնք ասում են.

«Աստված մեր, դուրս հանիր մեզ այս քաղաքից, որի օրենք չեն ճանաչում: Մեզանից աջակից և օգնական նշանակիր մեր համար»»: (4:75)

Ալլահի առաքյալն (խ.Ա.ո.ն.) ասել է.

«Լավագույն ջիխատը դա ճշմարտության խոսքն է բռնակալ ու անարդար ղեկավարության դիմաց»: Ահմեդ

3) Հավատքի և կրոնի պաշտպանությունը:

Ալլահն ասում է Փառահեղ Գուրանում

«Պայքարեք նրանց դեմ մինչ վերանա գայթակղությունն ու մինչ կրոնն ամբողջությամբ նվիրված լինի Ալլահին: Եթե նրանք կանգ առնեն, ապա չէ որ Ալլահը տեսնում է նրանց արարքները»: (8:39)

«Մուջախեդը» (Ալլահի գործի համար պայքարող մուսուլման) պետք է ձգտի Ալլահի գոհությանը: Նա պետք է ունենա մաքուր հասկացություն, որ ջիխադը նշանակված է միայն հետևյալ դեպքերի համար. որ պաշտպանի Իսլամն ու մուսուլմաններին, և Իսլամի ու Ալլահի Խոսքի տարածման համար: Եթե Իսլամի

թշնամիները, որոնք պայքարում են մուսուլմանների դեմ, դադարում են գրոհել և ընդունում են արդար խաղաղության պայմանները, **ապա մուսուլմանները պարտավոր են դադարեցնել պայքարը նրանց դեմ: Ալլահը նույնպես ասաց.**

«Եթե նրանք ձգտում են խաղաղության, **ապա դու էլ ձգտիր խաղաղության և վստահիր Ալլահին: Ծշմարիտ, Նա լսող և իմացող է»: (8:61)**

Եվ Ալլահն ասել է.

«Եթե նրանք նահանջում են առանց ձեր դեմ մարտի մեջ մտնելու և խաղաղություն

կառաջարկեն, ապա ձեզ չի թույլատրվում մարտնչել նրանց դեմ, քանի որ չկա առիթ դրա համար»: (4:90)

Իսլամը թույլատրում է պայքարը միայն վերոնշյալ պայմաններում և խիստ պայմաններ է նշանակել «պատերազմի» համար:

«Պատերազմի» համար բոլոր այլ պատճառները լիովին արգելված են Իսլամում, օրինակ՝ պատերազմ հողի համար, գաղութային շահերի և վրեժխնդրության համար, **և այլն:** Իսլամը չի թույլատրում մարտիկներին սպանել քաղաքացիների, ուլքեր չեն պայքարում , **այլ թույլատրում է**

սպանել միայն զհնճառայողներին
և նրանց անմիջականորեն
աջակցողներին: Իսլամը չի
թուլլատրում կամ արդարացնում
տարիքավորների, երեխաների,
կանանց, հիվանդների,
բժիշկների, **վանականների**
սպանությունը: Իսլամն արգելում
է տանջարաններն ու
մահացածների մարմինները
վնասելը: Իսլամը նաև արգելում է
թշնամիների խոշոր
եղջերավորների և այլ
կենդանիների սպանությունը,
տները քանդելն ու խմելու ջրերն
աղտոտելը, այդ թվում նաև
գետերը, լճերը, **ջրի աղբյուրները**:
Այս ամենն ասված է Ղուրանի

շատ այաթներում, ինչպես նաև հետևյալում.

«Ալլահի կողմից քեզ պարգևվածով ձգտիր դեպի Վերջին Կացարանը, սակայն մի մոռացիր այս աշխարհում քո բաժնի մասին: Բարիք գործիր, ինչպես Ալլահն է գործել քո համար, և մի ձգտիր տարածել անարդարությունը աշխարհում, քանի որ Նա չի սիրում անարդարությունն տարածողներին»: (28:77)

Դրանք նաև հաճախ հանդիպում են Ալլահի առաքյալի (խ.Ա.ն.ն.) ասածներում.

«Պայքարեք հանուն Ալլահի, Նրա գործի Ալլահին չհավատացողների դեմ: Պայքարեք նրանց դեմ, սակայն մի խախտեք ձեր պայմանավորվածությունները կամ խաղաղությունը, մի վնասեք, մի սպանեք նորածիններին...»:
Մուսլիմ

Նաև ասել է.

«Մի սպանեք կնոջը կամ ստրուկին»:

Աբու Դաուդ Իբն Մաջա

Դա նաև վերաբերվում է առաջին խալիֆ Աբու Բակրի նշանակումներին նրա հրամանատարների համար: Փոխանցված է եղել, որ նա ասել է.

«Լսեք և ենթարկվեք հետևյալ
տաս հրամաններին.

Մի դավաճանեք ոչ մեկին: Մի
գողացեք զինվորական ավարից:
Մի խախտեք ձեր
հավատարմության երդումը: Մի
վնասեք թշնամի սպանվածների
կամ մահացածների մարմինները:
Մի սպանեք երեխաներին կամ
անչափահասներին: Մի սպանեք
ծեր կանանց
կամ տղամարդկանց :
Մի սպանեք կանանց :
Արմատախիլ մի արեք որևէ ար
մավենի կամ այլ ծառ մի վնասեք
և մի այրեք: Մի կտրեք ոչինչ և մի
վնասեք բերքը: Մի սպանեք
ոչխարներին, **երթե չեք ուտելու:**

Դուք, իհարկե անցնելու եք
 այնպիսի մարդկանց մոտով,
 որոնք առանձնացել են Ալլահին
 երերպագելու համար՝
 վանականների և այլերի մոտով,
**հանգիստ թողեք նրանց և մի
 խանգարեք:** Դուք անցնելու եք
 մարդկանց մոտով, **որոնք ձեզ
 սնունդ են տալու:** Ուտելուց ամեն
 անգամ տվեք Ալլահի անունը:
 Դուք անցնելու եք այնպիսի
 մարդկանց
 մոտով, ովքեր սափրում են իրենց
 գլուխների կենտրոնները և
 երկարացնում են կողքերի
 մազերը՝ ձեզ թույլատրվում է
 մարտնչել նրանց դեմ, **քանի որ
 նրանք ձեր թշնամիներն են
 հանդիսանում և սուր են**

բարձրացնում ձեր վրա: Գնացեք
առաջ Ալլահի անունով»:

Գերիները տանջանքների, **ծեծի և
վիրավորանքների չեն տրվում:**
Նրանք չպետք է փակված լինեն
նեղ բանտախցիկներում առանց
բավարար սննդի ու ջրի, **և
թողնվեն մահանալու:** Ղուրանում
ասվում է.

«Նրանք սնունդ են
տալիս հանուն Ալլահի
խեղճերին, որբերին ու
գերիներին, Նրանք ասում են.
«Մենք կերակրում ենք ձեզ
միայն հանուն Ալլահի, և չենք
ակնկալում ձեզանից ոչ պարգև, ոչ
էլ շնորհակալություն»: (76:8-9)

Իսլամական կառավարությունը
իրավունք ունի կամ ազատել
գերիների մի մասին, կամ գումար
պահանջել նրանց համար, **կամ**
փոխանակել նրանց մուսուլման
գերիների հետ: Դա սավաժ է
Ղուրանում.

«Երբ դուք հանդիպում եք
անհավատներին մարտի
դաշտում, **սպա կապեք նրանց**
պարանոցները: Երբ թուլացնեք
նրանց, **սպա պնդացրեք**
շղթաները: Իսկ հետո կամ ներեք
նրանց, կամ գումար պահանջեք
նրանց ազատելու դիմաց, **մինչ**
պատերազմն ավարտվի: Ահա
այդպե՛ս: Եթե Ալլահը ցանկանար,
սպա Ինքը վրեջխնդիր կլիներ

նրանց, սակայն Նա ցանկացավ
 փորձել ձեզանից որոշներին
 մյուսների միջոցով: Նրանք ովքեր
 հաստատուն են
 Նրա ճանապարհին,
 Նա երբեք չի թողնի այդ մարդկ
 անց գործերը կորչեն»: (47:4)

Գերված ժողովուրդները, ովքեր
 ընդունում են Իսլամական
 կառավարությունը, նրանց
 ունեցվածքը, պաշտպանվում են
 իսլամական օրենքով ամեն
 տեսակի խախտումներից: Ոչ ոք
 իրավունք չունի առգրավել ոչ
 մուսուլմանների ունեցվածքը կամ
 հարստությունը, նվաստացնել
 նրանց, վնասել նրանց պատիվը:
 Ոչ ոք իրավունք չունի

անարդարորեն հարձակվել նրանց վրա: Ոչ մուսուլմանների հավատն ու կրոնական կիրառությունը իսլամական երկրում պահպանվում է սահմանների օրինական սահմաններով: Ալլահն ասում է Փառահեղ Ղուրանում

«Եթե նրանց իշխանություն տանք երկրի վրա, նրանք կսկսեն նամագ անել, զաքյաթ վճարել, հրամայել անել թուլյատրվածն ու արգելել անել արգելվածը: Բոլոր գործերի վերջն Ալլահի մոտ է»: (22:41)

Իսլամական երկրի ոչ մուսուլման բնակիչները պարտավոր են վճարել ցածրագույն հարկ, որը

կոչվում է «Ջիզա» և վերցվում է Իսլամ չընդունող անձանցից, որոնք ցանկանում են պահպանել իրենց կրոնը, ապրելով իսլամական երկրում և ենթարկվելով իսլամական ղեկավարությունը: Օրինակ՝ հին իսլամական պետություններում, այնժամ, երբ հարուստ մուսուլմանները վճարում էին հավաքված հարստության 2,5 տոկոսը, ոչ մուսուլման բնակիչները վճարում էին երեք կարգով՝ հարուստները՝ տարեկան 48 դիրհամ[2], տարեկան առևտրակ աններն ու ֆերմերները՝ տարեկան 24 դիրհամ, **իսկ աշխատող դասակարգը՝**

տարեկան 12 դիրհամ: Ջիզան հավաքվում է իսլամական երկրում ապրող ոչ մուսուլմանների անձանց և ունեցվածքի պաշտպանության դիմաց: Մուսուլման առաջատար ու զորավար Խալիդ բին ալ-Վալիդը երդում տվեց իսլամական պետությունում ապրող ոչ մուսուլման բնակիչներին ասելով. «Ես ձեզ իմ հավատարմության երդումն եմ առաջարկում և պաշտպանելու եմ ձեզ հարկի դիմաց: Եթե մենք ապահովում ենք անհրաժեշտ պաշտպանությունը, մենք իրավունք ունենք հարկ հավաքելու: Հակառակ դեպքում

դուք պարտավոր չեք այն
վճարել»:

Հետո, երբ մուսուլմանների գորքը
պետք է լքեր մարտի դաշտը,
նրանք վերադարձրեցին ջիզան,
որ հավաքում էին, **քանի որ ի
վիճակի չէին կատարել
խոստումը:**[\[3\]](#)

Ջիզան չի վերաբերվում
մուսուլմանական պետությունում
բնակվող բոլոր ոչ
մուսուլմաններին, այլ վերցվում է
նրանցից, **ովքեր աշխատում են:**
Քաղաքացիների շատ կարգեր
ազատվում են ջիզա վճարելուց,
այդ թվում նաև աղքատները,
անչափահասները, կանայք,

վանականները, կույրերն ու
Ֆիզիկական սահմանափակ
հնարավորություններ
ունեցողները: Իսլամի համաձայն,
իսլամական ղեկավարությունը
պարտավոր է ապահովել նրանց
անվտանգությունն ու օգնել
նրանց կյանքը ապահովելուն:
Իրականում զորավան Խալիդ ալ-
Վալիդի տված երդումը
Իրաքում գտնվող Հիրա քաղաք
ի բնակիչներին հաստատում էր
հետևյալը.

«Տարիքավոր մարդը, վնասված
աշխատողը, անբուժելի հիվանդ
մարդը կամ հարուստ մարդը, որը
սնանկացել է և դրա հիման վրա
կրոնական ընկերների

օգնությանն է արժանի,
 պարտավոր չեն հարկ վճարել:
 Բացի դրանից, նրանցից
 յուրաքանչյուրը իրավունք
 կունենա օգնություն ստանալ
 իսլամական ֆինանսներից իր և
 նրա աջակցության տակ
 եղածների համար»: Աբու Յուսեֆ
 ալ- Բարաջ

Այլ օրինակ է, երբ երկրորդ խալիֆ
 Օմար իբն Ալ-Հաթթաբը անցավ
 մի ավեր հրեայի կողքով, **որը
 ողորմություն էր խնդրում:** Օմարը
 հարցրեց նրա մասին և նրան
 հայտնեցին, **որ նա իսլամական
 պետության ոչ մուսուլման բնակիչ
 էր:** Օմարն անմիջապես ասաց.
«Մենք արդար չենք եղել ձեր

հանդեպ: Մենք ձեզանից հարկ
էինք հավաքում, երբ դուք
երիտասարդ էիք և չօգնեցիք ձեզ
ծերության ժամանակ: Օմարը
ծերունուն տարավ իր տուն և
առաջարկեց նրան ինչ ունեք
հագուստից ու սնունդից: Հետո
նա մարդկանց,
ովքեր գանձարանի
պատասխանատուներն էին ,
ասաց.

«Հետևե՛ք, հսկե՛ք և նայե՛ք
հետևյալ դրություններին: Նման
մարդկանց առաջարկեք նրանց ու
նրանց ընտանիքների
անդամների համար բավարար
իսլամական ֆինանսներ»

Ալլահն ասում
է Փառահեղ Ղուրանում.

«Ողորմությունը նախատեսված
է կարիքավորների և աղքատների
համար»: (9:60)

Ինքնապահպանություն

(Մարդկային հոգու
պաշտպանությունը)

• Ֆիզիկական
անվտանգությունն ու
պաշտպանությունը

Մարդկային կյանքը սուրբ է և
պարգևված է Ալլահի,
Արարչի կողմից: Կյանքի
պաշտպանության համար Իսլամն
օրինականացրել է

մատերիալական և մարմնային պատիժներ: Սպանությունը դասակարգվում է երեք կարգի. մտածված կամ կազմակերպված սպանություն, չմտածված սպանություն, և սպանություն սխալմամբ: Իսլամը հրամայում է պատժել անմեղ մարդկանց մտածված սպանություն անողներին, ձգտելով գործածել վախեցնելու ամենահզոր միջոցը և դրա միջոցով կանխարգելել նման դեպքերը: Չմտածված ու սխալմամբ կատարված սպանությունները հանդիսանում են առանձին կարգեր, առանձին նվազագույն պատիժներով, և զոհի բարեկամներից վճարվում են արյան գումարներ:

Սպանվածի ընտանիքը կամ երեխաները ստանում են Դիահ (արյան գումար), եթե նրանք պատրաստ են ներել մեղավորին: Մեղավորը պետք է մեղանչի Ալլահի դիմաց և մաքրվի մուսուլմանական ստրուկների ազատման միջոցով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա նա պետք է պահք պահի երկու ամիս անընդմեջ: Այդպիսինն են կյանքի պահպանման տուգանքները: Ոչ ոք իրավունք չունի խառնվել մյուսների կյանքին ու դիպչել նրանց ունեցվածքին առանց օրինական հիմքեր ունենալու: Անհրաժեշտ է կասեցնել անարդար սպանությունները կամ իսլամական հասարակության

անմեղ անդամներին հետևելը, և այդ խիստ պատիժները պետք է հասկանալի լինեն բոլոր բռնակալների ու ճնշողների համար: Եթե վրեժն անհամապատասխան է կատարված հանցագործությանը, ապա հանցագործներն ավելի համարձակ են դառնում իրենց գործերում: Բոլոր նմացած մարմնային պատիժներն ունեն նույն հիմնավորումները, համաձայն որին, պատիժը չափվում է հանցագործության ծանրության համապատասխան և վրեժը պետք է դադարեցնի բոլոր վեճերն ու շփոթմունքը: Բոլոր պատիժները ստեղծված են իսլամական հասարակությունում

մարդկային կյանքի և ունեցվածքի
պահպանման համար: Ալլահն,
Ամենաբարձրյալը ասում
է Փառահեղ Ղուրանում

«Եվ կա փրկում ձեզ համար ալ-
Քիսասում , **ով մտքի տերեր:**
Գուցե դուք աստվածավախ
լինեք»: (2:179)

Չմեղանչած մտածված
սպանության համար պատիժ
հաջորդ կյանքում լինելու է Ալլահի
զայրույթը:
Ամենաբարձրյալ Ալլահն ասում է
Փառահեղ Ղուրանում

«Եթե մարդ սպանում է հավատ
ացյալի մտադրված, նրա պատի
ժը դժոխքն է

, բնակվելու այնտեղ հավերժ և Ալլահի անեծքն ու երդումը նրա վրա է և սարսափելի պատիժ է պատրաստված նրա համար :'' (4:9)

Իսլամն ամեն մեկին տալիս է հատուկ պարտականություններ, որոնք վերաբերվում են մարդկային կյանքի պահպանմանը: Ստորև մեջբերված են այդ կանոններից որոշները:

1. Մարդուն

չի պատկանում մարմինը կամ հոգին, այն, սրբություն է որը ժամանակավորապես վստահված է: Ոչ մեկին չեն

թուլլատրվում մտածված
 տանջանքները, վնասելն ու ամեն
 տեսակի վնասակար
 գործողություններ կատարելը,
 որոնք տանում են դեպի
 մահը: Կյանքը տրված է միայն զ
 ոհաբերել հանուն Ալլահի: Ալլահ
 ն, Ամենաբարձրյալը ասում է
 Փառահեղ Դուրանում

«Ով հավատացյալներ,
 անօրինականորեն մի խժռեք ձեր
 ունեցվածքը ձեր մեջ, այլ միայն
 առևտրի միջոցով՝ ձեր միջև
 համաձայնությունով: Մի սպանեք
 ինքներդ ձեզ (իրար), քանի որ
 Ալլահը գրթասիրտ է ձեր
 նկատմամբ»: (4:19)

2. Մարդը պետք է համապատասխան սնվի, որպեսզի բավարարի առողջության պահպանման համար սննդի նվազագույն պահանջը: Նա իրավունք չունի ինքն իրեն զրկի սննդից, ջրից, հագուստից, ամուսնությունից և պահանջվող հոգատարությունից, եթե դրանք նրան վնաս չի պատճառում:

Ամենաբարձրյալ Ալլահն ասում է Փառահեղ Դուրանում.

«Ասա. «Ո՛վ է արգելել Ալլահի զարդն ու հոյակապ գործը, որ Նա պարգևել է Իր ստրուկներին»:
Ասա. «Աշխարհիկ կյանքում դրանք տրված են

հավատացյալներին, իսկ Վերջին Օրը դրանք կտրվեն բացառապես նրանց համար»: Այդպես ենք մենք պարզեցնում նշանները իմացող մարդկանց համար»: (7:32)

Ալլահը, Ամենաբարձրյալը դժգոհ էր Մուհամմեդից (խ.Ա.ն.ն.), երբ նա իրեն զրկեց մեղրից, որ թողի դա իր կանանցից մեկին, և դա բոլոր մուսուլմանների համար եղավ մշտական դաս: Ալլահն ասում է Փառահեղ Ղուրանում

«Ով Մարգարե՛: Ինչու՞ ես արգելում այն՝ ինչ քեզ թույլատրել է Ալլահը, ձգտելով քո կանանց գոհունակությանը, և Ալլահը ներողամիտ ու ողորմած է»: (66:1)

Չափավորությունը գտնվում է
ագահության և վատնումի միջև:
Մարդը կարող է օգտվել
օրինական
առատաձեռնություններից, **որ**
տվել է Ալլահը իսլամական
օրենքների սահմանափակումով
ու առանց կորստի: Ալլահն,
Ամենաբարձրյալը ասում է
փառահեղ Դուրանում

«Ով Ադամի որդիներ: Կրեք ձեր
զարդերը ամեն մզկիթում: Կրեք
և խմեք, սակայն
մի, վատնեք քանի որ Նա չի
սիրում վատնողներին » (7:31):

Չի կարելի չափազանցացնել
Ֆիզիկական պահանջները և

անզգուշորեն վնասվել դրանից
կամ զրկել նվազագույնից: Ալլահն
, Ամենաբարձրյալը ասում է
փառահեղ Դուրանում

«Ալլահը մարդուն չի հրամայում
նրա հնարավորութունները
գերազանց մի բան: Նրան մնում
է այն, ինչ ձեռք է բերել, և նրա դեմ
կլինի այն, ինչ նա ձեռք է բերել»:
(2:286)

Հայտնել են, որ Անաս բին Մալիկը
պատմել է, որ երեք տղամարդ
եկան մարգարեի (խ.Ա.ն.ն.) կնոջ
մոտ, որ իմանան, թե մարգարեն
(խ.Ա.ն.ն.) ինչպես է երկրպագում
Ալլահին: Երբ նրանց պատմեցին,
նրանք մտածեցին, թե իրենց

երկրպագություններն աննշան են,
 և ասացին. «Ո՛ւր ենք գտնվում
 մարգարեի համեմատ, և Ալլահը
 ներել է նրա նախկին և ապագա
 մեղքերը»: Նրանցից մեկն ասաց.
 «Ինչ վերաբերվում է ինձ, ապա ես
 աղոթելու եմ ողջ գիշերը»: Մյուսն
 ասաց. «Ես անդադար
 պահք եմ պահելու »: Երրորդն
 ասաց. «Ես հեռու կմնամ
 կանանցից և երբեք
 չեմ ամուսնանա»: Մարգարեն
 եկավ նրանց մոտ և հարցրեց.

«Դուք եք այն մարդիկ, **որ ասել եք
 այդ բանե՛րը**: Երդվում եմ
 Ալլահով, ես վախենում եմ
 Ալլահից ավելի շատ քան դուք, և
 ես ձեզանից ամենալսողն ու

ենթարկվողն են, սակայն պահք
են պահում և դադարում են դա,
աղոթում և քնում են գիշերը, և **ես
ամուսնացած եմ: Այդպիսով, ով
հերքում է իմ Սուլնան, նա իմ
հետ չի»:** (Բուխարի և Մուսլիմ)

Խաղաղություն և
անվտանգություն

Մարդու և նրա ընտանիքի
պաշտպանության և
անվտանգության իրավունքը
հանդիսանում է մարդու
հիմնական իրավունք: Բոլոր
քաղաքացիները
հասարակությունում չպետք է
վախեցած լինեն, նրանց չպետք է
սպառնան խոսքերով,

գործողություններով կամ զենքով:
Ալլահի առաքյալն (խ.Ա.ռ.ն.) ասել
է.

«Անթուլյատրելի է
մուսուլմանին ուրիշի
,մուսուլմանի վախեցնել»: Աբու
Դաուդ և Ահմեդ

Անվտանգության զգացումը
հասարակությունում մարդկանց
թույլ է տալիս տեղաշարժի
ազատություն, **որպեսզի**
աշխատեն և հայթայթեն իրենց
օրական հացը արդար քրտնքով:
Մարմնական և
մատերիալական պատիժները
նախատեսված են նրանց համար,
ովքեր փորձում են խախտել

խաղաղությունը,
անվտանգությունը ու
կայունությունը
մուսուլման հասարակությունում:
Ալլահի առաքյալն (խ.Ա.ռ.ն.) իր
հրաժեշտի խոսքում հայտնեց.

«Ձեր ունեցվածքը, արյունն ու
պատիվը անձեռնամխելի են մեկդ
մյուսիդ համար, ինչպես ձեր այս
օրը (Հաջի ժամանակաշրջանի
Առաֆա օրը), այս ամիսը
(ուղտագնացության ամիսը), և
ձեր այս քաղաքը (Մեքքան)»:
Բուխարի

Մնունդն ու խմիչքը կյանքի
համար անհրաժեշտ և օգտակար
են բոլորի համար

Առողջ սնունդը պետք է հասանելի լինի բոլոր մարդկանց համար իսլամական հասարակությունում, մարդկանց աշխատելու հնարավորությունը ընձեռելու միջոցով: Համապատասխան հնարավորությունների առկայությունը առևտրի և աշխատանքի համար շատ կարևոր են մարդկանց համար, հիմնական կարիքները հոգալու նպատակով: Ովքեր չեն կարող աշխատել ծերության, հաշմանդամության, խրոնիկական հիվանդությունների, կամ տանը աշխատուժ չունեցողները, ստանում են իսլամական հանրապետության պետական

օգնություն ստանալու իրավունք:
Չարքաթը (պարտադիր
գլխարտություն և
բարեգործություն), որը
տրամադրվում է
հասարակությունում եղած
հարուստների կողմից, պետք է
հասանելի լինի կարիքավորների
համար, որոնք կարող են ստանալ
պարկեշտ օրինական եկամուտ:
Չարքաթը հանդիսանում է
պարտադիր բարեգործություն,
որը վերցվում է հարուստներից և
տրվում է հասարակության
հատուկ կարգերին: Դա
հիմնավորված է Ալլահի
առաքյալի (խ.Ա.ռ.ն.) խորհրդի
վրա վերջինիս ընկեր Մուադ բին
Չաբալին, երբ ուղարկվում էր

ուղերձի, որ կոչ անի դեպի Իսլամ
Եմենում.

«Եմենի ժողովրդին ասա, որ
Ալլահը հրամայել է
հարուստներին տալ իրենց
հարստության մասը որպես
Չաքյաթ և բաժանել
աղքատներին ու
կարիքավորներին»: Մուսլիմ

Այլ կամավոր
զոհաբերությունները, ընծաները,
ֆինանսական
պարտավորությունները, և այլն,
հանդիսանում են լավ միջոց
Ալլահին զոհացնելու և
հասարակության աղքատ ու
կարիքավոր անդամներին օգնելու

համար: Դա նաև մեջբերված է շատ գրություններում, ներառյալ Ալլահի առաքյալի (խ.Ա.ո.ն.) մասին հաղիսներում

«Անհավատ հանդիսանում է նա, ով հոգում է յուր կարիքները, այնժամ, երբ նրա հարևանը քաղցած է»: Բուխարի

Այդ աղքատ և կարիքավոր մարդիկ նույնպես կարիք ունեն իսլամական հարստությունների արդար բախշման: Դա նաև ասված է Ալլահի առաքյալի (խ.Ա.ո.ն.) հաղիսում.

«Ժառանգությունը (հարստությունն ու ունեցվածքը), որը մարդը թողնում է իրենից

Ես ասացի. «Նրա հետ, ով
նախկինում ամուսնացած է եղել»:
Նա հարցրեց. «Ինչու՞ չես
ամուսնացել կույսի հետ, որ դու
կարողանայիր խաղալ նրա հետ,
իսկ նա՝ քո հետ, կարողանայիր
ծիծաղեցնել նրան, իսկ նա՝ քեզ»:
Բուխարի

Կնոջ բոլոր գաղտնիքները
պաշտպանել: Ամուսինը չպետք է
պատմի իր կնոջ ամեն տեսակի
թերությունները և պարտավոր է
պահել ամեն ինչը, որ նա տեսնում
ու լսում է կնոջից, որպես
գաղտնիք, **որը երբեք չպետք է
բացահայտվի**: Ամուսնու և նրա
կանանց միջև ինտիմ
հարաբերությունները

պահպանվում և պաշտպանվում են Իսլամում: Ամուսնական հարաբերությունները սուրբ հարաբերություններ են Իսլամում, ինչպես ասել է Ալլահի առաքյալը (խ.Ա.ռ.ն.).

«Դատաստանի Օրը Ալլահի համար ամենավատ գործերից մեկն է լինելու այն, որ կնոջ հետ ինտիմ հարաբերություններ ունենալուց հետո ամուսինը պատմում է հասարակությանը»: Մուսլիմ

Հավասարությունն ու արդարություն: Մի կնոջից ավել կին ունեցող մարդը պետք է հավասար կերպով ապահովի իր

կանանց, առաջարկելով նրանց
նույնատիպ կամ համահունչ
ապրուստի պայմաններ ու
հագուստ: Նա պետք է նրանց
տրամադրի հավասար ժամանակ:
Դրանում ամեն տեսակի
անարդարություն խստորեն
արգելված է, ինչպես ասել է
Ալլահի առաքյալը (խ.Ա.ն.ն.).

«Ով ունի երկու կամ ավելի կին և
նրանց չի վերաբերվում նույն
կերպ, ապա Վերջին Օրը կհստվ
չափ պարալիզացված
կլինի»: Նիսայի

Արդար և լավ վերաբերմունք:
Ամուսինը պետք է արդար
վերաբերվի ընտանիքին ու կնոջը:

Ամուսինը պետք է ցուցաբերի հոգետարություն, բարություն և իր հնարավորությունների չափով լուծի բոլոր խնդիրները, **իսկ տանելով յուր կնոջ թերությունները նա կգոհացնի Ալլահին երկու աշխարհներում:** Տղամարդը պետք է խորհրդակցի կնոջ հետ այն ամենի մասին, **որը վերաբերվում է նրանց համատեղ կյանքին ու ապագային:** Նա պետք է պահպանի և ապահովի հանգիստ պայմաններ կնոջ համար, **հանգստություն իր տանն ու տնից դուրս:** Ալլահի առաքյալն (խ.Ա.ո.ն.) ասել է.

«Ավելի շատ հավատ ունեցող ու լավագույն բնավորության կողմեր

հավատացյալների մեջ
լավագույնները նրանք են, ով
լավագույն
կերպով են վերաբերվում իրենց
կանանց»։ Տիրմիզի

Պահպանություն ու
պաշտպանություն: Անուսինը
բոլոր հնարավոր եղանակներով
պետք է պաշտպանի իր կնոջը
կամ ընտանիքի անդամներին
ամեն տեսակի ոչ կամային
իրադրություններից: Ալլահն
ասում է.

«Ով դուք, որ հավատում եք:
Պաշտպանեք ձեզ ու ձեր
ընտանիքները կրակից, որի
համար որպես վառելիք մարդիկ

ու քարերն են ծառայում: Նրա
 հետևից լուրջ, ուժեղ ու Ալլահի
 հրամանից հետ չքաշվող
 հրեշտակներ են կանգնած ու
 կատարում են իրենց
 հրամանները՝ կրակի բնակիչների
 համար տանջանքներ ստեղծում»
 (66:6):

Նա պարտավոր է պաշտպանել
 սեփականությունն ու կնոջ
 ունեցվածքը, և չպետք է
 օգտագործի կնոջ ունեցվածքից
 ոչինչ առանց նրա
 համաձայնությունը նախապես
 ունենալով: Նա չպետք է
 մասնակցի իր կնոջ ունեցվածքին
 վերաբերվող որևէ

գործողությունում առանց կնոջ համաձայնության:

Երեխաների իրավունքները

Երեխաների իրավունքները բազում են, սկսած անուն ստանալու իրավունքից:

Մարգարեն (խ.Ա.ո.ն.) ասել է.

«Ճշմարիտ, դուք անվանվելու եք ձեր անուններով ու ձեր ծնողների անուններով Դատաստանի Օրը, այդ պատճառով լավ անուններ տվեք ձեզ»: Աբու Դաուդ

Նրանց իրավունքները պարունակում են բոլոր պահանջների ապահովում, ինչպիսիք են՝ հասանելի

կացարանը, օրինական սնունդը,
լավ կրթությունն ու
համապատասխան
դաստիարակությունը: Ալլահի
առաքյալն (խ.Ա.ռ.ն.) ասել է.

«Մեծ մեղք է կորցնել նրանց, ում
պարտավոր եք
աջակցել»:Աբու Դաուդ

Ծնողները պարտավոր են
սովորեցնել նրանց լավ կամային
պահելաձևի և պաշտպանել
նրանց վնասակար
սովորություններից, ինչպիսիք են
սուտը, խաբեբայությունը,
խաբկանքը, էգոիզմը և այլն:
Ալլահի առաքյալն (խ.Ա.ռ.ն.) ասել
է.

«Ձեզանից ամեն մեկդ մի հովիվ եք և պատասխանատու եք ձեր հովանու տակ գտնվողների համար»: Բուխարի և Մուսլիմ

Երեխաները իրավունք ունեն հավասար վերաբերմունք ստանալ, **ընդ որում նախապատվություն չի տրվում նրանցից որևէ մեկին:**

Երեխաների հետ անարդար վերաբերմունք կարող է բերել մեկը մյուսի նկատմամբ վատ վերաբերմունքի: Նուման բին Բաշիրն ասել է, որ նրա հայրը նրան մի նվեր առաջարկեց իր ունեցվածքից, և նրա մայր Ումրա բինտ Ռավան ասաց. «Ես չեմ համաձայնի դա, մինչ Ալլահի

առաքյալի չհաստատի դա»:
Այդպիսով նրա հայրը խնդրեց
Ալլահի առաքյալին (խ.Ա.ո.ն.)
վկայել այդ նվիրատվությանը:
Ալլահի առաքյալը (խ.Ա.ո.ն.)
հարցրեց. «Դու բոլո՞ր
երեխաներիդ ես առաջարկել այդ
նույնը»: Տղամարդը
պատասխանեց. «Ոչ»: Ալլահի
առաքյալն ասաց. «Վախեցիր
Ալլահից և արդար եղիր
երեխաներիդ նկատմամբ»:
Այդպիսով այդ մարդը
վերադարձավ և ետ դրեց այդ
նվերը»: Մուսլիմ

Բարեկամների իրավունքները

Բարեկամները հատուկ իրավունքներ ունեն, որոնք պարունակում են իրենց մեջ ուշադրությունը, **այցելությունն ու աջակցությունը**: Հարուստ մուսուլմանները պարտավոր են օգնել իրենց բարեկամներին, **այնուհետև մտերմության հերթականությամբ**: Մուսուլմանն անհրաժեշտության դեպքում աջակցում է իր եղբայրներին ու կիսում նրանց դժվարությունները: Ալլահն ասում է.

«Ով մարդի՛կ: Վախեցե՛ք ձեր Աստծուց, որ ստեղծել է ձեզ մի ոգուց և նրանից ստեղծել է կնոջ , **իսկ նրանցից՝ այլ**

տղամարդկանց և կանանց ու
բնակեցրել նրանց: Վախեցե՛ք
Ալլահից, որի անունով դուք
դիմում եք մեկդ մյուսիդ ու
պահպանում եք բարեկամական
կապերը: Ճշմարիտ, Ալլահը
հետևում է ձեզ»: (4:1)

Իսլամը մուսուլմաններին կոչ է
անում բարի լինել բարեկամների
նկատմամբ, նույնիսկ
վիրավորված լինելով նրանցից, և
կոչում է շարունակել
հարաբերությունները նրանց հետ,
նույնիսկ եթե նրանք դադարեցրել
են դա: Ընտանիքների և
բարեկամների
ընդդիմությունները մեծ մեղք են
համարվում Իսլամում, քանի որ

Ալլահին ասում
է փառահեղ Ղուրանում

«Հետո սպասվում է
, որ եթե ձեզ իշխանություն տ
ան
, դուք սխալներ կանեք երկրի վ
րա և կկտրեք բարեկամական
կապերը : Դրանց նմաններին
Ալլահին անիծեց, զրկեց նրանց
լսողությունից ու
տեսողությունից»: (47:23-24)

Խոսք պետական
հրավումքների և
պարտականությունների
մասին

1. Ղեկավարի
իրավունքները
Հասարակութայան նկատմամբ

2. Ժողովրդի
իրավունքները ղեկավարի
նկատմամբ

3. Հարևանների
իրավունքները

4. Ընկերների
իրավունքները

5. Հյուրերի
իրավունքները

6. Աղքատների
իրավունքները

7. Աշխատողների
իրավունքները

8. Գործատուների
իրավունքները

9. Կենդանիների
իրավունքները

10. Բույսերի և ծառերի
իրավունքները

11. Այլ իրավունքներ

Իսլամը հավատացյալներին հղում է կիսել աշխարհով մեկ տարածված իրենց եղբայրների փորձությունները և հնարավորին չափով օգնել նրանց: Ալլահի առաքյալն (**խ.Ա.ն.ն.**) ասել է.

«Հավատացյալները մեկը մյուսի համար նման են մի շենքի աղյուսներին՝ ամեն մեկն ամրացնում է մյուսին»: Ասելով դա միացրեց մատները: Բուխարի

Իսլամը մուսուլմաններին սովորեցնում է հարգել այլերի հեղինակությունը և հեռու մնալ ավելորդ մեղադրանքներից: Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.) ասել է.

«Հեռու մնացեք կասկածներից: կասկածները վատագույն սուտն է: Մի հետևեք ձեր մուսուլման եղբայրների վատ նորություններին ,

արատներին և թերություններին : Մի մրցեք (չար իմաստով ու մտքով) նրանց հետ: Միրեք ձեր մուսուլման եղբայրներին: Մի կանգնեք մեջքով (երբ նրանք ձեր օգնության կարիքն ունեն): Ով Ալլահի ստրուկներ, եղբայր եղեք իրար համար, **ինչպես Նա է հրամայել ձեզ**: Մուսուլմանը մուսուլմանի եղբայրն է: Մուսուլմանը պետք է արդար վերաբերվի իր մուսուլման եղբայրների հետ: Մուսուլմանը չպետք է թույլ տա իր եղբորը ընկնել և չպետք է թողնի նրան նեղության մեջ: Մուսուլմանը չպետք է գովերգի իր մուսուլման եղբորը: Ինչ ունի մուսուլմանը դրա օգտագործելը կամ

(անօրինական) չարաշահուճը մյուս մուսուլմանների համար արգելված է (առանց համաձայնության):

Բարեպաշտությունը (և արդարությունը) մեր սրտերում է: Բարեպաշտությունն այստեղ է: Մուսուլմանի համար մեծ չարիք է իր մուսուլման եղբոր գաղտնիքները բացահայտելը: Մուսուլմանի ողջ ունեցվածքն արգելված է այլ մուսուլմանի համար (խառնվելու համար)՝ նրա արյունը (սպանությունը), արժանապատվությունը, պատիվը, ընտանիքը, նրա հարստությունն ու ունեցվածքը: Ճշմարիտ, Ալլահի համար կարևոր չեն ձեր մարմինները՝

արտաքին տեսքը, նա հոգ է տանում ձեր սրտերի, **գործերի ու արարքների մասին»**: Մուսլիմ

Դրա համար այլ կողմնորոշիչ է ծառայում Ալլահի առաքյալի **(ի.Ա.ռ.ն.)** հետևյալ խոսքը.

«Մուսուլմանը իրական հավատացյալ չի լինի, մինչ չսիրի իր մուսուլման եղբոր համար այն ինչ իրեն է սիրում»։ Բուխարի

Հասարակական իրավունքները, որոնք հանդիսանում են հանրային, բոլոր մուսուլմանների և իսլամական հասարակության համար հետևյալն են.

1. Ղեկավարի
իրավունքները Հանրության նկատմամբ

Այդ իրավունքները հիմնավորված են Ալլահի հետևյալ ասածին.

Ով հավատացյալներ, ենթարկվեք Ալլահին, ենթարկվեք առաքյալին և նրան, **ով ձեր մեջ իշխանությամբ է հազեցված»:**
(4:59)

Ավելի ներքև մեջբերված են որոշ հրահանգներ, որոնց պետք է հետևի մուսուլմանը.

• Մուսուլմանները պետք է ենթարկվեն ղեկավարին այնինչուև, **որն արգելված չէ:** Դա

հիմնավորված է Ալլահի
առաքյալի (խ.Ա.ռ.ն.) հետևյալ
հրահանգին.

«Լսեք և ենթարկվեք, նույնիսկ
եթե ստրուկը Եթովպիայից լինի
նշանակված (որպես ղեկավար),
մինչ նա գործում է Ալլահի Գրքի
համաձայն»: Մուսլիմ

• Մուսուլմանները
պետք է ենթարկվեն ղեկավարին,
որը գործում է Ղուրանին
համապատասխան, **ինչը**
նշանակում է Ալլահին ենթարկվել:
Ըմբոստության ամեն արարք, որը
հրամայվում է ղեկավարի կողմից,
հանդիսանում է
անենթարկություն:

• Մուսուլման
լիդերներին պետք է անկեղծ
խորհուրդներ տրվեն, որոնք
օգուտ են բերում նրան,
հասարակությանն ու ողջ ազգին:
Մուսուլման ղեկավարը պետք է
հիշի իր պարտավորությունների
մասին և չխախտի իր խոսքը:
Ալլահն ասում է.

«Փափուկ խոսացեք նրա հետ,
հնարավոր է նա կլսի առակը և
կվախենա»: (20:44)

Եվ Մարգարեն ասաց. «Կրոնն է
խորհուրդը»: Մենք հարցրեցինք.
«Ո՞ւմ համար»: Նա ասաց.
«Ճշմարիտ, Ալլահի ու Նրա Գրքի,
և Նրա մարգարեի, և

մուսուլմանների ,
ղեկավարների և նրանց
ժողովրդի համար»:

Հետևորդները պետք է աջակցեն
ղեկավարին ճգնաժամի
ժամանակ: Մուսուլմաններին
հրամայված է հետևել իրենց
ղեկավարին , չլքել նրան և
չընդդիմացնել ժողովրդին նրա
դեմ, **որպեսզի տհաճություններ և
չարիքներ չառաջացնեն:** Դրա
մասին Ալլահի առաքյալն
(**խ.Ա.ո.ն.**) ասել է.

«Եթե մարդ է գալիս ձեր մոտ,
ձգտելով քանդել ձեր միությունը,
երբ միակ ղեկավարն է

ուղղորդում ձեզ, ապա սպանեք նրան»։ Մուսլիմ

2. Ժողովրդի իրավունքները ղեկավարի նկատմամբ

Մուսուլմաններն իսլամական երկրում ունեն որոշ իրավունքներ իրենց ղեկավարության նկատմամբ։ Այդ իրավունքները կարող են շարադրվել հետևյալ կետապով.

Լիակատար արդարություն: Այն ենթադրում է, որ ամեն մարդու պետք է արդար վերաբերմունք ցուցաբերվի իսլամական հասարակություն: Բոլոր անձինք, որոնք հատուկ առավելությունների իրավունք

ունեն, պետք է ապահովված լինեն
դրանցով: Բոլոր մարդիկ, որոնք
կատարում են որոշ
պարտականություններ, արժանի
են արդար ու անարգել
վերաբերմունքի: Մարդկանց միջև
պարտականությունները պետք է
բախշվեն արդար կերպով: Ոչ մի
մարդ, դաս կամ
փոքրամասնություն չպետք է
ունենան որևէ առավելություն
կամ նախապատվություն
մյուսների նկատմամբ: Ալլահն
ասում է փառահեղ Ղուրանում

«Ով հավատացյալներ, վկայելով
Ալլահի դիմաց, պահպանեք
արդարությունը, նույնիսկ եթե
վկայությունը ձեր դեմ լինի կամ

ձեր ծնողների, կամ մտերիմ
բարեկամների: Լինի նա հարուստ
թե աղքատ, Ալլահը նրանց
երկուսին ավելի մոտ է: Մի
հետևեք ցանկություններին,
որպեսզի չհեռանաք
արդարությունից: Եթե դուք
թաքցնեք կամ շեղվեք, ապա
Ալլահը գիտի ձեր արարքների
մասին»: (4:135)

Եվ Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.)
ասել է.

«Դատաստանի Օրը Ալլահի
համար սիրելի ու մոտ է լինելու
արդար ղեկավարը: Եվ Ալլահի
համար ամենաատելին ու
ամենահեռուն է լինելու անարդար

դեկավարն ու բռնապետը»: Տիրմիզի

Ազգային կարծիքի արտահայտում: Մարդիկ իրավունք ունեն ասել իրենց կարծիքը այն հարցերում, որոնք վերաբերվում են տնտեսությանն ու սոցիալական ասպեկտներին: Այդ գործողությունը պետք է իրականանա սովորական տեսքով: Հասարակությանը պետք է հնարավորություն տրվի արտահայտել սեփական կարծիքներն ու մտքերը, որոնք վերաբերվում են իսլամական հասարակությանը: Նման դիտակետները կարող են ընդունված լինել, եթե ծառայում

Էն հասարակության շահերին:
Ալլահն ասում է
փառահեղ Ղուրանում

«Ալլահի խղճով դու մեղմ էիր
նրանց նկատմամբ: Եթե դու
կոպիտ լինեիր ու դաժան, ապա
նրանք անմիջապես կլքեին քեզ:
Ներիր
նրանց, ներողություն խնդրի
նրանց համար և խորհրդակցիր
նրանց հետ գործերի մասին: Երբ
որոշում ընդունես, ապա հույսդ
դիր Ալլահի վրա, քանի որ Ալլահը
սիրում է հույս դնողներին»:
(3:159)

Շատ դեպքերում Ալլահի
առաքյալը հետևում էր իր

ընկերների խորհուրդներին:

Բեդրայի մոտի մարտի ժամանակ
նրա ընկերներից մեկն

առաջարկեց փոխել

մուսուլմանական բանակի

ճամբարի վայրը:

Ճակատամարտի ժամանակ մի

մուսուլման մարզարեին

(**ի.Ա.ռ.ն.**) հարցրեց. «Ով Ալլահի

առաքյալ, սա այն տե՞ղն է, որն

Ալլահը նշել է մեր համար որպես

ճամբար

, թե այն պատերազմական պլա

ն է

և մենք ընտրություն չունենք փ

ոխել այն:

Ալլահի Մարզարեն պատասխան

եց "

Ոչ, այդ իմ պատերազմական ս

տրատեգիան է

:" Տղամարդը , ով հարցրեց առ աջարկեց ." Օ,

Ալլահի Մարգարե , այս նպատակահարմար վայր չէ: Պետք է

ջրհոր գտնել, մեր թշնամիների մոտ գտնվող, և այնտեղ դնել

ճամբարը: Մենք պետք է թաղենք բոլոր մնացած ջրային

ռեսուրսները, այնուհետև

կառուցենք մեր համար: Երբ

մարտը սկսվի մենք մուտք

կունենանք դեպի ջուրը, այնժամ,

երբ մեր թշնամիները չեն ունենա:

Այդպիսով մենք

հնարավորություն կունենանք

ջուր խմել և օգտագործել, իսկ մեր

թշնամիները զրկված կլինեն

դրանից»: Ալլահի առաքյալն

(Խ.Ա.Ռ.Ն.) ասաց. «Դու, անխոսք,
ամենալավ խորհուրդը տվեցիր»:
Իբն Հիշամ

Իսլամական հրահանգները:
Իսլամական ղեկավարի ու
դատական որոշումների համար
հիմնական է հանդիսանում
Շարիաթը՝ Իսլամական
իրավունքը: Մուսուլմանական
պետության սահմանադրությունը
պետք է հիմնավորված լինի
Դուրանի և Սուննայի վրա:
Անձնական կարծիքի համար
չպետք է տեղ լինի, **եթե կա
բնօրինակ տեքստը:** Իսլամական
օրենքը դա իրավական բարդ
համակարգ է, որը նախատեսված
է անձնական և ընտանեկան,

քրեական, ազգային և միջազգային գործերի համար, և համապատասխանում է այդ խնդիրներին, **քանի որ այն հիմնավորված է Ղուրանի և Սուննայի վրա:**

Բաց դռների քաղաքականությունը: Մուսուլման ղեկավարը չպետք է հեռու լինի իր ազգից, չպետք է փոխարինող նշանակի, որը նպատակ կունենա որոշել, **թե ով տեսնի ղեկավարին և ով՝ ոչ:** Դա հիմնավորված է Ալլահի առաքյալի (**խ.Ա.ն.ն.**) հետևյալ հրահանգին.

«Եթե մուսուլմանների ղեկավարը թաքնվում է նրանցից և չի ձգտում բավարարել նրանց պահանջները, ապա Ալլահը չի պատասխանի նման ղեկավարի աղոթքներին Դատաստանի Օրը, ստիպելով նրան տառապել սեփական աղքատությունից ու կարիքավորությունից»:

Աբու Դաուդ

Գթասրտություն մարդկանց նկատմամբ: Մուսուլման ղեկավարը պետք է լինի բարի ու գթասիրտ իր ժողովրդի նկատմամբ, **երբեք չծանրաբեռնվի իր հնարավորություններից ավելին**: Նա պետք է բոլոր հնարավոր եղանակներով

հեշտացնի իր ժողովրդի կյանքը:
 Մուսուլման ղեկավարը մեծ
 մարդուն պետք է վերաբերվի
 այնպես, ինչպես սեփական հորը,
 տղային՝ ինչպես սեփական
 որդուն, **և իր տարեկցին՝ ինչպես
 եղբորը**: Մուսուլման ղեկավարը
 պետք է հարգի ավագներին, լինի
 բարի, գթասիրտ դեպի
 երիտասարդությունը, **և ուշադիր
 լինի իր տարեկիցների
 նկատմամբ**: Սուրբ Ղուրանը
 հաղորդում է Ալլահի առաքյալի
 (խ.Ա.ռ.ն.) անձնական
 հատկանիշների մասին, ով
 առաջին մուսուլման լիդերն էր.

«Ձեզ ձեզանից առաքյալ է
 հայտնվել: Նրա համար ծանր է, որ

դուք տառապում եք: Նա ջանում է
ձեր համար: Նա բարի ու
գթասիրտ է հավատացյալների
նկատմամբ»: (9:128)

Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.) ասել
է.

«Ով բարի ու գթասիրտ է
(ուրիշների նկատմամբ), թող
Ալլահը գթասիրտ ու բարի լինի
նրան: Գթասիրտ եղեք երկրի
մարդկանց նկատմամբ և Ալլահը
կողորմի ձեզ»:

Աբու Դաուդ և Տիրմիզի

Օմար իբն Ալ-Հաթթաբը՝ երկրորդ
մուսուլման խալիֆը, այնքան
անհանգստացած էր իր
պատասխանատվության համար

Ալլահի դիմաց, որ մի անգամ
ասաց. «Երդվում եմ Ալլահով, եթե
ջորին ընկներ Իրաքում, ես
կվախենայի, որ Ալլահը կհարցնի
ինձ այդ մասին (Դատաստանի
Օրը). «Ով Օմար, ինչու՞ դու
ճանապարհ չես կառուցել ջորու
համար»»:

3. Հարևանների իրավունքները

Ալլահն ասում է
փառահեղ Դուրանում

«Երկրպագեք Ալլահին, եւ Նրան
գործընկեր մի տվեք
(երկրպագությունում):

Բարություն արեք ծնողներին,
բարեկամներին, որբերին,
աղքատներին, ձեր բարեկամ-

հարևաններին եւ հարեւաններին,
որոնք ձեր բարեկամները չեն, ձեր
կողքի ընկերներին
(ամուսիններին ու
ճամփորդության հետևորդներին),
ճանապարհորդներին և բոլոր ձեր
աջ ձեռքի տակ եղածներին
(սարուկներին): Ծշմարիտ, Ալլահը
չի սիրում հպարտներին եւ
պարծենկոտներին»: (4:36)

Իսլամը հարևաններին բախշում է
երեք տեսակի.

Հարևան-բարեկամը ունի երեք
իրավունքներ՝ բարեկամի
իրավունք, հարևանի իրավունք և
մուսուլմանի իրավունք:

Հարևան-մուսուլմանը ունի երկու
իրավունքներ՝ հարևանի
իրավունք, **մուսուլմանի
իրավունք:**

Հարևան-ոչ մուսուլմանը ունի մի
իրավունք՝ հարևանի իրավունք:
Աբդուլլա իբն Օմարը մի
անգամ տուն եկավ ու տեսավ, որ
նրա ընտանիքի անդամները մի
ոչխար են մորթել: Նա
անմիջապես հարցրեց.

«Առաջարկե՛լ եք մսի կտոր որպես
նվեր, **մեր հրեա հարևաններին:**
Ես լսել եմ, թե ինչպես Ալլահի
առաքյալն ասել է.

«Ջիբրիլ հրեշտակը շարունակում
էր խորհուրդ տալ ինձ

հարևանների հետ բարի լինել ,
մինչ այն պահը, երբ ես մտածում
էի, որ նա

նրանց ժառանգություն կտա:»

Տիրմիզի

Հարևաններին վնասելը
հակասում է Իսլամին: Մարգարեն
(**ի.Ա.ռ.ն.**) ասել է. «Երդվում եմ
Ալլահով, նա չի հավատում,
երդվում եմ Ալլահով, նա չի
հավատում, երդվում եմ Ալլահով,
նա չի հավատում»: Նրան
հարցրեցին. «Ո՞վ, ով Ալլահի
առաքյալ»: Նա ասաց. «Նա, ում
հարևանը վնաս է կրել նրանից»:
Բուխարի

Ալլահի առաքյալը (խ.Ա.ռ.ն.)
հարևանների իրավունքների
մասին ասել է.

«Դուք գիտե՞ք հարևանի
իրավունքների մասին: (Նրանք
կայանում են հետևյալում), Եթե
հարևանը ձեր կարիքն ունի, **ապա
օգնեք նրան**: Եթե հարևանը
ձեզանից պարտք է ուզում, **ապա
տվեք (եթե ունեք)**: Եթե ձեր
հարևանն աղքատանա, **օգնեք
նրան և անտարբեր մի եղեք
աղքատության նկատմամբ, եթե
կարող եք**: Եթե ձեր հարևանը
հիվանդացել է, **այցելեք նրան
(տեղեկացեք նրա առողջության և
բարեկեցության մասին)**: Եթե ձեր
հարևանը երջանիկ է որոշ

պատճառներով, **ապա շնորհավորեք նրան:** Եթե ձեր հարևանի մոտ դժբախտություն է պատահել, **ցավակցեք նրան:** Եթե ձեր հարևանը մահացել է, գնացեք նրա թաղմանը (**եթե կարող եք**): Ձեր տունը նրա տնից բարձր մի կառուցեք, **որ չփակեք նրա արևնու քամին:** Մի անհանգստացրեք հարևանին սննդի պատրաստման հոտով, եթե չեք պատրաստվում հյուրասիրել նրան

(**պատրաստված սննդով**)»:

Տաբրանի

Նույնիսկ երբ հարևանը վնաս է տալիս, **բարեհամբյուր եղեք:** Մի մարդ դժգոհում էր Աբդուլլա իբն Աբբասին. «Իմ հարևանը վնասում

ու անիծում է ինձ»: Նա ասաց.
«Նա չի կատարում Ալլահի կամքը
ձեր նկատմամբ, այդ պատճառով
գնացեք և արեք Ալլահի կամքը
նրա նկատմամբ»:

4. Ընկերների իրավունքները

Իսլամի համաձայն, [ընկերները
հատուկ իրավունքներ ունեն](#): Դա
հիմնավորված է Ալլահի
առաքյալի (խ.Ա.ռ.ն.) հետևյալ
հրահանգի վրա.

«Ալլահի համար լավագույն
ընկերները նրանք են, ովքեր
լավագույն կերպով են
վերաբերվում իրենց ընկերներին,
և լավագույն հարևանները նրանք
են, ովքեր լավագույն կերպով են

վերաբերվում իրենց
հարևաններին»: Տիրմիզի,
Սահիհ Իբն Խուլզեյմա

5. Հյուրերի իրավունքները

Իսլամի համաձայն տան տերը
պարտավոր է հարգել իր
հյուրերին: Մարգարեն (խ.Ա.ն.ն.)
ասել է.

«Ալլահին և Դատաստանի
Օրվանը հավատացողը հարգում է
իր հարևանին: Եվ Ալլահին ու
Դատաստանի Օրվանը
հավատացողը հարգանք է
ցուցաբերում իր հյուրին և
հարգում է նրա իրավունքները»:

Մի մարդ հարցրեց. «Ով Ալլահի առաքյալ, ի՞նչ է ներառում իր մեջ դա»: Նա պատասխանեց.

«Մի գիշեր և մի ցերեկ, և հյուրասիրություն երեք օրվա ընթացքում, **իսկ ավելինը դա հյուրընկալողի բարեգործությունն է**: Եվ ով հավատում է Ալլահին ու Դատաստանի օրվանը, պետք է բարին ասի կամ լսի»: Բուխարի

Հյուրընկալողը պետք է ջերմ ընդունելություն ցուցաբերի հյուրերին: Հյուրը պետք է ուշադիր լինի տան տիրոջ ունեցվածքի նկատմամբ և ծախսի տակ չզցի նրան, ինչպես մարգարեն (**ի.Ա.ռ.ն.**) է ասել.

«Անթուլյատրելի է եղբոր մոտ
այնքան մնալը, մինչ նրա մեղք
գործելը»:

Մարդիկ հարցրեցին. «Ով Ալլահի
առաքյալ, ինչպե՞ս հյուրը կարող է
տան տիրոջը մեղք գործելու
բերել»: Նա ասաց.

«Հյուրը մնում է այնքան, մինչ
վերջինս ոչինչ չի
ունենում առաջարկելու համար»:
Մուսլիմ

6. Աղքատների և կարիքավորների
իրավունքները

Ալլահը գովում է նրանց, ովքեր
ծախսում են իրենց ունեցվածքից,
որպեսզի օգնեն իսլամական

հասարակությունում ապրող
աղքատներին: Դա նշված է
դուրանի հետևյալ այաթում.

«Որոշները առանցնացնում են
իրենց ունեցվածքի հայտնի մասը
խնդրողների և սին մնացածների
համար»: (70:24-25)

Իրականում Իսլամը
բարեգործությունը դիտարկում է
որպես լավագույն արարքներից
մեկը: Բացի դրանից, Իսլամը
զգուշացնում է իրենց
հարստությունները
թաքցնողներին ու
պահպանողներին, **որ չեն
ծախսում Ալլահի ճանապարհին:**
Ալլահն ասում է.

«Բարեպաշտությունը չի կայանում նրանում, որ ուղղեր ձեր երեսները արևելք ու արևմուտք: Սակայն բարեպաշտություն է Ալլահին, Դատաստանի Օրվանը, Հրեշտակներին, Գրքին, մարգարեներին հավատալը, իր ունեցվածքից տալը՝ բարեկամներին, որբերին, աղքատներին, օտարական ճամփորդներին, խնդրողներին և հանուն ստրուկների ազատման, չնայելով սիրուն դեպի ունեցվածքը»: (2:177)

Աղքատներին չօգնելով հարստություն հավաքողին խիստ պատիժ է սպասվում

Դատաստանի Օրը: Ալլահն ասում է.

«Ուրախացրու նրանց, ովքեր ոսկի ու արծաթ են հավաքում ու չեն ծախում Ալլահի ճանապարհին, տանջող տառապանքներով»: (9:34)

Այդ պատճառով զաքյաթը նախատեսված էր որպես Իսլամի հիմնական հիմունքներից մեկը: Չաքյաթը կազմում է տարվա հավաքած գումարի 2,5 տոկոսը: Մուսուլմանները հանույթով վճարում են այդ գումարը, կատարելով Ալլահի հրամանը: Նրանք վճարում են աղքատներին ու կարիքավորներին: Չաքյաթը

պարտադիր է այն անձանց համար, որոնք ունեն նման գումարներ: Ալլահն ասում է.

«Չէ որ նրանց հրամայված էր ընդամենը երկրպագել Ալլահին, անկեղծորեն ծառայելով նրան, որպես միաստվածների աղոթել ու զարթաթ վճարել: Դա ճշմարիտ հավատ է»: (98:5)

Չարքաթը հիմնավորվում է հետևյալ պայմաններին ու սկզբունքներին.

1. Չարքաթ վճարող մարդը պետք է ունենա «նիսաբա» (համապատասխան գումար, որը նախատեսված է իսլամական շարիաթով):

2. Պետք է անցնի մի տարի, **մինչ նա ունի այդ գումարը**: Եթե տարուց քիչ ժամանակ անցնի, **ապա զաքյաթը չի պահանջվի**:

Իսլամը որոշում է մարդկանց, **որոնք իրավունք ունեն գումար ստանալ զաքյաթից**: Դա ասված է **Ղուրանում**.

«Չոհարերությունները խեղճերի ու աղքատների համար են՝ նրանց համար, ովքեր զբաղվում են հավաքով ու ցրումով, և նրանց համար՝ ում սրտերն ուզում են գերել ստրուկ գնելու համար, պարտք ունեցողների համար, **Ալլահի ճանապարհի ծախսերի և ճանապարհորդների համար**»:

Այդպիսինն է Ալլահի հրահանգը:
Ճշմարիտ, Ալլահն իմացող ու
իմաստուն է» (9:60):

Իսլամը ստիպում է զաքյաթ
վճարել, որպեսզի վերացնի
աղքատությունը իսլամական
հասարակությունում,
աղքատության հետ կապված
խնդիրներ լուծի, ինչպիսիք են՝
գողությունները,
սպանությունները, մարդկանց և
ունեցվածքի վրա
հարձակումները: Չաքյաթի
վճարումը խթանում է իսլամական
հասարակության տարբեր
մասերի համագործակցությունը:
Բացի դրանից զաքյաթն
օգտագործվում է

կարիքավորների կարիքները
հոգալու համար: Չաքյաթի
վճարումը մաքրում է սիրտը,
հոգին, բացի դրանից
հարուստներն ավելի քիչ եսասեր
ու ժլատ են դառնում, **երբ
վճարում են մաքուր սրտով:**
Ալլահն ասում
է փառահեղ Ղուրանում

«Վախեցեք Ալլահից ձեր
հնարավորությունների չափ և
ծախսեք ձեր իսկ օգտին: Իսկ
սեփական ժլատությունից հեռու
մնացողները հաջողակներն են»:
(64:16)

Չաքյաթը մաքրում է նրանց
սրտերը, ովքեր ավելի

ապահովված են, քանի որ նրանք
ավելի քիչ ասելուօրջուն,
նախանձուօրջուն ու չարը
ցանկացող մտքեր կլինեն նրանց
նկատմամբ քանի որ նրանք վճ
արում են իրենց պարտքը :

Ալլահը զգուշացնում է, որ
զաքյաթ վճարելուց հրաժարվելը
մեծ մեղք է, ասելով.

«Թող չմտածեն ժլատները,
ծախսել այն՝ ինչն Ալլահը նվիրել է
նրանց Իր գթասրտությանբ, որ
այդպես գործելը նրանց օգուտ
կրերի: Հակառակը՝ դա վնաս է
նրանց: Դատաստանի Օրը նրանց
պարանոցները փաթաթված են
լինելու այնինչով, որ նրանք

ցանկանում էին: Ալլահին է պատկանում երկնքի և երկրի ժառանգությունը, և Ալլահը գիտի ձեր արարքների մասին»: (3:180)

7. Աշխատողների իրավունքները

Իսլամը աշխատողների վերաբերյալ որոշ պայմաններ է որոշել: Գործատուն, Իսլամի համաձայն, պետք է արդար վերաբերմունք ցուցաբերի իր աշխատողներին: Նման հարաբերությունները պետք է հիմնավորված լինեն հավասարության, բարյացակամության և եղբայրության վրա: Դա ասված է

Ալլահի առաքյալի (խ.Ա.ռ.ն.)
հետևյալ հադիսում.

«Ձեր աշխատողներն ու
ստրուկները ձեր եղբայրներն են,
որոնք գտնվում են ձեր
ենթակայության տակ:

Ենթակայության տակ ունեցող
որևէ մեկը պետք է կերակրի նրան
այնինչով, ինչը ինքն է ուտում,
ծածկի այնինչով, ինչ նա է կրում,
և չպետք է նրան ծանրաբեռնի
հրա հնարավորություններից վեր:
Սակայն եթե դուք ծանրաբեռնում
եք նրանց, ապա հետո օգնեք
նրանց»: Բուխարի

Բացի դրանից Իսլամը
պաշտպանում է աշխատողների

պատիվն ու
արժանապատվությունը: Ալլահի
առաքյալն (խ.Ա.ո.ն.) ասել է.

«Լավագույն եկամուտն այն
եկամուտն է, որը արդար
քրտինքով է վաստակած»:
Մուսնադ Ահմադ

Նաև Իսլամը պահանջում է, որ
գործատուն հայտարարի
աշխատավարձը, մինչ
աշխատանքային
համաձայնությունը:
Բեյհակի և Աբդուլ Ռազակ ին
ալ- Մուսանաֆ

Ալլահի առաքյալը (խ.Ա.ո.ն.)
որոշել է աշխատողի

աշխատավարձը, որը նա
ստանալու է: Նա ասել է.

«Դատաստանի Օրը ես երեք
տեսակի մարդկանց դեմ եմ
լինելու՝ իմ անուևով սուտ
երդրվացողի, աղքատին
ստրկացնողի ու գնի մեջ
հարստացողի, և աշխատողին
օրինական վճարը չտվողի»:
Բուխարի

Ալլահի առաքյալը (խ.Ա.ն.ն.)
հանձնարարել է գործատուներին
վճարել աշխատողների
աշխատավարձը, մինչ
վերջիններիս քրտինքը չորանալը:
Իբն Մաջահ

8. Գործատուների իրավունքները

Իսլամը պահանջում է
աշխատողներին լավ
հարաբերություններ ունենալ
գործատուների հետ: Իսլամը
պահանջում է աշխատողներից
կատարել իրենց
պարտականությունները,
սեփական հնարավորությունների
չափով: Աշխատողները չպետք է
վնասեն կամ չարաշահեն իրենց
գործատուներին: Ալլահի
առաքյալն (խ.Ա.ռ.ն.) ասել է.

«Ալլահը սիրում է աշխատողին,
որը ձգտում է կատարելությանը
իր գործում»: Աբու Յալա,
Բայհակի

Աշխատանքի տարածման և
աշխատողների
արժանապատվության
պահպանության նպատակով,
իսլամը ծանր գործ ունեցողների
աշխատավարձը եկամտաբեր է
արել, **եթե նրանք ջանասեր են
սեփական գործում: Մարգարեն
(ի.Ա.ռ.ն.)** ասել է.

«Լավագույն եկամուտը դա ձեռքի
աշխատանքով և անկեղծ սրտով
ձեռք բերվածն է»: Ահմեդ

9. Կենդանիների իրավունքները

Բոլոր տնային կենդանիները
պետք է լինեն կուշտ, մշակված, **և
պետք է մեղմ վերաբերվել նրանց:**

Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.) ասել է.

«Մի կին Դժողք գնաց, քանի որ նա փակված էր պահել մի կատվի, ու չէր կերակրել նրան ոչ էլ թողել ջուր խմել , ոչ էլ թողել էր սնվել գետնի մ իջատներով:»: Բուխարի և Մուսլիմ

Կենդանիները չպետք է ծանրաբեռնված լինեն ապրանքի փոխադրումով այնպես, որ չկարողանան տանել այն: Կենդանիները չպետք է տանջանքների ենթարկվեն, նրանց չպետք է վնաս հասցվի ոչ

մի դեպքում: Ալլահի առաքյալն
(**ի.Ա.ռ.ն.**) ասել է.

«Ալլահն անիծում է մարդուն, որը
կենդանիներին վառելով
պիտակավորում է»: Բուխարի և
Մուսլիմ

Իսլամն արգելում է մարդկանց
կենդանիներին որպես շարժվող
թիրախներ ընդունել: Հաղորդվում
է, որ իբն Օմարի կողքով
երիտասարդ քուրայշիտների մի
խումբ էր անցնում, **որոնք**
կրակում էին թռչունների վրա:
Իբն Օմարը հարցրեց
այդ կազմակերպիչի մասին, իսկ
հետո նշեց.

«Ալլահին անհիծում է այն մարդուն,
որն անում է դա»:

Բուխարի և Մուսլիմ

Իսլամը մեղավոր է ճանաչում այն
մարդկանց, որոնք ծեծում են
կենդանիներին սպանելուց հետո:
Բուխարի

Իսլամը նաև արգելում է վնասել
կենդանիներին, ինչպես նշված է
հադիսում, որը հադորդվել է իբն
Մասուդից. «Մենք
ճանապարհորդում էինք Ալլահի
առաքյալի հետ: Նա հեռացավ, որ
պատասխանի բնության կոչին:
Մինչ նա բացակայում էր, մենք մի
թռչուն տեսանք նրա երկու
ձագերով: Մենք վերցրեցինք

ձագերին, ինչի պատճառով մայրը սկսեց թռնել մեր շուրջ: Երբ Ալլահի առաքյալը վերադարձավ, ուշադրություն դարձրեց մեր արածի վրա, և ասաց.

«Ով անհանգստացրել է (թռչունին), վերցնելով նրա երեխաներին, թող վերադարձնի նրան նրա երեխաներին»: Եվ մրջյունների մի կույտ տեսավ, որը այրել էին, ինչին ասաց. «Ո՞վ է այրել»: Մենք պատասխանեցինք. «Մենք»: Նա ասաց. «Ճշմարիտ, ոչ ոք չպետք է տանջի կրակով բացի Կրակի Տիրոջից»: Աբու Դաուդ

Իսլամը, բացի դրանից, հրահանգում է լինել գթասիրտ,

Երբ կենդանուն մորթում են սննդի համար: Չի թուլյատրվում դանակը սրել կենդանու դիմաց, որը պատրաստելու են սննդի համար: Նաև չի թուլյատրվում սպանել նրանց, կոտրելով նրանց վիզը, էլեկտրականությամբ և այլն, կամ սկսել մաշկը հանելը մինչ կենդանու լիովին մահանալը: Մարգարեն (ի.Ա.ո.ն.) ասել է.

«Ճշմարիտ, Ալլահը հրամայում է, որ դուք բարի լինեք ամեն ինչի նկատմամբ: Այդ պատճառով, եթե սպանում եք, ապա սպանեք լավ միջոցով, և եթե մորթում եք, ապա մորթեք լավ: Ուրեմն սրեք ձեր դանակը, որ անեք դա հեշտ ու արագ»: Մուսլիմ

Իսլամը հրամայում է մեզ սպանել վտանգավոր ու վնասակար կենդանիներին, որպեսզի պաշտպանենք մարդկանց դրանցից, քանի որ Ալլահի համար մարդու կյանքը սուրբ է, **քանի որ նա մեզ պատվավոր արարած է ստեղծել երկրի վրա:** Այդ պատճառով, եթե կենդանիների իրավունքները մեծ նշանակություն ունեն Ալլահի համար, **սպա մարդունը ավելին է:** Ալլահն ասում է փառահեղ Ղուրանում

«Մենք գնահատեցինք Ադամի որդիներին և թուլլատրեցինք շարժվել երկրով և ջրով, բարիքներով օժտեցինք նրանց և

մեծ առավելություն տվեցինք
մյուս արարածների նկատմամբ»:
(17:70)

Բարությունն ու արդար
վերաբերմունքը կենդանիների
նկատմամբ ներդրված են ոչ միայն
կենդանու պաշտպանության
համար, այն նաև լվանում է
մուսուլմանի մեղքերը, **և դրա
միջոցով նա կարող է Դրախտ
գնալ: Ալլահի առաքյալն (խ.Ա.ո.ն.)
ասել է.**

«Մի մարդ ճանփորդության
ընթացքում տանջվում էր
ծարավից: Նա մի ջրհոր գտավ և
իջավ այնտեղ, որ ջուր խմի, իսկ
երբ դուրս եկավ, մի շուն տեսավ,

որը ծարավից լիզում էր խոնավ հողը: Նա մտածեց. «Այս շունը տանջվում է ծարավից, ինչպես ես էի տանջվում»: Նա կրկին իջավ այնտեղ, կոշիկի մեջ ջուր լցրեց ու տվեց շանը, **որ խմի**: Ալլահը գոհ եղավ նրա արարքից և ներեց նրա մեղքերը »: Մարդիկ հարցրեցին. «Ով Ալլահի առաքյալ, մենք պարզևատրվելու՞ ենք կենդանիներին բարիք տալու համար»: Նա պատասխանեց. «Այո, Ամեն հոգու համար պարզև կա»: Բուխարի

10. Բուլխերի և ծառերի իրավունքները

Իսլամը թույլատրվում է օգտվել ծառերի բերքից, սակայն արգելում է կտրել դրանց, **առանց հարգելի պատճառի**: Իսլամը հրահանգում է պահպանել ծառերը և կոչ է անում շատացնել դրանք, **ամեն հնարավոր միջոցով**: Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.) ասել է.

«Եթե ձեզանից մեկը, որը պահում է արմավենու սերմացու, Դատաստանի Օրը, թող տնկի այն մինչ դատաստանի առջև կանգնելը»: Մուսնադ Ահմադ

Իսլամը ծառատունկը ընդունում է որպես բարեգործություն, **որի համար պարգևատրվում են**:

Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.) ասել է.

«Եթե մուսուլմանը տնկում է կամ հետևում է այն բույսին կամ ծառին, որից կարող են օգտվել թռչունները, մարդիկ կամ այլ կենդանիներ, ապա նրան պարգև է տրվելու այդ բարեգործության համար»: Մուսլիմ

11. Այլ իրավունքներ

Իսլամը ճամփորդության և հանրային վայրերի համար հատուկ կանոններ է ընդունել: Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.) ասել է.

«Մի նստեք ճանապարհների եզրերին»:

Այդ ժամանակ նրա հետևորդներն ասացին. «Ով Ալլահի առաքյալ, ճանապարհի եզրը մեր համար ամենահաճելի վայրն է նստելու, հանդյանալու ու զրուցելու համար»: Լսելով դա նա ասաց. «Եթե չեք կարող չանել դա, ապա հարգեք նրանց իրավունքները»: Նրանք հարցրեցին. «Ով Ալլահի առաքյալ, եզրերը ի՞նչ իրավունքներ ունեն»: Նա պատասխանեց. «Խոնարհեք հայցաքը (երբ կին է անցնում), մաքրեք վնասակար իրերից, ասեք սալամ (ողջույն), ինչը շատացնում

Է բարին ու քչացնում է չարիքը»:
Բուխարի և Մուսլիմ

Ալլահի առաքյալը (խ.Ա.ռ.ն.) նաև
ասել է. «Ճանապարհների վրայից
ավելորդ իրերը հավաքելը
բարեգործություն է (որը
պարգևատրվելու և գնահատվելու
է Ալլահի կողմից)»: Բուխարի

Բացի դրանից Ալլահի առաքյալը
(խ.Ա.ռ.ն.) նախագուշացրեց.
«Վախեցեք երկու գործերից,
որոնք կարող են անեծքի
պատճառ դառնալ»: Ներկա
հետևորդները հարցրեցին. «Ով
Ալլահի առաքյալ, այդ ինչ գործեր
են, որոնց համար կարելի է
անիծվել»: Նա պատասխանեց. «

Անհիծված է լինելու այն մարդը,
որը հոգում է բնական կարիքները
հանրային վայրերում և
շվաքի տակ, որտեղ մարդիկ
կարող են ապաստան գտնել»:
Մուսլիմ

Հիմնականում Իսլամը ստիպում է
մուսուլմաններին լինել ուշադիր
ու հոգատար իրար նկատմամբ,
անկախ գտնվելու վայրից:
Մարգարեն (խ.Ա.ն.ն.) ասել է.

«Հավատացյալների օրինակ սիրո,
կապվածության,
համագործակցության և
կարեկցանքի մեջ կարող է
ծառայել մեր մարմինը: Եթե
մարմնի մի օրգան ցավում է, ապա

ողջ մարմինը աջակցելու է դրան
անքնությամբ ու բարձր
ջերմությամբ»: Բուխարի

Եվ նա հրամայեց աշխատել,
հանուն եղբայրների իրավիճակի
բարելավման.

«Ձեզանից ոչ ոք իրական
հավատացյալ չէ, մինչ մուսուլման
եղբորը սիրելն այնպես , ինչպես
ինքն իրեն է սիրում»: Բուխարի

Կարևոր է հիշել, որ մարգարեն
(խ.Ա.ո.ն.) ասել է.

«Հավատացյալներն իրար համար
նման են մի
շինության աջակցելով մեկը

մյուսին »: Այնուհետև մատերն
իրար սեղմեց: Բուխարի

Մուսուլմաններին արգելված է
իրար դժվար կացության մեջ
թողնել, ինչպես մարգարեն
([Խ.Ա.ռ.ն.](#)) է ասել.

«Ով չի աջակցում մուսուլմանին,
երբ ոտնահարում են նրա սուրբ
իրավունքներն ու ցածրացնում են
նրա պատիվը, Ալլահը թողնում է
նրան, [երբ նրա պահանջում է](#)
[Նրա օգնությունը](#)

:Ոչ ոք չի օգնում մուսուլմանին ,
երբ նրա պատիվը վնասված է
և իրավունքները ոտնահարված
, բացի Ալլահից

, երբ նա ունի Նրա օգնության կարիքը :» Աբու Դաուդ

Այնուամենայնիվ, եթե այդ կանոններն ու իրավունքները հանդիսանում են անօրինական, ապա նրանք այդպես էլ կմնան մարդկանց պատկերացումների մեջ: Եթե չկան օրինական հիմքեր, ապա դրանք կմնան ընդամենը անիրական իդեալներ:

Ալլահի առաքյալն (խ.Ա.ո.ն.) ասել է.

«Դուք պետք է կանգնեցնեք տգետ մարդուն չարիքից: Դուք նման տգետ մարդուն պետք է ստիպեք բարին գործել, իսկ հակառակ դեպքում,

Թող Ալլահը չուշացնի ձեր պատիժը»: Աբու Դաուդ

Այսպիսով, Ալլահը, որպեսզի պահպանի և պաշտպանի մարդու իրավունքները իսլամական հասարակությունում, տվեց Իր առաքյալին (խ.Ա.ռ.ն.) համապատասխան պատվիրանները: Ալլահը հրամայում է դուրս չգալ թույլատրվածի սահմաններից և պատիժ է վերադրում, որոնք հայտնի են որպես խուդուդ (սահմանված պատիժներ): Նա կարող է նաև հատուկ պատիժ սահմանել հաջորդ կյանքի համար:

Մենք կնշենք որոշ կանոններ
« կարելիների » և
«չի կարելիների», որոնք
սահմանել է Իսլամը.

Իսլամն արգելում է
մարասպանությունը: Իսլամը
նման գործը որակավորում է
որպես հիմնական մեղքերից մեկը:
Դա ստում է Ղուրանը.

«Մի՛ սպանեք ոգին, որի
սպանությունը արգելել է Ալլահը,
եթե չունեք դրա իրավունքը Եվ
, եթե մեկը արել է այդ սխալմա
մբ ,
Մենք տվել ենք նրա ժառանգնե
րին իշխանություն
, պահանջել քիսաս, կամ ներել :

Բայց

, թող նա չհարաշահի կյանքը վե
րցնելու կապերը
, քանի որ նրան օգնում է օրեն
քը»: (17:33)

Իսլամն արգելում է մարդկանց
պատվի, արժանապատվության
ու անձնական կյանքի դեմ բոլոր
գործողությունները: Իրականում
նման գործողությունները հայտնի
են որպես մեծ մեղքեր: Ալլահն
ասում է փառահեղ Ղուրանում

«Ասա. Օ, Մուհամեդ «Եկեք ձեզ
կարդամ այն, ինչ արգելել է ձեզ
ձեր Տերը. Մի՛ կապեք Նրան ոչնչի
հետ, վերաբերվեք ձեր ծնողներին
լավագու՛յն կերպով՝ լի

բարությամբ, մի սպանեք ձեր
երեխաներին, վախենալով
աղքատությունից, **քանի որ Մենք
կապահովենք ձեր և ձեր
երեխաներին սննդով: Մի
մոտեցեք Ալ-Ֆաուախիսին (
նոխկալի արարքներին), ոչ
բացահայտ, ոչ էլ թաքուն, մի
սպանեք ոչ մի հոգի (բացի այն
դեպքից, երբ դա մի անհավատ է և
հարձակում է մուսուլմանների
վրա), եթե դրա իրավունքը չունեք
(եթե չի
պահանջում արդարությունը):
Դա ձեզ պարտադրել է Ալլահը,
միգուցե դուք հասկանաք»:
(6:151)**

Բացի դրանից, Իսլամն արգելում է այն գործերը որոնք որակավորվում են որպես անոթալի, կամ այն գործերը, որոնք ընդունելի չեն հասարակության համար:

Այդպիսով անընդունելի պահվածքի բերող բոլոր գործողությունները նույնպես արգելված են Իսլամում: Ալլահն ասում է փառահեղ Ղուրանում

«Եվ չնոտենաս միխիային քանի որ այն Փախիսա (մեծ մեղք ու տհաճ արարք) է և մի անոթալի ճանապարհ (որ դժոխք է տանում)» (17:32)

Ալլահին արգելում է բոլոր տեսակի ազրեսիաները այլերի ունեցվածքի դեմ: Այդպիսով, գողության ու խաբեբայության բոլոր տեսակներն արգելված են Իսլամում: Այդ մասին ասվում է հետևյալ հադիսում.

«Յուրաքանչյուր մեզ խաբողը մեզանից չի»: Մուսլիմ

Տոկոսով պարտք տալն ու նման գործերն արգելված են Իսլամում, ի դեմ անարդարության, որը նրանք տարածում են տնտեսական համակարգում և վնասում աղքատներին: Ալլահն ասում է փառահեղ Ղուրանում

«Դա, քանի որ նրանք ասում էին.
«Ճշմարիտ, առևտուրը նման է
վաշխառությանը»: Սակայն
Ալլահը թույլատրել է առևտուրը և
արգելել է վաշխառությունը»:
(2:275)

Ալլահն արգելում է
խաբերայության և
դավանանության բոլոր
տեսակները: Ալլահն ասում է
փառահեղ Դուրանում

«Ով հավատացյալներ, մի
դավանանեք Ալլահին ու
առաքյալին և ձեզ վստահված
ունեցվածքը մի իլեք
մտադրորեն»: (8:27)

Իսլամն արգելում է մենաշնորհը:
Ալլահի առաքյալն (խ.Ա.ո.ն.) ասել է.

«Ոչ ոք չի մենաշնորհում, բացի
օրինախախտից»:Մուսլիմ

Իսլամն արգելում է
կաշառակերության բոլոր
տեսակները: Ալլահի առաքյալն
ասել է.

«Թող Ալլահն անիծի կաշառք
տվողներին ու վերցնողներին»:
Աբու Դաուդ և Տիրմիզի

Նման արգելումներ դրված են
անօրինական միջոցների վրա,
որոնց օգնությամբ գումար են

ստանում: Ալլահն ասում է
փառահեղ Ղուրանում

«Եվ անարդարորեն մի խժոռք
ուրիշի ունեցվածքը և մի
օգտագործեք դա, որ կաշառեք
կառավարիչներին կամ
դատավորներին, որպեսզի խժոռք
մարդկանց ունեցվածքի որևէ
մասը, մտածված և անարդար
կերպով»: (2:188)

Իսլամը դատապարտում է
իշխանության չարաշահումը:
Իրականում Իսլամը թույլատրում
է ղեկավարին վերադարձնել
գումարը, որը վերցվել է
անարդարությանը և ներդնել
իսլամական բյուջե: Ալլահի

առաքյալը (ի.Ա.ն.ն.) նշանակեց
 Իբն-նեյ, **Լիուտփահին զաքյաթ
 հավաքող**: Երբ նա բերեց
 հավաքած զաքյաթը, ասաց. «Սա
 ձեր համար է, իսկ սա ինձ որպես
 նվեր է տրվել»: Ալլահի առաքյալը
 (ի.Ա.ն.ն.) շատ զայրացավ, լսելով
 դա, և ասաց.

«Եթե նա նստեր իր հոր կամ մոր
 տանը, **կատանա՞ր այդ նվերներից
 որևէ մեկը**: Երդվում եմ Նրանով,
 Ում ձեռքերում իմ կյանքն է, ոչ ոք
 սրանից ոչինչ չի ստանա, բացի
 նրանից, ով կրելու է դա
 պարանոցին Դատաստանի Օրը,
 նույնիսկ եթե դա ուղտ է»:
 Այնուհետև նա բարձրացրեց
 ձեռքերն այնպես, որ մենք

տեսանք նրա ուսատակերի
սպիտակուրթունքը, և ասաց. «Ով
Ալլահ, վկայում եմ, որ ես երեք
անգամ փոխանցել եմ ուղերձը»:
Բուխարի և Մուսլիմ

Իսլամն արգելում է ակոհոլային
ընպելիքները: Ալլահն ասում է.

«Ով դուք, **որ հավատում եք:**
Ճշմարիտ, Ալկոհոլը,
վիճակահանական խաղերը, Ալ-
Անսարները (**Քաարայի մոտ**
գտնվող քարերը, որ
բազմաստվածները սուրբ էին
համարում և նրանց մոտ
կենդանիներ էին զոհաբերում) և
Ալ-Ալզամը (գուշակության երեք
աշեշներից քաշելը հետագայի

համար, որոշում ընդունելու համար) Սատանայի գործի նոխակալի մեղքեր են: Այդպիսով հեռու մնացեք դրանցից, գուցե և հաջողվեք» (5:90)

Մարդուն կամ կենդանուն վնասելն այսինքն ծեծը , բամբասելը , սուտ վկայությունը և այլն արգելված է: Ալլահն զգուշացնում է փառահեղ Ղուր անում

«Ով հավատացյալներ, հեռու մնացեք ամեն տեսակի ենթադրություններից, քանի որ որոշ ենթադրություններ մեղսալի կլինեն: Մի հետևեք իրար և մի

բամբաստք իրար հետևից: Մի՞թե
ձեզանից որևէ մեկին դուրեկան
կլինի ուտել սեփական
հանգուցյալ եղբոր միսը, եթե դուք
զգվանք եք զգում դրա
նկատմամբ: Վախեցե՛ք Ալլահից:
Ճշմարիտ, Ալլահը մեղանչություն
ընդունող և գթասիրտ է»: (49:12)

Իսլամը պահպանում և
պաշտպանում է այլերի պատիվն
ու արժանապատվությունն ու
արգելում է զրպարտությունը:
Ալլահն ասում է.

«Իսկ նրանք՝ ովքեր
անարդարորեն կցածրացնեն
(խոսքերով կամ արարքներով)
հավատացյալ տղամարդկանց ու

կանանց, ապա վերցնում են
հրանց վրա ամենավատ
ստորացումը և մի բացահայտ
մեղք»: (33:58)

Իսլամում ավելի մեծ
ուշադրություն է դարձվում
մարդու անձնական գործերին, և
ամեն տեսակի միջամտությունն
արգելված է: Ալլահն ասում է.

«Ով հավատացյալներ, մի մտեք
ուրիշների տները, մինչ
թույլատրություն
խնդրելն, եթե ձեզ ասվի վերադ
առնալ, ապա վերադարձեք ու
նրանց խաղաղությամբ ողջունեք:
Դա ավելի լավ է ձեր համար: »
(24:27)

Արդարադատությունը
հանդիսանում է Իսլամի հիմքերից
մեկը: Թույլատրելի
չէ անարդար լինել որևէ մեկի ն
կատմամբ ,
նույնիսկ սեփական անձի
:Ալլահն ասում է.

«Ալլահը հրամայում է Ալ-Ադլ
(արդարություն) և Ալ-Իհսան
(Ալլահի դիմաց ծառայության
կատարում լավագույն ձևով) և
Իտա-դի Էլ-Կոռբա
(բարեկամներին իրենց
իրավունքները տալ, նրանց լավ
վերաբերվելով ու սերտ կապեր
պահպանելով) և արգելում է Ալ-
Ֆախսա (ամեն լոխկալի արարք)
և Ալ-Մունկառ (ամեն ինչ, որ

արգելվում է Իսլամական Օրենքի կողմից) և Ալ-Բազի (վատ վարվելու և անարդարության ամեն տեսակ): Ձեզ պատվիրում է, որ լրջորեն ի նկատի ունենաք: Հավատարիմ եղեք Ալլահի պատվիրաններին, մի խախտեք երդումները, քանի որ դուք Ալլահով եք երդվացել: Ճշմարիտ, Ալլահը գիտի ձեր արարքների մասին»: (16:90-91)

Բացի դրանից, համաձայն Քուրսի հադիսի, Ալլահն ասում է.

«Ով իմ ստրուկներ, Ես արգելել եմ Իմ հանդեպ անարդարությունը: Ես անօրինական եմ հայտարարել ձեր միջև անարդարությունը: Այդ

պատճառով իրար հանդեպ
անարդար գործեր մի արեք»:
Մուսլիմ

Ալլահը չի թույլատրում
անարդարությունը նույնիսկ
նրանց, **ովքերն մուսուլմաններից
տարբերվում են հավատով ու
կրոնով**: Ալլահը մուսուլմաններից
պահանջում է բարի ու արդար
լինել իսլամական պետությունում
ապրող ոչ մուսուլմանների հետ:
Ալլահն ասում է.

«Ալլահը չի արգելում ձեզ լինել
բարի և արդար նրանց հետ՝ ովքեր
չեն պատերազմում ձեր դեմ կրոնի
պատճառով և ձեզ չեն արստրում
ձեր օջախներից: Քանի որ,

Ալլահը սիրում է արդարներին»:
(60:8)

Իսլամն արգելում է վիրավորել ոչ
մուսուլմանների
համոզմունքները, երբ դա կարող
է դառնալ պատասխան
վիրավորանքների պատճառ:
Ալլահն ասում է.

«Մի վիրավորեք նրանց, ում
նրանք երկրպագում են Ալլահի
հետ միաժամանակ, այլապես
նրանք կսկսեն Ալլահին
վիրավորել, ելնելով
թշնամությունից ու
տգիտությունից: » (6:108)

Դրա փոխարեն Ալլահը հրամայեց
մուսուլմաններին քաղաքավարի

երկխոսություն տանել նման
մարդկանց հետ: Ալլահն ասում է.

« Ասա. **Ով Գրի մարդիկ: Եկեք**
միանանք մեր եւ ձեզ համար մեկ
խոսքի շուրջ, այն մասին, որ մենք
չենք երկրպագի ոչ մեկին, բացի
Ալլահից, չենք ընդհանրացնի նրա
հետ այլ նմանակների ե չենք
ընդունի միմյանց որպես տեր,
Ալլահի հետ մեկտեղ»: Եթե նրանք
մերժեն, ապա ասաք. «Վկայեցեք,
որ մենք մուսուլման ենք»: (3:64)

Իսլամն արգելում է սոցիալական,
քաղաքական ու կամային ամեն
տեսակի վիրավորանքներն ու
վնասները: Ալլահն ասում է.

«Մի տարածեք
անարդարությունը երկրի վրա
այն բանից հետո, երբ այն կարգի է
բերված: Կոչ արեք Նրան վախով
ու հույսով: Ճշմարիտ, Ալլահի
զթությունը մոտ է
բարեգործներին»: (7:56)

Իսլամն արգելում է ոչ
մուսուլմաններին բռնությամբ
դեպի Իսլամ կոչել: Ալլահն ասում
է.

«Եթե քո Աստվածը ցանկանար,
ապա երկրի վրա բոլորը
կհավատային: Մի՞թե դու
մարդկանց կատիպեիր
հավատացյալ դառնալ»: (10:99)

Դա չի նշանակում, որ մուսուլմանները չպետք է մյուսներին Իսլամ կոչ անեն, սակայն հրահանգում է անել դա բարի ու գթասիրտ կերպով: Իսլամը կատարում է միջազգային ուղերձ, և չունի տարածքային կամ ռասսայական սահմանափակումներ: Սակայն ուղղորդումը Ալլահի ձեռքում է, այլ ոչ թե մարդկանց :

Իսլամը մարդկանց հրահանգում է խորհրդակցել իրենց ղեկավարի հետ: Խորհրդի սկզբունքը գործում է այն դեպքերում, երբ չկան Ղուրանում համապատասխան հրահանգներ:

Ալլահին ասում է փառահեղ
Ղուրանում

« ... իրար մեջ խորհրդակցում են
գործերի մասին ...» (42:38)

Իսլամը պնդում է, որ
իրավունքները տրվում են
արժանի մարդկանց: Իսլամը նաև
կոչ է անում դեպի լիակատար
արդարության: Ալլահին ասում
է փառահեղ Ղուրանում

«Ճշմարիտ, Ալլահը հրամայում է
մեզ արդարությամբ
վերադարձնենք պահպանության
համար վստահված ունեցվածքը
դրա տիրոջը, երբ դուք դատում եք
մարդկանց: Ինչ հոյակապ է այն՝
ինչի մասին տեղեկացնում է

Ալլահը: Ճշմարիտ, Ալլահը լսող և տեսնող է»: (4:58)

Իսլամը հրահանգում է մարդկանց օգնել ճնշվածներին, նույնիսկ ուժի կիրառությամբ, **անհրաժեշտության դեպքում**: Այդ մասին ասվում է Ղուրանի հետևյալ այսաթում.

«Եվ ինչու՞ չկռվեք Ալլահի ճանապարհին, հանուն անբաժին մնացած տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք ասում են. «Աստված մեր, հանիր մեզ այս քաղաքից, **որի բնակիչները ճնշողներ են**: Ընծայիր մեզ Քեզանից մի խնամակալի և պաշտպանի

և բարձրացրու մեզանից ,
Քեզանից մեկին , ով կօզնի »:
(4:75)

Իսլամը սահմանում է գործադիր համակարգ կամ իշխանության օրգաններ, **հանումն ընդհանուր շահի**: Քանի որ կան որոշ մարդիկ, որոնք երբեք օրենքին չեն ենթարկվելու առանց ուժի գործադրման ընդդեմ նրանց հանցավոր գործունեությանը, **այդ համակարգն աշխատում է որպեսզի երաշխավորի մարդկանց իրենց իրավունքներից օգտվելը**: Այն նաև աշխատում է այդ իրավունքների վերահսկման և կանոնավորման համար, որպեսզի կանխարգելի ամեն

տեսակի ազրեսիա, և կիրառի
համապատասխան պատիժները
օրինախախտների նկատմամբ:
Ավելի ներքև մեջբերվում է
իսլամական համակարգերի
համառոտ ծանոթացում, որոնք
հանդիսանում են կառավարական
ընդհանուր համակարգի
մասնիկներ:

Գատական համակարգը Իսլամում

Գատական իշխանությունը
հանդիսանում է անկախ
վարչական համակարգ
իսլամական ղեկավարությունում:
Այն նախատեսված է իրավական
ամեն տեսակի վեճերի լուծման

համար: Համակարգը կառուցված է այնպես, որ ապահովի արդարությունը մարդկանց մեջ, **դադարեցնի ճնշումներն ու պատժի ճնշողներին:** Իսլամական համակարգը հետևում է Գուրանից և Սուրնայից Ալլահի ու մարգարեի (խ.Ա.ո.ն.) հրահանգներին:

Կան որոշ դասակարգումներ դատավորի համար, **որը հավակնում է իսլամական դատական համակարգում մի պաշտոնի համար:** Հավակնորդը պետք է լինի հասուն, հոգեպես առողջ մարդ, ունակ լինի հաղթահարել խնդիրներն ու դժվարությունները, **որոնք**

կապված են աշխատանքի հետ:

Նա պետք է լավ կրթված լինի, պարտավոր է սովորել Շարիաթը, ինչպես նաև, լավ տեղեկացված

լինել աշխարհիկ գործերի մասին, **որպեսզի չլինի խաբված կամ**

սխալ տեղեկացված: Նա պետք է հնարավորություն ունենա

որոշումներ կայացնել աշխարհիկ և կրոնական գործերում: Նա

պետք է լինի արդար, **արժանի և ունենա բարձր կամային**

հատկանիշներ: Նա պետք է լինի օրինակելի պահելաձև ունեցող

մարդ, **որպեսզի նրա**

դատավարությունը հեշտությամբ ընդունելի լինի վեճի երկու

կողմերի համար:

Իսլամը տրամադրում է դատավորների պահելաձևի համար հատուկ կող, **որը պետք է պահպանվի**: Հետևյալ նամակը, որն ուղարկվել է Երկրորդ խալիֆ Օմար իբն Ալ-Հաթթաբի կողմից մի ոչ մեծ իշխանություն ունեցող դատավորներից մեկին, որոշում է բոլոր դատավորների ղեկավարական հիմունքները.

«Երկրորդ խալիֆ, Ալլահի ստրուկ, Օմար Ալ-Հաթթաբից Աբդուլլա իբն Կայսին, **Ասսալամ ալեյկում**: Դատը մարդկանց միջև, որոնք **(վիճում են)**, հանդիսանում է ճշգրիտ և պարտադիր գործ, **որը պետք է հետևվի և իրացվի ինչպես հարկն**

Է: Դուք պետք է (ձգտեք)
 հասկանալ մարդկանց, որոնք
 դիմում են ձեզ: Բացի դրանից,
 մարդկանց բոլոր իրավունքները
 պետք է պաշտպանվեն: Հատուկ
 ուշադրություն դարձրեք
 մարդկանց դատարանում
 տեղավորելուն, որ ազդեցիկ
 մարդու մտքով չանցնի իր
 կարգավիճակից օգտվելը: Բացի
 դրանից, թույլ մարդը չպետք է
 կորցնի արդար դատի հույսը:
 Հայցվորը պետք է ապացույցներ
 ներկայացնի: Մեղադրյալը պետք
 է երդվի, եթե նա մերժեց և
 հրաժարվեց հայցվորի պահանջը:
 Մարդիկ, որոնք պետք է երդվեն,
 պետք է ընդհանուր խոսքի գան
 իրար հետ: Այնուամենայնիվ,

ընդհանուր խոսքն անընդունելի է, **Եթե խախտում է օրենքը:** Եթե դուք որոշում եք ընդունել, սակայն վերանայելով գործը հայտնաբերում եք, որ սխալվել եք, և օրինական է հանդիսանում այլ որոշում, ապա **(վերսկսեք գործը)** և ընդունեք ճիշտ որոշումը: Դուք պետք է հասկանաք, որ գործը վերսկսելն ու նոր որոշում ընդունելը **(ավելի)** լավ է, **քան սուտը:** Ձգտեք հասկանալ բարդ խնդիրները, որոնք հաստատումներ չունեն Դուրանում ու Սուննայում, և հետազոտեք որոշումներն ու դեպքերը, որոնք եղել են նախակինում, և միայն այն ժամանակ, երբ կունենաք

պահանջվող գիտելիքները, կարող
 եք որոշում ընդունել: Ընտրեք այն
 որոշումը, որն ավելի շատ
 կգոհացնի Ալլահին և ավելի մոտ
 կլինի ճշմարտությանը Նրա
 համար: Հնարավորություն տվեք
 հայցվորին, որը պնդում է, որ
 ներկա ժամանակ ապացույներ
 չկան, նրան որոշ ժամանակ
 տալով, որ նա կարողանա
 հայթայթել դրանք: Եթե նման
 հայցվորը ներկայացնում է
 պահանջվող ապացույցները,
 ապա որոշումը պետք է ընդունվի
 նրա օգտին: Եթե ոչ,
 ապա դատավորը հայցին դեմ է:
 Բոլոր մուսուլմանները
 հանդիսանում են հուսալի, քանի
 որ անհանգստանում են

ցուցնուների համար,
 բացառությամբ այն անձանց,
 որոնք մեղադրված են եղել
 իսլամական հասարակությունում
 որևէ ամոթալի արարք գործելու
 մեջ, կամ այն անձինք, որոնք
 դիտմամբ տալիս են սխալ
 ցուցնուներ, կամ բարեկամները
 կամ հայցվորի հետ կապ ունեցող
 մարդիկ: Ալլահը գիտի մարդկանց
 բոլոր գաղտնիքները և օգնում է
 ձեզ (դատավորներին)
 ապացույցներ ներկայացնելով:
 Բացի դրանից դուք պետք է լինեք
 համբերատար և չդժգոհեք
 վեճերից, որոնք կապված են որոշ
 հարցերի հետ, քանի որ այդ
 ժամանակ Ալլահը գոհանում է
 արդյունքներից և պարզևատրում

Է ձեզ համբերատարության
համար: Եթե մարդն ունի բարի ու
մաքուր ոգի Ալլահի դիմաց, ապա
Նա կբարեկամի այդ մարդու
հարաբերությունները
հասարակության հետ»: Տիրմիզի

Ամեն մարդ իսլամական
հասարակությունում, անկախ
նրա հավատից ու կրոնական
պատկանելիությունից,
իրավիճակից, դիրքից, ունի որոշ
անփոփոխ իրավունքներ, որոնց
մեջ են հետևյալները.

1. **Ճնշողներից պաշտպանություն
որոնելը:** Մարդը կարող է դատի
տալ իրեն ճնշողին:

2. Դատավորի կողմից լսված լինելու իրավունքը: Դա հիմնավորված է Ալլահի առաքյալի (խ.Ա.ռ.ն.) հադիսի վրա ուղղված Ալիյին , երբ նա վստահեց նրան դատավորի կարգավիճակը, ասելով.

«Ճշմարիտ, Ալլահն ուղղում է ձեր սրտերն ու ամրացնում ձեր լեզուները (նշմարտություն): Երբ հայցվորն ու մեղադրյալը նստած են ձեր առջև, որոշում մի ընդունեք ի օգուտ որևէ մեկին, մինչ բոլորի հայտարարությունները լսելը»:
Աբու Դաուդ

3. Անմեղ համարվելու իրավունքը,
մինչ մեղքն ապացուցված չէ:
Ալլահի առաքյալն (խ.Ա.ռ.ն.) ասել
է.

«Եթե մարդկանց համար որոշում
են ընդունում հիմնվելով նրանց
պահանջին, դուք կտեսնեք, որ
մարդիկ ուզում են այլ մարդկանց
արյունն ու հարստությունը:

Այնուամենայնիվ, մեղադրվողը
պետք է երդվի»:

Բուխարի և Մուսլիմ

Իսկ Բայհակիի տարբերակում
այդ հադիսն ավարտվում է
այսպես.

«Ապացույցները պետք է
ներկայացվեն հայցվորի կողմից, և

երդունը պետք է տրվի
մեղադրյալի կողմից»:

4. Մեղադրվողի օրինական
դատական գործի ու նրա
հրավուներքների պաշտպանության
հրավուներքը: Օրինակ՝
Մեղադրյալին արգելված է որևէ
տեսակի տանջանքների
ենթարկել՝ նրա նկատմամբ բռնի
ու դաժան գործողություններ
կիրառել, տառապանքներ տալ, **որ**
նա ստիպված լինի տալ ամեն
տեսակի ցուցմունքներ: Ալլահի
առաքյալն (**Խ.Ա.Ո.Ն.**) արգելեց
դա, ասելով.

«Ալլահն ազատում է իմ ումման
(**ազգը**) հետևյալից՝ սխալներից,

խավարումից ու ամեն բանից, **որ նրանք անում են ստիպողաբար»**:
Իբն Մաջահ

Երկրորդ խալիֆ Օմար իբն Ալ-Հաթթաբը հայտարարել է.

«Մարդը

պատասխանատվություն չի կրելու խոստովանության համար, եթե դուք նրան ցավ եք պատճառել, վախեցրել եք նրան կամ բանտարկել

(խոստովանություն ստանալու նպատակով)»: Աբու Յուսուֆ

5. Իրավունքը, **որի համաձայն միայն մեղավորներն են պատժվելու և անձնական պատասխանատվություն են**

տալու արածի համար: Դա
նշանակում է, որ ոչ ոք չպետք է
պատասխանատու լինի այլերի
սխալների համար: Մեղադրանքն
ու պատիժը պետք է ուղղված
լինեն մեղավորին և չվերաբերվեն
նրա ընտանիքի անդամներին:

Ալլահն ասում է
փառահեղ Դուրանում

«Ով է բարիք գործում, ապա
անում է դա իր օգտին: Իսկ ով
չարիք է գործում, նա գործում է ի
վնաս իրեն: Բո Աստվածը
անարդար չի Իր ստրուկների
նկատմամբ»: (41:46)

Ալլահի առաքյալն (խ.Ա.ն.ն.) ասել
է.

«Ոչ ոք չպետք է իր վրա (վերցնի)
իր եղբոր կամ հոր մեղքը»:
Նիսայի

Հիսրա Պատասխանատվության համ ակարգը Իսլամում

Հիսրան հանդիսանում է Իսլամի
կամավորական
պատասխանատվության
համակարգ, համաձայն որին
մուսուլմանությունը տարածում է
բարին ու արգելում է չարը,
որպեսզի հետևյալ շարիաթի
օրենքներն ու պատժվեն
հասարակության մեջ մեղք
գործողները: Ալլահն ասում է
փառահեղ Դուրանում

«Դուք լավագույն համայնքն եք,
որ ստեղծվել է մարդկանց մեջ:
Դուք ձգտում եք դեպի բարին,
հրաժարվում եք
անպարկեշտությունից և
հավատում եք Ալլահին:» (3:110)

Այս համակարգի համաձայն,
քննիչներն ու տեսուչները
կարգավորում են
հարաբերությունները
հասարակությունում, լուծում են
խնդիրներն ու պահպանում են
կարգապահությունը
հասարակական կյանքում,
մարդկանց պաշտպանելով
Ֆիզիկական հարձակումներից
հասարակական վայրերում:

Մուսուլմանը պետք է վախենա
Ալլահի պատժից
և պատասխանատվությունից :
Ալլահն ասում է.

«Իսրայելի անհավատ զավակները
անիծված էին Դավիթի ու
Մարիամի որդի Հիսուսի
լեզուներով: Դա կատարվեց, քանի
որ նրանք չլսեցին ու անցան
թուլյատրվածի սահմանները:
Նրանք չէին պահպանում իրար
արգելված արարքներից, որ
անում էին: Ինչ պիղծ էին նրանց
արարքները»: (5:78-79)

Համաձայն Ալլահի առաքյալի
(**ի.Ա.ո.ն.**) հադիսների, **իսլամական հասարակությունում**

ամեն ոք պետք է ակտիվորեն մասնակցի պարտադիր հիսբային, սեփական հնարավորությունների չափով: Ալլահի առաքյալն (խ.Աևռ.ն.) ասել է.

«Ձեզանից ով չար արարք է տեսնում, պետք է փոխի (կանգնացնի) իր ձեռքով: Եթե նա չի կարող, ապա պետք է անի դա լեզվով ... եթե չի կարողանում, թող կանգնացնի սրտով, և դա կլինի հավատի ամենացածր (մակարդակը)»: Մուսլիմ

Յուրաքանչյուր մեղսալի արարքի խափանումն արգելված է, եթե դա բերում է ավելի մեծ վնասներ, քան հակառակ դեպքում: Պետք է լինել

իմաստուն ու հեռատես, **բարիքը
շատացնելուց և չարիքը
կանխելուց:**

Ալլահի առաքյալը (**ի.Ա.ռ.ն.**)
որոշում է մարդկանց
իրավունքները մի ասվածում.

«Ձեր ունեցվածքը, արյունն ու
պատիվը անձեռնամխելի են իրար
համար, այնպես, ինչպես ձեր օրը
(**Հաջի Արաֆա օրը**), ինչպես ձեր
ամիսը (**ուղտագնացության ամիս**)
և ձեր այս քաղաքը (**Մեքքա**)»:
Բուխարի

Մարդու իրավունքների
մեծամասնությունը, որոնք
մեջբերված են դեկլարացիայում
համապատասխանում են Ալլահի

առաքյալ (Խ.Ա.Ն.Ն.) վերոնշյալ խոսքերում: Իսլամի օրենքներն ու կանոնները ստեղծված են մարդու իրավունքների պահպանման և պաշտպանության համար:

Մարդու իրավունքների իսլամական դեկլարացիան[4]

Այս դեկլարացիան, որն ընդունվել է Կահիրեում, վերաբերվում է Իսլամում մարդու իրավունքներին: Հարկ է նշել, որ նշված դեկլարացիայի իրավունքները հանդիսանում են միայն դեկլարող հիմունքներ և ընդհանուր կանոններ, քանի որ Ղուրանի համաձայն պարտադիր իրավունքները կապված են իրար

հետ շղթայի պես: Մարդու
իրավունքները ընդհանուր
կանոններն ու հիմունքները
Իսլամում բաժանվում են տարբեր
մասերի իսկ հետո՝ մասնիկների:
Այդպիսով, մենք
միայն հակիրճորեն կզննենք
դրանք, քանի որ մանրամասն
նկարագրումը պահանջում է
հետազոտություն: Կարելի է
համոզվածությամբ ասել, որ
Իսլամը եկել է, որ պաշտպանի
մարդու բոլոր իրավունքները և
երջանկացնի մարդկային
էակաները այս և հաջորդ կյանքում:

Ես սկսում եմ գրասիրտ,
գրառատ Ալլահի անունով:

Ալլահն ասում է
փառահեղ Ղուրանում

«Ով մարդիկ: Մենք ձեզ
ստեղծեցինք տղամարդուց և
կնոջից և ազգեր ու ցեղեր
արեցինք ձեզ, որպեսզի դուք
ճանաչեք միմյանց և ձեզանից
Ալլահի ամենահարգելին
դա ամենաստվածավախն է: Եվ
Ալլահը ունի լիարժեք գիտելիք
և լավ տեղեկացված է ամենից »
(49:13)

Իսլամական կոնգրեսի անդամ
երկրները լիովին հավատում են
Ալլահին՝ ամեն ինչի Արարչին,
Նրան, Ով ստեղծել է մարդուն
իդեալական տեսքով ու հարգում է

նրան: Ալլահը վստահեց մարդուն զարգացնել և պահպանել երկրի կյանքը, **որ Նա ստեղծել է: Ալլահը հանձնարարեց հետևել աստվածային խոսքերին ու պարտավորություններին, **ամեն գոյություն ունեցողը մարդուն ենթարկելով:****

Հավատացեք Մուհամմեդի (խ.Ա.ո.ն.) ուղերձին, որն ուղարկված էր հրահանգներով ու իրական կրոնով, որպես ողորմություն մարդու համար, որպես ազատիչ բոլոր ստրկացածների համար, **բոլոր բռնակալների ու գոռոզ մարդկանց հակառակորդ:** Ալլահի առաքյալը (խ.Ա.ո.ն.) հայտարարել

է բոլոր մարդկանց
հավասարությունը: Գոյություն
չունի ոչ մի առավելություն որևէ
մարդու և այլ մարդու
համեմատությամբ, **բացի**
բարեպաշտությունից: Ալլահի
առաքյալը (**ի.Ա.ո.ն.**) չեղյալ է
հայտարարել բոլոր մարդկային
տարբերությունները, **որոնց**
Ալլահը ստեղծել է մի հոգուց:

Մաքուր միաստվածական կրոնի
համար, որի վրա կառուցված է
Իսլամը, որին կոչ է արվում
մարդկությունը և որը ստիպում է
չերկրապագել ոչնչի, բացի Ալլահից,
հիմք է հավատքը, որը կառուցված
է մարդկային ճշմարիտ
ազատության,

արժանապատվության և
անձեռնամխելիության վրա
մարդու ստրկությունից
ազատելու նշանակմամբ:

Դրա համար հիմք է
հանդիսանում իսլամական
հավերժ շարիաթը որը բերվել է
մարդկությանը որպեսզի
պահպանվի հավատը, կրոնը,
հոգին, ազգը, **պատիվն ու
հետնորդները Իսլամի նորմերով:**
Բոլոր հրահանգների,
որոշումների ու առաջարկների
համար հիմք է հանդիսանում
ամեն ինչ պարունակող և
հավասարակշիռ իսլամական
շարիաթը:

Մենք համարում ենք, որ Իսլամի
 համաձայն, **հիմնական**
իրավունքներն ու
քաղաքացիական
ազատությունները հանդիսանում
են իսլամական հավատի ու կրոնի
ուրույն մասը: Ոչ ոք չպետք է
 խախտի այդ իրավունքները կամ
 դրժել դրանք: Այդ հիմնական
 իրավունքները, աստվածային և
 երկնային, նշված են եղել Ալլահի
 առաքյալի (**խ.Ա.ո.ն.**) կողմից բոլոր
 Գրություններում: Իրականում,
 Ալլահը մարդկությանն ուշարկեց
 վերջին մարգարեին՝
 Մուհամմեդին (**խ.Ա.ո.ն.**), որը
 ամբողջացրեց բոլոր նախկինում
ուղարկվածների ուղերձը: Այս
 հիմնական իրավունքները

հարգելը հանդիսանում է
երկրպագության տեսակներից
մեկը և դա դրժելը ըստ Իսլամի
հանդիսանում է չարիք: Ամեն
մարդ անձնական
պատասխանատվություն է կրում
այդ իրավունքներին հետևելու
համար: Ազգը նույնպես
ընդհանրորեն պատասխանատու
է դրա համար:

Ելնելով վերը ասվածից,
իսլամական կոնգրեսի անդամ
երկրները հայտարարում են
հետևյալը.

Հոդված առաջին

Ողջ մարդկությունը մի մեծ
ընտանիք է: Մարդիկ միացել են,

որ լինեն Ալլահի ստրուկները և
նրանք հանդիսանում են
մարգարե Ադամի որդիները:

Մարդկային

արժանապատվության ու պատվի
առումով բոլոր մարդիկ հավասար
են: Բոլորը հավասար են նաև
պատասխանատվությունում: Ոչ
ռասան, ոչ մաշկի գույնը, ոչ
լեզուն, ոչ սեռը կրոնական
համոզմունքներ չեն, քաղաքական
պատկանելիություն չեն, ոչ էլ
սոցիալական կարգ, **այլ միայն
տարբերություններ են:** Ճշմարիտ
հավատը հանդիսանում է
մարդկության
կատարելագործման
արժանապատվության
ամրացում:

Լավագույն մարդիկ լավագույնն են ամեն ինչում: Չկա առավելություն որոշ մարդկանց այլերի նկատմամբ, **բացի բարեգործությանը վերաբերվող գործերում:**

Հոգված երկրորդ

Կյանքը Ալլահի պարգևն է, **որը տրվել և երաշխավորվել է յուրաքանչյուրին:**

Հասարակության բոլոր անդամները, **պատություններն ու երկրները պետք է համագործակցեն իրավունքների պաշտպանությունում բոլոր ազրեսիաների դեպքերում:** Ոչ մի կյանք չպետք է պահանջվի,

առանց հարկին իրավական հիմնավորման:

Անօրինական է հանդիսանում
մարդկությունը վերացնող
միջոցների ու գործիքների
օգտագործումը:

Մարդկային կյանքի
պահպանումը հանդիսանում է
իրավական պարտավորություն:

Մարդու ֆիզիկական
անվտանգությունը հարգվում է:
Ոչ ոք իրավունք չունի հարձակվել
մարդու վրա: Նաև ոչ ոք
իրավունք չունի շորթել մարդու
անվտանգությունը առանց
օրինական հիմնավորումների:

Պետությունը պետք է
երաշխավորի այդ իրավունքը:

Հոդված երրորդ

Ուժի գործադրման կամ զինված
պայքարի դեպքում անօրինական
է հանդիսանում

չպատերազմողների

սպանությունը, ինչպիսիք են

տարիքավորները, **կանայք և**

երեխաները: Վիրավորվածներն

ու հիվանդները բուժվելու

իրավունք ունեն: Գերիները

(ռազմագերիները) ունեն սննդի,

հագուստի և պաշտպանության

իրավունք: Անօրինական է վնասել

զոհվածների դիակները:

Ռազմագերիները պետք է

փոխանակվեն: Պատերազմի
պատճառով բաժանված
ընտանիքները իրավունք ունեն
միանալ:

Արգելվում է կտրել թշնամու
ծառերը, ոչնչացնել ցանքն ու
կենդանիներին, քանդել շենքերն
ու այլ քաղաքացիական
շինությունները կրակոցների կամ
պայթյունների միջոցով և այլն:

Հոդված չորրորդ

Յուրաքանչյուր մարդ
անձեռնամխելիության, պատվի
ու արժանապատվության
իրավունք ունի հետմահու
կյանքում: Պետությունն ու
հասարակությունը պետք է

պաշտպանեն հանգուցյալի
անյունն ու թաղման վայրը
(գերեզմանը):

Հոդված հինգերորդ

Ընտանիքը հանդիսանում է
հասարակության հիմնական
մասնիկը: Ամուսնությունը
հանդիսանում է ընտանիքի
կառուցման ու ձևավորման
հիմքը: Տղամարդիկ և կանայք
իրավունք ունեն ամուսնանալ:
Ամուսնությունում չի կարող լինել
ռասային, մաշկի գույնին կամ
ազգային պատկանելիությանը
վերաբերվող որևէ
սահմանափակում:

Հասարակությունն ու
պետությունը պետք է հանեն
բոլոր խոչընդոտներն ու
հեշտացնեն ամուսնությունները:
Նրանք պետք է երաշխավորեն
ընտանիքի պաշտպանությունն ու
անդամների առողջությունը:

Հոդված վեցերորդ

Տղամարդիկ ու կանայք հավասար
են մարդկային
անձեռնամխելիության
դիտակետից: Կանայք իրավունք
ունեն ունենալ հավասար
իրավունքներ ու
պարտականություններ
տղամարդկանց հետ: Նրանք
իրավունք ունեն

սեփական քաղաքացիական իրավունքների ընդունման և պահպանել սեփական ազգանունն ու անունը: Ամուսինը պատասխանատու է ընտանիքի առողջության համար և ֆինանսական կարիքների:

Հոդված յոթերորդ

Յուրաքանչյուր նորածին ունի ծնողների, հասարակության, պետական խնամակալության, դաստիարակության, նյութական ապահովության, կրթության ու կամային հարգանքի իրավունք: Պտուղն ու մայրը պետք է հատուկ կերպով խնամվեն:

Ծնողներն ու խնամակալները
իրավունք ունեն ընտրել
դաստիարակության տեսակը, որը
նախընտրում են իրենց
երեխաների համար:
Այնուամենայնիվ, երեխաների
հետաքրքրություններն ու
ապագան պետք է պատկանի
շարիաթի սկզբունքներին:

Ծնողներն ունեն որոշ
իրավունքներ իրենց երեխաների
նկատմամբ: Բարեկամները
նույնպես ունեն իրենց
իրավունքներն իրար նկատմամբ,
որոնք համապատասխանում են
շարիաթի սկզբունքներին:

Հոդված ութերորդ

Ամեն մարդ իրավունք ունի լիովին
օգտվել սեփական
իրավունքներից,
պարտավորությունները
կատարելու պայմանով: Եթե
մարդն այլևս չունի իր
իրավունքները օգտագործելու
հնարավորություն, լիովին կամ
մասամբ, նրա համար պետք է
խնամակալ, Վալի, **նշանակվի:**

Հոդված իններորդ

Կրթությունը հանդիսանում է
իրավունք, որը տրվում է բոլորին,
և գիտելիքներ ստանալը
պարտադիր է: Կրթություն
ստանալու առաջարկն ու
տրամադրումը հանդիսանում է

պարտադրանք, որը դրվում է հասարակության կամ պետության վրա: Պետությունը պետք է երաշխավորի միջին կրթություն ստանալը, և ապահովի ուսանույնը պահանջվող միջոցներով, ստեղծի համապատասխան միջավայր հետաքրքրությունների ծառայության համար և հասարակության անդամների բարեկեցության համար: Կրթությունը պետք է թույլ տա մարդուն իմանալ նաև Իսլամի (որպես կրոն և կենսակերպ), տիեզերքի և գիտելիքներով մարդկությանը օգուտ տալու միջոցների մասին:

Յուրաքանչյուր մարդ իրավունք
ունի կրթություն ստանալ ի
շնորհիվ որոշ տարբեր
ուսումնական
հաստատությունների, ինչպիսիք
են ընտանիքը, դպրոցը,
համալսարանները,
հասարակական տեղեկատվական
միջոցները և այլն: Նրանք պետք է
առաջարկեն
համապատասխանող աշխարհիկ
և կրոնական
դաստիարակություն, ձևավորեն
լիակատար և ներդաշնակ անձ,
ամրացնեն նրանում Ալլահի
ամենագործության հավատը և
դաստիարակեն հարգանք մարդու
իրավունքների և

պարտականությունների նկատմամբ:

Հոդված տասներորդ

Մարդը պետք է հետևի և
ենթարկվի Իսլամին

(ենթարկություն Ալլահին), որը
հանդիսանում է իրական

ճշմարիտ կրոնը: Այդ պատճառով
ոչ ոք իրավունք չունի ստիպել
մյուսներին անել որևէ արարք,

որը չի համապատասխանում
նրանց կամքին: Բացի դրանից, ոչ

ոք իրավունք չունի օգտվել
աղքատությունից, թուլությունից
ու այլ մարդու

անտառանաչությունից, որ

ստիպի նրան փոխի սեփական կրոնը կամ դառնալ աթեիստ:

Հոդված տասնմեկերորդ

Մարդը ծնվում է ազատ: Ոչ ոք իրավունք չունի ստրկացնել նրան, ցածրացնել, **իրեն ենթարկել կամ շահագործել**: Չպետք է լինի ստրկություն բացի Ալլահին ենթարկվելուց: Գաղութացման և ինպերիալիզմի բոլոր տեսակները լիովին արգելված են:

Գաղութացումը հանդիսանում է ստրկության վատագույն տեսակը: Տառապող մարդիկ իրավունք ունեն գաղութացումից ազատվել: Նման մարդիկ իրավունք ունեն ինքնուրույնորեն

որոշել սեփական ճակատագիրը:
Բոլոր մնացած մարդիկ պետք է
պահպանեն արդար ու ճիշտ
գործը, որն ուղղված է
օկուպացիայի բոլոր տեսակների
ու գաղութացման բոլոր
տեսակների դեմ: Ընդ որում բոլոր
պետություններն ու
ժողովուրդները իրավունք ունեն
պահպանել իրենց
յուրահատկությունն ու սեփական
պետությունը ու բնական
պաշարները դեկավարել:

Հոգված տասներկուերորդ

Ամեն մարդ իրավունք ունի
ազատորեն տեղաշարժվել,
ընտրելով իր համար

համապատասխանող
ապրելավայր իր երկրի կամ
պետության սահմաններում,
նույնիսկ դրա սահմաններից
դուրս: Սակայն, եթե նրա
սեփական երկրում գտնվելը
վտանգավոր է, **սպա նա**
իրավունք ունի թաքստոց գտնել
այլ երկրում: Երկիրը, որը
թաքստոց է տրամադրում, պետք
է պաշտպանի այդ մարդուն:

Հոդված տասներեքերորդ

Պետությունն ու
հասարակությունը պետք է
ապահովեն աշխատանքով ամեն
աշխատունակ մարդու: Ամեն
մարդ պետք է ունենա

ընտրության ազատություն,
որպեսզի ընտրի ավելի լավ
համապատասխանող
աշխատանք, որը

համապատասխանում է նրա և
հասարակության շահերին:

Աշխատողը չպետք է անի այն ինչի
չի կարող անել: Աշխատողը
չպետք է իր կամքին հակառակ
անել որևէ գործեր: Աշխատողին
արգելված է շահագործել ու
վիրավորել, վնասել նրան:

Տղամարդ կամ կին աշխատողը,
առանց որևէ

տարբերությունների, **իրավունք
ունի ստանալ արդար**

աշխատավարձ: Աշխատավարձը
վճարելուց չպետք է լինեն
հետաձգումներ: Աշխատողն

իրավունք ունի ստանալ
(ամենամյա) հանգիստ,
դրամաշնորհ, նյութական
բարելավում և այլ գումարային
պարգևներ: Աշխատողը
պարտավոր է բարեխղճորեն ու
ձգտումով կատարել իրենց
աշխատանքը: Եթե վեճ է
առաջանում աշխատողի և
գործատուի միջև, պետությունը
պետք է միջամտի, որպեսզի լուծի
խնդիրը, արդարադատություն
անի և ստիպի կողմերին ընդունել
որոշումը կամայինորեն:

Հոդված տասնչորսերորդ

Ամեն մարդ իրավունք ունի
ստանալ արդար ու

օրինական եկամուտ:

Ապրանքների մենաշնորհը,
խաբեբայությունը, իրեն և
ուրիշներին վնասելը,

վախշատությունը արգելվում են:

Բոլոր վերոնշյալ

գործողությունները արգելված են
օրենքով:

Հոդված տասնհինգերորդ

Բոլոր մարդիկ ունեն

սեփականության իրավունք:

Բացի դրանից, անհատականորեն
թույլատրված է օգտվել

սեփականության իրավունքից,

եթե նույն անձին և այլ անձանց

վնաս չի հասցվի: Արտահանումն

արգելվում է, բացի այդ դեպքերից,

երբ դա ծառայում է
հասարակության շահերին, այն
պայմանով, որ բոլորը կատանան
իրենց բաժինը: Արգելվում է
առգրավել ունեցվածքը, եթե դա
նախատեսված չի օրենքով:

Հոդված տասնվեցերորդ

Յուրաքանչյուր մարդ իրավունք
ունի օգտվել գիտական, գրական,
գեղարվեստական կամ
տեխնիկական գործունեության
բերքերից: Բացի դրանից, ամեն
մարդ ունի իր հոգևոր ու
նյութական շահերի
պաշտպանության իրավունքները,
որը կապված է նրա

գործունեության հետ, երբ այն չի
հակասում շարիաթի օրենքներին:

Հոդված տասնյութերորդ

Ամեն մարդ իրավունք ունի
ունենալ կյանք այնպիսի
միջավայրում, որն ազատ է
կամային կաշառակերությունից
ու սահմանափակումներից: Մյուս
միջավայրը պետք է ապահովի
մարդու կամային
ինքնազնահատականը, սեփական
բնավորության ցուցաբերումը: Եվ
հասարակությունը, և
պետությունը պետք է ապահովեն
ու տրամադրեն ֆիզիկական
անձանց այդ իրավունքը:

Հասարակությունն ու
պետությունը պետք է բոլորին
ապահովեն (համապատասխան և
անհրաժեշտ)

առողջապահություն ու
սոցիալական օգնություն,
հնարավորության չափով
օգտագործելով բոլոր պետական
միջոցները:

Պետությունը պետք է ապահովի
արժանապատիվ կյանքի
պայմաններ մարդկանց և նրանց
ընտանիքների համար: Այդ
իրավունքը պարունակում է իր
մեջ կացարան, հագուստ,
համապատասխան կրթություն,
բժշկական ծառայություններ և

այլ հիմնական խնդիրների
լուծումներ:

Հոդված տասնութերորդ

Ամեն մարդ իրավունք ունի
ունենալ կյանք և
անվտանգություն
հասարակությունում,
արժանապատիվ վերաբերմունք
դեպի իրեն, կրոնի ու կարծիքի
ազատություն, **ընտանիքի
անդամների
արժանապատվություն
հնարավորության
սահմաններում:**

Ամեն մարդ իրավունք ունի
առանձնաձև անձնական
գործերի ժամանակ իր տանը՝

ընտանիքի անդամների
միջավայրում: Անթուլլատրեյի է
լրտեսել ու հետևել նրան:
Չրպարտությունն արգելված է
բոլորին: Պետությունը պետք է
պաշտպանի մարդուն ամեն
հեզնական միջամտությունից:

Մեփական կացարանը
հանդիսանում է անձեռնամխելի
բոլոր դեպքերի համար: Այնտեղ
արգելված է մտնել առանց
բնակվողների թույլտվության, այն
չի կարող քանդվել կամ
առգրավվել, **իսկ բնակիչները չեն
կարող տեղահանվել:**

Հոդված տասնիններորդ

Բոլոր մարդիկ, անկախ նրանից,
թե ղեկավար են, թե ենթակա,
պետք է օգտվեն հավասար
իրավական իրավունքներից:

Բոլոր մարդիկ պետք է իրավունք
ունենան խնդիր կայացնել
դատական որոշումը նրանց
հայցով:

Չեն կարող լինել պատիժներ,
որոնք նախատեսված չեն
շարիաթով:

Մեղադրյալը համարվում է
անմեղ, մինչև բոլոր
ապացույցները ներկայացվեն
արդար դատարան, որում նրան
տրամադրված են

պաշտպանության բոլոր երաշխիքները:

Հոդված քսաներորդ

Ոչ ոք չպետք է լինի ձերբակալված
կամ սահմանափակվի իր
ազատություններում, **վտարված
կամ պատժված առանց հարկին
դատական որոշումի:** Անձինք
չպետք է ենթարկվեն ֆիզիկական
կամ հոգեբանական ճնշումների
կամ այլ վերաբերմունքի, **որը
վնասում է նրանց անձնական
արժանապատվությունը:** Մարդը
չի կարող լինել բժշկական
փորձարկումների ենթարկված
առանց նրա համաձայնության
կամ նրա կյանքին ու

առողջությանը վտանգ
չսպառնալուց: Բացի դրանից, չի
թուլյատրվում, **որ պետությունը
բացառությունների օրենքներ
ընդունի:**

Հոդված քսանմեկերորդ

Խստորեն արգելվում է պատանդ
վերցնելը:

Հոդված քսաներկուերորդ

Ամեն մարդ իրավունք ունի
արտահայտել իր կարծիքները,
**եթե դա չի հակասում շարիաթի
օրենքներին ու հիմունքներին:**

Ամեն մարդ իրավունք ունի
շատացնել բարիքը և արգելել,
չարիքը շարիաթի օրենքներին ու

հիմունքներին

համապատասխան:

Լրատվամիջոցներն ու
տեղեկությունը հասարակության
համար հանդիսանում են
գոյատևման համար
անհրաժեշտություն:

Լրատվամիջոցները չպետք է
օգտագործվեն մարգարեի
(**ի.Ա.ռ.ն.**)

արժանապատվությունը
ցածրացնելու համար, **և չպետք է
զբաղվեն որևէ ոչ ցանկալի ու
կոռուպցիոն գործերով:** Բացի
դրանից, բոլոր հարցերը, որոնք
հասարակությունում վեճ են
առաջացնում, **արգելված են:**

Անթուլյատրելի է առաջացնել ազգայնամոլական կամ գաղափարախոսական ատելություն, կամ որևէ գործ, որն առաջ է բերում ռասայական խտրականություն:

Հոդված քսաներեքերորդ

Իշխանությունը հիմնավորված է վստահության վրա, ընդ որում դրա չարաշահումը կամ մտածված խտրականությունը արգելված են, որպեսզի պաշտպանվեն մարդկանց իրավունքները:

Ամեն մարդ իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի կերպով դեկավարել երկրի

հասարակական գործերը: Բացի
դրանից, նա իրավունք ունի
մուտք գործել հասարակական
կազմակերպություններ,
շարիաթի համաձայն:

Հոդված քսանչորսերորդ

Բոլոր իրավունքներն ու
ազատությունները, որոնք
մեջբերված են այս
դեկլարացիայում,
կանոնավորվում են շարիաթով:

Հոդված քսանհինգերորդ

Շարիաթի օրենքներն ու
սկզբունքները հանդիսանում են
դեկլարացիայի ցանկացած

հողվածի բացատրման
աղբյուրներ:

Կահիրե, Մուհարրամ ամիս, 1411
թ.

05.08.1990

Վերոնշյալ իրավունքները
ճանաչելը հանդիսանում է ճիշտ
ճանապարհի իսլական
հասարակության համար, որը
կարող է բնութագրվել հետևյալ
կերպով. [\[5\]](#)

Հասարակությունը, որը
կառուցված է արդարության
հասկացության վրա ... ոչ ոք չի
գերազանցում ոչ մեկին իր
ռասայով, [մաշկի գույնով կամ](#)

լեզվով: Մարդը պետք է պաշտպանված լինի ճնշվածությունից, **ցածրացումից ու ստրկություն:** Ալլահն ասում է.

«Մենք գնահատեցինք Ադամի որդիներին և թույլատրեցինք շարժվել երկրով և ջրով, բարիքներով օժտեցինք նրանց և մեծ առավելություն տվեցինք մյուս արարածների նկատմամբ»:
(17:70)

Հասարակության հիմքը գտնվում է ընտանիքի ամուր համակարգում, **որը ապահովում է կայունությունն ու անը:** Ալլահն ասում է փառահեղ **Ղուրանում**

«Ով մարդիկ: Մենք ձեզ
ստեղծեցինք տղամարդուց և
կնոջից» (49:13)

Հասարակությունն է այն տեղը՝
որտեղ ղեկավարն ու
ենթակաները հավասար են
շարիաթի դիմաց: Քանի որ
շարիաթը դա հրաման է վերևից,
հասարակությունում չի
թույլատրվում խտրականություն:

Հասարակությունն է այն տեղը՝
որտեղ իշխանությունն ու ուժը
վստահված են ղեկավարին, որը
ձգտում է հասնել որոշ
նպատակների, շարիաթի
սահմաններում:

Հասարակությունն է այն տեղը՝
որտեղ մարդը համարում է, որ
Ալլահն իսկապես հանդիսանում է
ամեն ինչի արարիչը և Նրա բոլոր
արարածները օգտագործվում են
Ալլահին պատկանող բոլոր
էակների համար: Այն ամենն ինչ
ունենք, դա Ալլահի ընծան ու
գրությունն է, և չկա Նրանից
ավելի առատաձեռն ու
գթառատ: Ամենաբարձրյալ
Ալլահն ասում է
փառահեղ Դուրանում .

«Նա ձեզ ենթարկեց երկրինն ու
երկնքինը:
Ճշմարիտ, այդ պատիվ և բարու
թյուն է Նրա կողմից ...»: (45:13)

Հասարակությունը, որում
քաղաքականությունը
կանոնավորում է հասարակական
գործերը, **հիմնավորված է
խորհրդի հիմունքների:**
Ամենաբարձրյալ Ալլահն ասում է
փառահեղ Դուրանում.

« ... որոնք պատասխանում են
իրենց Աստծուն, աղոթում են,
խորհրդակցում են միմյանց հետ
գործերի մասին ու ծախսում են
Մեր ընծայածից»: (42:38)

Հասարակություն է, որը բոլորին
ընձեռնում է հավասար
հնարավորություններ, **համաձայն
նրանց պոտենցիալին ու
ունակություններին:** Այդպիսի

անձինք պատասխանատու են լինելու իրենց ազգին սեփական գործերի համար, **իսկ հետո Արարչի դիմաց՝ ապագա կյանքում: Ալլահի առաքյալն (ի.Ա.ռ.ն.)** ասել է.

«Մեզանից ամեն մեկը հովիվ է, և պատասխանատու է նրա խնամակալությունն ունեցողների համար: Առաջնորդը հովիվ է, և պատասխանատու է իր քաղաքացիների համար: Տղամարդն իր ընտանիքի հովիվն է, և պատասխանատու է ընտանիքի համար: Կինն իր ամուսնու տան հովիվն է և պատասխանատու է նրա հովանու տակ գտնվողների

համար: Ծառան հանդիսանում է իր տիրոջ ունեցվածքի հովիվը, և պատասխանատու է այն ամենի համար, որ գտնվում են նրա

խնամակալության ներքո:

Ձեզանից յուրաքանչյուրը հովիվ է, և պատասխանատու է իր խնամակալության ներքո ամեն ինչի համար»: Բուխարի և Մուսլիմ

Հասարակությունն է, որում ղեկավարներին ու ենթականերին լսում են հավասար իրավունքներով դատարանում և արդար դատավճիռ են ընդունում:

Հասարակությունը է, որտեղ ամեն մարդ արտացոլում է

ազգային գիտակցությունը: Ամեն մարդ իրավունք ունի դատական գործ հարուցել ամեն օրինախախտի դեմ, որը հանցանք է գործել ողջ բնակչության նկատմամբ: Նա նաև կարող է ստանալ ուրիշների աջակցությունը այդ գործում: Հանցագործության բոլոր վկաները պարտավոր են օգնել նրան, այլ ոչ թե չեզոքանան գործի զննման ժամանակ:

Շարիաթում մարդու իրավունքների հատկանիշները հետևյալներն են.

Ա. Շարիաթի համաձայն, մարդու իրավունքները հանդիսանում են

աստվածային: Դրանք կախված
չեն կրքերից, շահերից ու
անձնական ցանկություններից :

Բ. Մարդու իրավունքները
համապատասխանում են
խլամական հավատին ու
հիմունքներին: Դրանք
ներկայացվում և պահպանվում
են աստվածային դատաստանով:
Այդպիսով, այդ իրավունքների
ամեն ոտնահարում առաջի
հերթին հանդիսանում են Ալլահի
աստվածային կամքի
ոտնահարում և հանգեցնում են
պատիժների այս և հաջորդ
կյանքերում:

Գ. Մարդու այդ իրավունքները հանդիսանում են ամեն ինչ ընդգրկող ու համապատասխանում են մարդու բնույթին: Դրանք համապատասխանեցված են մարդու բնական յուրահատկություններին և հաշվի են առնում նրա թուլությունները, ուժը, աղքատությունն ու հարստությունը, **արժանիքներն ու ցածրեցումները:**

Դ. Այդ իրավունքները վերաբերվում են բոլորին, համաձայն իսլամական իրավունքներին, անկախ մաշկի գույնից, ռասայից, կրոնից, լեզվից կամ սոցիալական դիրքից,

այսինքն, մարդու այդ
իրավունքները հանդիսանում են
մշտական: Դրանք չեն
ենթարկվում որոշ
ժամանակաշրջանի կամ տեղի, և
ոչ մի պայմանների կամ
իրավիճակների: Ոչ առանձին
անձինք, ոչ հասարակությունը չեն
կարող փոխել մարդու այդ
իրավունքները:

Ե. Այդ իրավունքները
հանդիսանում են բավարար,
որպեսզի ստեղծեն
հասարակություն, որը
տրամադրում է իր
քաղաքացիներին արժանի և
արժանապատիվ կյանք: Այդ
իրավունքները հանդիսանում են

Ալլահի ողորմությունը՝ բոլոր երկրների աստծու, և նախատեսված են ողջ մարդկության համար: Մարդու իրավունքները նաև ծառայում են քաղաքական, սոցիալական, կամային ու տնտեսական արդարությունը մարդկային հասարակության մեջ պահպանելուն:

2. Այնուամենայնիվ, մարդու իրավունքները սահմանափակ են և չեն հանդիսանում բացարձակ: Այդ իրավունքները համապատասխանում են շարիաթի հիմնական օրենքներին ու հիմունքներին: Դրանք չեն վնասում հասարակության

շահերին ու բարեկեցությանը:
Օրինակ՝ մտքի ու խոսքի
ազատությունը երաշխավորված է
բոլորին: Բոլոր մարդիկ
անկասկած իրավունք ունեն ասել
ճշմարտությունը: Բոլորն
իրավունք ունեն տալ խելամիտ
խորհուրդներ մյուսներին, **քանի
այդ խորհուրդները շահավետ են
հասարակությանը:**

Խորհուրդները կարող են տրվել
աշխարհիկ կամ կրոնական
թեմաների վերաբերյալ: Սակայն,
գոյություն ունեն որոշ
սահմաններ, **այլապես դա կբերի
քաոսային իրավիճակ
հասարակությունում:** Այստեղ
մեջբերված են այս

սահմանափակումներից
մի քանիսը.

• Օբյեկտիվ երկխոսության
ազատությունը պետք է
հիմնավորված լինի իմաստության
և բարի խորհուրդների վրա:
Ամենաբարձրյալ Ալլահն ասում է
փառահեղ Ղուրանում

«Կոչ արա Աստծուդ
ճանապարհին իմաստությամբ ու
բարի կամքով, և վիճի նրանց հետ
միայն նրանով՝ ինչն ավելի լավ է:
Ճշմարիտ, քո Աստվածն ավելի
լավ գիտի, թե ով է շեղվել Իր
ճանապարհից, և Նա ավելի լավ
գիտի, թե ով է գնում հարթ
ճանապարհով»: (16:125)

• Անհրաժեշտ է ամեն գնով հետևել Իսլամական հավատի հիմնական հիմունքները, ինչպիսիք են Ալլահի գոյությունն ունենալը, Ալլահի առաքյալի (խ.Ա.ո.ն.) և բոլոր մնացած մարգարեների ու առաքյալների խոսքերի ճշմարտությունն լինելը:

• Համապատասխան կանոններին ամեն կերպով չհետևելը վիրավորական է ուրիշների համար ... անկախ նրանից, թե հանդիսանում է հոգևորական, թե աշխարհիկ հանցանք, օրինակ՝ մարդկանց մասին վատ խոսելը, [վիրավորելն ու նրանց գաղտնիքները](#)

բացահայտելը: Նման
անօրինական գործերը
տարածելու են չարիք ու վնաս
մարդկանց մեջ իսլամական
հասարակությունում կամ այլ
հասարակություններում:

Ամենաբարձրյալ Ալլահն ասում է
փառահեղ Ղուրանում

«Ճշմարիտ, նրանց, ովքեր սիրում
են, որ հավատացյալների մասին
տհանություններ տարածվեն,
տանջալի տառապանքներ են
սպասվում այս և վերջին
կյանքում: Ալլահը գիտի, իսկ դուք
չգիտեք»: (24:19)

Իսլամում մարդկանց հրավուներքների մասին սիաալ պատկերացումները

Ավելի ներքևում բերված են
Իսլամի մասին սիաալ
պատկերացումների օրինակներ,
որոնք հիմնականում
վերաբերվում են մարդու
հրավուներքին: Հարկ է նշել, որ
այդ նշումների մեծ մասը կարող
էր ուղղված լինել այլ կրոնների
քննադատմանը, ինչպիսիք են
Քրիստոնեությունն ու
Հուդայականությունը, քանի որ
այդ կրոններն ունեն
ավանդույթներ ու նորմաներ,
որոնք չեն համապատասխանում
մարդու ժամանակակից

ապրելակերպին: Մեր բացատրու
թյունները
կապված են միայն Իսլամական
սկզբունքներին ,
սկսած դրա սկզբից և զուրկ են
ամեն անարդարությունից և
կեղծիքից
, որոնք գալիս են մյուս կրոններ
ի անունից , **որոնք մեծ դեր են**
խաղացել անվան աղտոտմանը :
Իսլամում երբեք գոյություն չի
ունեցել գիտության և կրոնի միջև
որևէ թյուրիմացություն, ինչն
արտացոլվեց ազգի դանդաղ, բայց
կայուն զարգացմանը Արարչի,
Նրա առաքյալների
սահմաններում, **որոնք**
հայտնեցին մեզ Օրենքը:

Առաջին սխալը

Որոշ մարդիկ պնդում են, որ իսլամական օրենքը սահմանափակում է մարդու ազատությունը և հակասում է ժամանակակից աշխարհի և մարդու իրավունքների մարդու պատկերացումներին:

Պատասխան շարիաթի մասին սխալ պատկերացմանը

Այս խաբուսիկ և լայնորեն տարածված կարծիքը քննարկված էր մեր կողմից նախաբանում:

Այստեղ մենք կնշենք, որ մուսուլմանները հավատում են այնինչին, որ իսլամական օրենքը հանդիսանում է լիակատար ողջ

կյանքի համար և ունիվերսալ է բոլոր վայրերի և ժամանակների համար: Իրական ազատությունը հանդիսանում է սեփական էգոիստական ցանկություններից կամ ղեկավարող օլիգարխիայից ու իերարխիայից հրաժարվելը: Ազատությունից զրկված լինելու վատագույն ցուցաբերումը դա այլ մարդկանց երկրպագելն է: Երկրպագել կարելի է միայն Ալլահին: Իսլամը դեմ է նրանց անբարոյականությանը, ովքեր կարծում են, թե կարող էր անել այն ինչ ցանկանում են: Իսլամը դա միայն մարդու և Արարչի միջև հոգևոր կապի կրոն չէ, այլ նաև կրոն է, որը պարունակում է իր մեջ Ալլահի պատվիրանները

կյանքի բոլոր դեպքերի համար:
Իսլամը կանոնավորում է մարդու
և արարչի, մարդու և
հասարակության և ազգերի միջև
հարաբերությունները: Ի
տարբերություն
Հուդայականությունից, Իսլամը
հանդիսանում է ունիվերսալ կրոն
և չի սահմանափակվում միայն մի
մարդկային ռասայով: Չնայած, որ
Քրիստոնեությունը
հանդիսանում է ունիվերսալ կրոն,
այն շեղվել է իր ճանապարհից,
որի մասին ասում էր Հիսուսը:

«Ես ուղարկված եմ Իսրայելի
տան մոլորված գառներին»:
Մաթեոս

Հիսուսն ասաց իր 12
աշակերտներին, որոնք ընտրվա
ծ էին նշել Հրեական տասներկո
ւ ցեղերը.

«Այդ 12 աշակերտներին
հրամայեց չգնալ հեթանոսների
ճանապարհով, չգնալ
սամարացիների քաղաքը և
խորհուրդ տվեց գնալ Իսրայելի
տան մոլորված գառների մոտ:»
Մաթեոս

Իսլամի Մարգարեն ուղարկվել
է որպես գուլթ մարդկությանը :
Ամենաբարձրյալ Ալլահը ասում
է փառահեղ Ղուրանում .

«Մենք ուղարկել ենք քեզ ինչպե
 ս գուրթ ամբողջ աշխարհի արար
 ածներին :» 21:107

Իսլամական շարիաթն ունի երկու
 ասպեկտներ: Առաջինն իր մեջ
 ընդգրկում է հավատ,
 համոզմունք, երկրպագության
 տարբեր ձևեր ու օրենքներ, որոնք
 հանդիսանում են մշտական,
 առկա չի փոփոխությունների,
 անկախ դրա տեղից ու
 ժամանակից: Օրինակ՝ աղոթքը
 Իսլամում մի ծիսակատարություն
 է, որն ունի ստանդարտ
 հատկանիշներ, Դուրանի
 ընդունում և տարբեր երկրներում
 կատարվող աղոթքների
 նմանություններ, ինչպիսիք են

Նիզերիայում, Արաբիայում կամ
Ինդոնեզիայում:

Նույնպես կարելի է ասել
Չաքյաթի մասին, որը գործում է
աշխարհի տարբեր երկրներում:

Հասարակության համար
օրենքները միատեսակ են, և ոչ ոք
հրավումք չունի չարաշահել
դրանք: Այդ օրենքները
հանդիսանում են մշտական
շինության հիմքերը, մարդկանց
միջև հավասարության հիմքերը,
քանի որ նրանք իրենց բնույթով
նույնատիպ են ամենուրեք:

Իսլամական շարիաթի երկրորդ
ասպեկտը օրենքներն են,
մանավանդ նրանք, որոնք

կանոնավորում են մարդկանց,
երկրների և ազգերի միջև
հարաբերությունները, **որոնք**
համապատասխանեցված են
անդադար փոխվող
հասարակության փոխվող
կարիքների: Նման նորմերն ու
կանոնները կարող են փոխվել
հասարակության ընդհանուր
պահանջարկին
համապատասխան:
Խորհրդակցության հիմունքը
հանդիսանում է նման
գործընթացներից մեկը: Այդ
հիմունքը մեջբերվում է
Ղուրանում ընդհանուր տեսքով,
առանց մանրամասն
քննարկումների: Ղուրանում չկա
հիմնական տեղեկություն, որը

կրացատրեր, թե ինչպես կատարել
և ապահովել շուրայի
հիմունքները, **սակայն Սուլնան**
տալիս է որոշ խորհուրդներ:

Իսլամի այդ յուրահատկությունը
թույլ է տալիս շուրայի հիմունքին
բավարարել մարդկանց կամ
հասարակության պահանջները,
որոնք կարող են գործադրել
շուրան իրար նկատմամբ աննշան
փոփոխություններով՝ ժամանակի
համաձայն: Այդ

դյուրաշարժությունն
արտացոլում է Իսլամի իրական
լիակատարությունն ու
ունիվերսալ բնույթը:

• **Երկրորդ սիալը**

Այն մարդիկ, որոնք չգիտեն
Իսլամի մասին տարրական
ճշմարտություններ՝ սուտ
գիտնականները, Իսլամի
թշնամիները պնդում են, որ
Իսլամը չի հարգում ոչ
մուսուլմանների օրինական
իրավունքները իսլամական
երկրներում:

Ոչ մուսուլմանների
իրավունքների մասին անարդար
պատկերացման պատասխանը

Իսլամական շարիաթը
նախատեսում է
պարտավորություններ և
իրավունքներ իսլամական
հասարակությունում ապրող ոչ

մուսուլմանների համար: Դա այդ
մոլորության համար կարող է
լինել համոզիչ հերքում:

Իսլամական գրքերի ընդհանուր
իրավունքներն ուսումնասիրելով,
մենք գտնում ենք հետևյալը. «Ոչ
մուսուլմաններն ունեն այնպիսի
իրավունքներ, որոնք ունեն նաև
մուսուլմանները: Նրանք նույնպես
պարտավոր են անել այն՝ ինչ
պարտավոր են մուսուլմանները»:
Դա ընդհանուր կանոն է, և դրան
են հիմնվում արդար և հավասար
օրենքները, որոնք ոչ
մուսուլմաններին տալիս են
անվտանգության,
սեփականության ու կրոնական
իրավունքներ և այլն:

Իսլամը թույլատրում է կրոնական զրույցներ ոչ մուսուլմանների հետ, **կոչելով մուսուլմաններին դեպի դրան**: Ամենաբարձրյալ Ալլահն ասում է փառահեղ Դուրանում.

«Եթե Գրության մարդկանց հետ վիճում եք, **ապա արեք դա լավագույն կերպով**: Դա չի վերաբերվում նրանցից որոշներին, որոնք անում են դա անարդարությամբ: ասացեք.

«Մենք հավատում ենք այնինչին, որը գրված է ձեզ: Ձեր Աստվածն ու մեր Աստվածը մի Աստված է, և մենք երկրպագում ենք միայն նրան»»: (29:46)

Ալլահը ուղղում է դեպի այլ կրոններ, ասելով.

Ասա. «Դուք տեսե՛լ եք նրանց, որոնց կոչ եք անում, բացի Ալլահից: Յույց կտա՞ք ինձ երկրի այն մասը, որ նրանք ստեղծել են: Թե՛ նրանք երկնքի համատերերն են: Բերեք ինձ Գրություն, որը նախորդում է դրան, կամ գոնե գիտելիքի որևէ հետք, եթե դուք ճշմարիտ եք»:
(46:4)

Իսլամն արգելում է որոշիչ միջոցառումներ կիրառել, որ մարդկանց այլ կրոններից բերեն դեպի Իսլամը: Ալլահն ասում է.

«Եթե քո Աստվածը ցանկանար,
ապա երկրի վրա բոլորը
կհավատային: Մի՞թե դու
մարդկանց կատիպեիր
հավատացյալ դառնալ»: (10:99)

Ղուրանում, Սուննայում,
այնուհետև և շարիաթում նշվում
է, որ հասարակության
անդամների համար կա
կրոնական ազատություն:
Մուսուլմանական պատմությունն
ունի շատ օրինակներ, երբ
մուսուլմանները լավ էին
վերաբերվում ոչ մուսուլմանների
հետ, իսկ նրանց
հասարակություններում զգվանք
կա մուսուլմանների, և նույնիսկ
սեփական ժողովրդի նկատմամբ:

Մուսուլմանները պետք է արդար վերաբերվեն բոլոր այլ մարդկանց հետ, **որոնք չեն վնասում նրանց:**

Ալլահն ասում է.

«Ալլահը չի արգելում ձեզ լինել բարի և արդար նրանց հետ՝ ովքեր չեն պատերազմում ձեր դեմ կրոնի պատճառով և ձեզ չեն արսորում ձեր օջախներից: Քանի որ, Ալլահը սիրում է արդարներին»:
(60:8)

Ովքեր պատերազմում են Իսլամի դեմ, թշնամական մտադրություններ ունեն և արսորում են մուսուլմաններից, **ունեն տարբեր վերաբերմունք ըստ Իսլամի :**

Ամենաբարձրյալ Ալլահին ասում է
փառահեղ Ղուրանում

«Ալլահին արգելում է ձեզ
ընկերանալ միայն նրանց հետ,
ովքեր կրոնի պատճառով կռվում
են ձեր դեմ, արքայություն էին ձեզ ձեր
կացարաններից և խթանում էին
դա: Իսկ նմաններին
ընկերակցողներն ու օգնական
ընդունողները հանդիսանում են
անօրեններ»: (60:9)

Մուսուլմանների և ոչ
մուսուլմանների
համագործակցությունը
հիմնավորված է հասարակ և
բարի հարաբերությունների վրա:
Գործնական

հարաբերությունները
թուլատրվում են և ոչ
մուսուլմանների հետ:

Մուսուլմանը կարող է ուտել
հրեաների և քրիստոնեաների
սննդից: Տղամարդ մուսուլմանը
կարող է ամուսնանալ հրեա կամ
քրիստոնյա կնոջ հետ, **ինչպես
կրացատրվի ստորև:** Մենք պետք
է հիշենք, **որ Իսլամը հատուկ
ուշադրություն և նշանակություն
է տալիս ընտանիքին:**

Ամենաբարձրյալ Ալլահն ասում է
փառահեղ Դուրանում.

Այսօր ձեզ թուլատրված է
օգտակար սնունդ: Գրության
մարդկանց սնունդը նույնպես

թուլատրված է ձեզ, իսկ ձեր
 սնունդը՝ նրանց, նաև
 թուլատրված է հրեա և
 քրիստոնյա կնոջ
 ողջամիտությունը
 հավատացյալների շարքերից և
 այն կնոջ ողջամտությունը, որը
 նրանց շարքերից է, ում մեզանից
 շուտ է եկել Գրությունը, եթե դուք
 վճարեք նրանց պարգևը (օժիտ),
 ցանկանալով պահպանել
 ողջամտությունը, **չնանալով և
 նրանց որպես ընկերուհի
 չընդունելով**: Անհմաստ են նրա
 գործերը, ով հեռացել է հավատից,
 իսկ կյանքի վերջին օրը կլինի
 վնաս կրածների շարքերում»:

(5:5)

Երրորդ սիալը

Որոշները պնդում են, որ
Իսլամական պատիժները
բարբարոսական և դաժան են,
**նաև խախտում են մարդկանց
հրավումքները:**

Պատիժների մասին սիալ
պատկերացումների
պատասխանը

Բոլոր հասարակություններն
ունեն ծանր
հանցագործությունների համար
պատիժների համակարգ:
Ժամանակակից համակարգն
օգտագործում է
բանտախցիկային մեկուսացման
երկար ժամանակը, սակայն շատ

մասնագետներ նշում են, որ
բանտարկուներ անարդյունավետ
պատժամիջոց է՝ հանցագործի
մոտ ավելի հաճախ առաջանում է
կորստի զգացողությունը,
անպետքությունը և չարության
զգացողությունը այդ համակարգի
նկատմամբ: Բացի դրանից,
զոհերը հաճախ չեն հավատում,
որ արդարությունը հաղթանակեց:
Գոյություն ունեն շատ վեճեր
համապատասխան պայմանների
և դատավճիռ կայացնելու մասին:
Չենք ասում բանտերի
հսկայական համակարգների ու
դրանց հետ կապված ամեն ինչի
ծախսերի մասին:

Սկզբի համար պետք է նշենք, որ Իսլամում քրեական պատիժների համակարգը հանդիսանում է իսլամական հասարակության յուրօրինակ և անհերքելի մասը, որը ստեղծում է հավասար հնարավորություններ և ապահովում է քաղաքացիների բարեկեցությունը, **Թույլ չտալով հանցագործությունների չնչին կիրառումները:**

Հանցանքները Իսլամում բաժանվում են երկու մասի՝

1) Հանցագործություններ, որոնք համար պատիժ է նշանակված, **որը համապատասխանում է շարիաթին: Այդ**

հանցագործությունները
ներածում են իրենց մեջ
դավանանություն և
սրբապղծություն, սպանություն,
հարձակում, շնություն և
սանձարձակություն, գողություն,
ակոհոլի և այլ ուղեղը մթագնող
իրերի օգտագործում, սուտ
մեղադրանք, **մարդկանց հանդեպ
ագրեսիա և այլն:**

2) Հանցագործություններ, **որոնք
չունեն նշանակված պատիժ
շարիաթում:** Իրավական
կանոններով նշանակվում են
պատիժներ, **որոնք
համապատասխանում են
մուսուլմանների և
մուսուլմանական**

հասարակության շահերին:

Պատժի այդ տեսակը հայտնի է որպես «Տազիր»:

Հանցագործություններ, որոնց համար շարիաթով նշանակված է պատիժ, **բաժանվում են երկու մասերի:**

Առաջին մասին են պատկանում Ալլահի հրամանները չկատարելը և շարիաթով նշանակված արգելումները խախտելը: Այդ հանցագործությունները ներառում են ակոհոլի չարաշահումը, **գողությունը և շնությունը:** Մյան հանցագործությունների պատիժը

չի կարող մեղմացվել, **եթե կան
ապացույցներ:**

**ԽՈՒԴՈՒԴԻ (դրամական կամ
մարմնային պատիժներ)**

կիրառման կանոնները, շարիաթի
համաձայն, **հանդիսանում են
արդարադատության հիմքը:**

Օրինակ՝ այդ պատիժները
կիրառվում են միայն այն
հանցանքների համար, որոնք մեծ
վնաս են հասցրել մարդու հինգ
հիմնական պահանջներին (**կրոն,
կյանք, միտք, պատիվ և ընտանիք,
ունեցվածք**): Դրանք կարող են
ընդունվել միայն հստակ
ապացույցների առկայության
դեպքում: Պատիժները կարող են

հերքվել կասկածների և փաստերի
անբավարարության դեպքերում:

«Անհրաժեշտ է նշել ԽՈՒՂՈՒՂը
որպես պատիժ, երբ կան
կասկածներ և մեղմացնող
հանգամանքներ»: Աբդուլլահ Իբն
Մասուդ, Դթահահարի

Այդ խիստ պատժամիջոցների
կիրառման նպատակն է
հասարակությանը դաս տալը:
Դրանք ծառայում են, որպես
որակով և ստուգված
համակարգներ, և ապահովում են
խաղաղությունն ու
անվտանգությունը: Օրինակ՝ եթե
որևէ մեկը գիտի, որ կարող է

պատժվել որոշ գործերի համար,
ապա կանի՞ դա:

Աշխարհիկ պատիժներին
լրացնում են ժամանակավոր
պատիժները՝ հանցագործները
պետք է վախենան նաև Ալլահը
հավիտենական պատժից:

Իսլամական հասարակությունում
բոլոր մարդիկ, որոնք խախտում
են օրենքները և իսլամական
կանոնները, **ենթարկվելու են
խիստ պատժի:** Ամեն մարդկային
հասարակությունում կան որոշ
անձինք, որոնք երբեք կարգի չեն
գալիս, **եթե նրանց վրա չեն
կիրառվում մարմնական
պատիժները:** Մենք նկատել ենք,
որ Իսլամն ամեն հանցանքի

համար նշանակում է
համապատասխան պատիժ, քանի
որ իմաստուն Ալլահն ամեն ինչ
գիտի մարդու հոգու և Իր բոլոր
արարածների մասին:

«Խիրաֆա» հասկացողությունը
ներառում է իր մեջ թալան,
սպանություն թալանի ժամանակ,
կացարանի կամ աշխատավայրի
շենք անօրինական զինված
մուտք և խաղաղ բնակիչներին
զենքով սարսափեցնել: Դա
տառացիորեն նշանակում է
հասարակությունում
պատերազմական
գործողություններ անել:

Նման հանցանքի համար
նախատեսված է այն պատիժը,
որը նշված է Ղուրանի հետևյալ
խոսքերում.

«Ճշմարիտ, Ալլահի և Նրա
առաքյալի դեմ մարտնչողները
ձգտում են երկրում տարածել
անարդարություն, որի համար
նրանք պետք է սպանվեն կամ
խաչվեն, կամ պետք է խաչվեն
նրանց ձեռքերն ու ոտքերը, կամ
պետք է վտարվեն երկրից: Դա
նրանց համար
խայտառակություն կլինի այս
կյանքում, իսկ Վերջին կյանքում
նրանց համար մեծ
տառապանքներ են սպասում:
Բացառություն են հանդիսանում

մեղանչող ու վերադարձողները
մինչ նրանց վրա ձեր
իշխանությունը լինելը: Իմացե՛ք,
Ալլահը ներողամիտ ու գթասիրտ
է»: (5:33-34)

Այդ պատիժը կիրառվում է
տարբեր կերպով՝ կախված
հանցագործության
հաճախականությունից ու
բնույթից: Իշխանությունը լիազոր
է կիրառել պատիժը
հանցագործությանը
համապատասխան: Եթե գողը
սպանում է և իսլամ է գումար,
պատիժը կարող է լինել մահը և
խաչելը: Եթե նա իսլամ է փողը և
սպանում է, սակայն չի սպանում,
ապա պատիժը կարող է լինել

ձեռքը կամ ոտքը կտրելը: Եթե նա սպանում է զոհին, սակայն չի վերցնում ոչինչ, ապա նա կարող է մեղադրվել սպանության մեջ: Եթե նա վախեցնում է խաղաղ բնակիչներին, սակայն չի սպանում, ապա կարող է վտարվել, զրկվել ազատությունից որոշ գիտնականների համաձայն:

ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ. Գոյություն ունի հանցագործությունների դաս, որի համար պատիժ է սահմանվում Կասիսը (վրիժառություն):

Իրավականորեն մտածված սպանության համար համապատասխան և արդար լուծում է նրան կյանքից զրկելը:

Ալլահին ասու՛մ է փառահեղ
Դուրանու՛մ

«Ով հավատացյալներ, ձեզ
վրիժառուլթյուն է հրահանգված
սպանվածների համար՝ ազատը՝
ազատի համար, ստրուկը՝
ստրուկի, կինը՝ կնոջ»: (2:178)

Եթե զոհի ընտանիքը որոշի ներել
մեղավորին, **ապա մահապատիժը
չի լինի**: Եթե նրանք ընդունում են
զու՛մարը, **ապա պատիժը չի լինի**:

Ալլահին ասու՛մ է փառահեղ
Դուրանու՛մ

«Եթե մեղավորը ներվում է իր
եղբոր կողմից, **ապա պետք է**

արդար վարվել և վճարել ինչպես հարկն է»: (2:178)

